

Ա.Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆԱԽԱՄԱՐՆՈՑՅԱՆ
ՀԱՅ ԳԻՐ ԵՎ
ԳՐՉՈՒԹՅՈՒՆ




Ա. Գ. ԱՐԲԱՆՄԱՆ

ՆԱԽԱՄԱՇՏՈՅՅԱՆ
ՀԱՅ ԳԻՐ ԵՎ
ԳՐԶՈՒԹՅՈՒՆ

1691

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982



Գրախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածուներ՝ Ա. Մ. ԿՐԿՅԱՆՍԵՐՅԱՆ, Տ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ: Մասնագետ խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու Լ. Փ. ՇԱՀԻՆՅԱՆ

Արքախոյան Ա. Գ.

Ա 161 Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն:—Եր.: Հայաստան—1982. 152 էջ:

Գրքում քննարկվում են այն հիմնական հարցերը, որոնք վկայում են նախամաշտոցյան հայ գրի ու գրչության գոյության հավանականությունը:

Գիրքը գրված է հանրամատչելի լեզվով:

Հանձնարարվում է հայ ժողովրդի պատմությանը հետաքրքրվող լայն շրջաններին:

4603030000

Ա 701 (01) 81 (8)—82

ԳՄԴ 83. 3 (0) 3

8

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախամաշտոցյան շրջանում հայ ժողովուրդն ունեցել է, արդյոք, հայալեզու գիր ու գրականություն, թե՞ գրկված է եղել քաղաքակրթության այդ մեծագույն պարզևից ու խարխափել է տգիտության խավարում: Հիշենք գրի պատմության ականավոր շեխ գիտնական Չ. Կոուկոտկայի գրի նշանակությանը տված գնահատականը. «Առանց գրի կուլտուրա չէր լինի... միայն գրի շնորհիվ են ապագայի համար պահպանվում մարդու մտքերն ու նվաճումները՝ ներկայի արգասիքները: Մենք գրին ենք պարտական նաև մարդկության համեմատաբար արագ էվոլյուցիայի համար, որը տեղի է ունեցել պատմական գոյության սկզբից մինչև մեր օրերը»:

Գրի պատմության մեկ այլ մասնագետ՝ Ն. Ա. Պավլենկոն, խոսելով գրի նշանակության մասին, գրել է. «Գիրն անշափ խոշոր դեր է խաղում մարդկության պատմության մեջ. այն մարդկային մշակույթի հզոր շարժիչն է: Գրի շնորհիվ է, որ մարդիկ ի վիճակի են օգտվելու իմացության այն վիթխարի պաշարից, որը կուտակել է մարդկությունը իր գործունեության բոլոր ոլորտներում, զարգացրել անցյալի ժառանգությանը և պահպանել բազում սերունդների փորձը ապագայի համար»²:

Հայտնի է, որ պատմության ասպարեզ իջած հայ ժողովրդի նախնիները գրավոր մշակույթով Մերձավոր արևելքի

¹ Չ. Կոուկոտկա, Գրի զարգացումը, Ե., 1955, էջ 13:

² Н. А. Павленко, Краткий очерк истории письма, Минск, 1965, էջ 13:

ժողովուրդների հետ համատեղ հանդես են եկել հնագույն ժամանակներում: Հետագայում՝ Արտաշեսյան հարստության շրջանում Հայաստանը մտնելով հելլենիստական ոլորտի մեջ, ստեղծեց այնպիսի հզոր պետություն, որը մրցում էր աշխարհակալ Հռոմի և Պարսկաստանի հետ: Բնականաբար, հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք զարգացման այսպիսի ուղի անցած ժողովուրդը շունենար իր գիրը թեկուզև այլ համակարգի նշանագրերով:

Նախաքրիստոնեական ժամանակաշրջանի հայկական գրի և գրականության հարցի ուսումնասիրությունը, դժբախտաբար, որոշ դժվարությունների հետ է կապված. հեթանոսական գրի և գրականության մասին օտար աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում, իսկ հայ պատմիչները, որպես քրիստոնեական գաղափարախոսներ, անհանգուցիկ վերաբերմունք ունեին հեթանոսական մշակույթի նկատմամբ և հարցը ներկայացնում էին միակողմանի այնպես, որ հայ ժողովուրդը իբրև թե հեթանոսական շրջանում եղել է բարբարոս և քրիստոնեությունն է եկել լուսավորելու նրան, գիր և գրականություն սովել և բարձրացրել կուլտուրական ժողովուրդների շարքը: Սկզբնաղբյուրների կցկտուր, իսկ որոշ դեպքերում՝ հակասական լինելու հետևանքով նախամաշտոցյան հայկական գրի և հայալեզու մատենագրության շուրջը հայագիտության մեջ վաղուց ի վեր առաջացել են կրքոտ բանավեճեր և շարունակվում են առ այսօր:

Նախամաշտոցյան հայ գրի և գրականության մասին, ինչպես անցյալում, այնպես էլ նոր ժամանակներում, այնքան շատ աշխատություններ են հրատարակվել, նրանց հեղինակներն այնքան շատ են փորփրել սկզբնաղբյուրները և պատմական միևնույն տեղեկությունը թեր ու դեմ մեկնաբանություններով կրկնել, որ կարծիք է ստեղծվել, թե անիմաստ է սովյալ հարցի նոր քննարկումը, հազիվ թե եղածի վրա նոր բան ավելացվի: Այս կարծիքը, իհարկե, ճիշտ չէ, քանի որ վերջին տասնամյակներում հայտնի դարձան նոր տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում հարցի բաղմակողմանի քննարկման ու լուսաբանման համար: Մատնացույց անենք այդ տվյալներից մի քանիսը:

Անցյալում հայ ժողովրդի կազմավորման հարցում քաղա-

քացիություն ուներ միզրացիոն տեսակետը, այդ պատճառով հայ գրավոր մշակույթի սկզբնավորումը քննության էր առնվում Հայաստանի նախաբնիկների գրավոր մշակույթից անջատ, որի պատճառով ստեղծվում էին իրարամերժ կարծիքներ. որ Հայաստանի հնագույն բնակիչները ունեցել են իրենց գիրը, իսկ զարգացման ավելի բարձր աստիճանում, հայ ժողովրդի կազմավորվելուց հետո, կարծես թե տեղի է ունեցել հետադիմություն. հայերը շուրջ տասը դար մնացել են անգրագետ, մինչև որ Մաշտոցը V դարում գիր է ստեղծել:

Հայաստանի տարածքում հայտնաբերվել են հարյուրավոր ժայռապատկերներ (պետրոգլիֆներ) և մի շարք արամեական և հունական արձանագրություններ, որոնք կարևոր են հայ գրավոր մշակույթի պատմության հարցի լուսաբանման համար:

Հայկական գրչագրերում վերջին տասնամյակում հայտնի են դարձել հունական տառանիշերով հայերեն լեզվով գրված մի քանի բնագրեր ետմաշտոցյան ժամանակից, որոնք կրկին անգամ գալիս են փաստելու այլ տառանիշերով հայերեն գրելու հնարավորությունը: Հայտնի է նաև տոմարական հին համակարգ, որը գործածվել է նախամաշտոցյան շրջանում: Այդ բոլոր նյութերն անհրաժեշտ է այժմ գիտական շրջանառության մեջ դնել և լուսաբանել վիճելի հարցը:

Դժբախտաբար, նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցն ուսումնասիրողներից ոմանց կաշկանդում է այն վախը, որ եթե ընդունելու լինեն Մաշտոցից առաջ հայալեզու գրականության գոյությունը, այդ դեպքում ինչ-որ շահով նսեմացրած կլինեն Մաշտոցի դերը հայ ներկա գրի ստեղծման գործում: Մեր համոզմամբ, նման մտավախությունն անտեղի է, քանի որ Մաշտոցի գործունեությունը կապված է բոլորովին այլ ժամանակաշրջանի և այլ պայմանների հետ: Բացի այդ, Մաշտոցի դերը հայ գրի և գրականության ստեղծման գործում այնքան վիթխարի է, որ նրանից առաջ հայալեզու գրականության լինել-չլինելը երբեք ստվեր չի կարող նետել նրա գործունեության վրա:

Մենք պատկանում ենք գիտնականների այն խմբին, որոնք ընդունում են նախամաշտոցյան հայալեզու մատենագրության գոյությունը: Այդ հարցին նվիրված մի քանի հոդ-

վածներ ենք հրատարակել պարբերական մամուլում: Բացի այդ, հայկական հնագրության մեր հրատարակած դասընթացներում առանձին գլուխ ենք հատկացրել նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցին: Մեր այդ աշխատությունները, սակայն, մասնագիտական խոր ուսումնասիրություններ չեն: Գրանք մեծ մասամբ հիմնված են նախորդ ուսումնասիրողների բարձրացրած փաստական նյութերի և գիտական եզրահանգումների վրա: Գուցե բացառություն համարվի Անդրեաս Բյուզանդացու տոմարի հայկական տարբերակին նվիրված մեր ուսումնասիրությունը: Վերջինիս հիմք է ծառայել հին հայկական նորահայտ տոմարական մի քնագիր, որը, ըստ մեր կատարած տոմարական հաշվումների, հայերեն է թարգմանվել մաշտոցյան գրից առաջ:

Պետք է խոստովանվենք, որ նախամաշտոցյան հայ գրի և գրականության մասին անցյալում մեր հրատարակած աշխատություններում բոլոր հարցերը չեն, որ հաջող են լուսաբանված: Նորահայտ նյութերը հաճախ հարկադրել են մեզ նոր լույսի տակ դիտել այս կամ այն հարցը: Հետևանքը եղել է այն, որ տարբեր տարիներում գրած մեր աշխատություններում կարելի է հանդիպել մի շարք հարցերի, որոնք վերանայված են:

Սույն գրքույկով նպատակ ունենք քննության առնել նախամաշտոցյան գրի գոյության հարցը, աշխատելով, գերի շմնալ ոչ հեղինակություններին և ոչ էլ անցյալում մեր հայտնած կարծիքներին:

1. ՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախամաշտոցյան հայկական գրի և հայալեզու գրականության հարցի ուսումնասիրությունը հարյուրամյա պատմություն ունի: Գրանով զբաղվել են տասնյակ նշանավոր գիտնականներ, որոնք բազմաթիվ փաստեր են գրել գիտական շրջանառության մեջ և թեք ու դեմ կարծիքներ հայտնել տվյալ հարցի մասին: Կատարված այդ շնորհակալ աշխատանքն ըստ արժանավույն գնահատելու համար անհրաժեշտ եմ համարում ներկայացնել տվյալ հարցի պատմագրությունը: Այդ այժմ կարևոր է, քանի որ կարծիք է հայտնվել, թե անցյալի բոլոր լրջմիտ գիտնականները իբրև թե չեն ընդունել նախաքրիստոնեական հայալեզու գրականության գոյությունը, և որ՝ այդ տարակարծությունները վերացել են 1928 թ. ակադ. Հ. Աճառյանի «Հայոց գրերը» լույս տեսնելուց հետո:

Նախամաշտոցյան հայ գրի և մատենագրության հարցը, ինչպես պարզվում է, խորհրդածության խնդիր է եղել դեռևս միջին դարերում: XIII դարի պատմիչ Վարդան Արևելցին ցանկանալով ապացուցել, որ հայերը հեթանոսական շրջանում գիր են ունեցել, մատնացույց է անում հեթանոս հայ թագավորների դրամները, որոնք, իր ասելով, գտնված են եղել Կիլիկիայում. «Եվ որ հնում հայերեն գիր է եղել,— զբրում է պատմիչը,— փաստվում է նրանով, որ ևսոն թագավորի ժամանակ գտնվել են հայերեն դրոշմված դրամներ՝ հայկազյան կռապաշտ թագավորների անուններով»¹:

Մեզ հայտնի չէ, թե Կիլիկիայում ի՞նչ դրամներ են գտնվել

¹ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցույ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 70:

և ինչպե՞ս են պարզել, որ դրանք, իրոք, հեթանոս հայ թագավորների դրամներ են, սակայն պատմիչի տեղեկությունն ուշագրավ է նրանով, որ հիմք է տալիս կարծելու, թե միջին դարերում հայ մատենագիրների շրջանում հեթանոսական հայկական գրի և գրականության հարցը խորհրդածությունների տեղիք է տվել, և եղել են հայ մատենագիրներ, որոնք ոչ միայն ընդունել են նախամաշտոցյան հայ գրի ու գրականության գոյությունը, այլև փորձել են այն ցուցանելու ճիշտ նախորդել:

Պատմագիտության մեջ նախամաշտոցյան հայոց գրի և մատենագրության հարցն առաջին անգամ բարձրացրել և ջերմորեն պաշտպանել է Վենետիկի Մխիթարյան հայերից Ղ. Ինճիճյանը՝ 1835 թ. «Հնախօսութեան» երրորդ հատորում: Մեջ բերելով հին հայկական պատմիչների և օտար այլ հեղինակների վկայությունները նախամաշտոցյան հայկական գրի և մատենագրության գոյության մասին, նա եկել է այն համոզման, որ մեղանում հնագույն ժամանակներում գոյություն է ունեցել հայկական գիր, բայց առանց ձայնավոր տառերի: Նա իր այդ կարծիքը համոզեցուցիչ դարձնելու համար. հայտնել է, որ Պոլսում գտնվող անգլիացի մի դրամագետի մոտ տեսել է դրամներ, որոնց մի երեսին դրոշմված է եղել հեթանոսական ատրուշան՝ կողքերին երկու մոզեր, իսկ մյուսում՝ թագավորի դեմք՝ արևելյան սաղավարտով, իսկ նրա շուրջը գրություն, որոնց մեջ գտնվել են հ, տ, պ, կ, ճ, և այլ տառեր, սակայն չգտնելով նրանց մեջ ձայնավոր տառեր, չի կարողացել իմաստ ավող հայկական բառ ընթերցել:

Հաջորդ հայագետը, որը հանդես է եկել նախաքրիստոնեական հայ գրի գոյության պաշտպանությամբ, բանասեր Մկրտիչ էմինն է: Նա հարցը քննության է առել 1858 թվականին Մոսկոյի խորհրդակցության «Պատմություն Հայոց» ռուսերեն թարգմանությանը կցված հավելվածում՝ «Об армянском алфавите» վերնագրի տակ: Անվիճելի համարելով նախաքրիստոնեական հայկական մատենագրության գոյությունը, նա ցանկացել է պարզել, թե ի՞նչ տեսակի տառանիշեր են

դրանք եղել և եկել է այն հետևություն, որ դրանք եղել են գաղափարագրեր: Հիմք ունենալով կազարյան ճեմարանի մի ձեռագրում եղած «Նշանագիր իմաստնոց» բնագրի ցանկը, նա առանձնացրել է 84 նշանագիր և հնարավոր համարել, որ դրանք հայ հեթանոսական գրության փշրանքներից լինեն: Այդ մասին նա գրել է. «Խոստապահանջ մոտեցման պարագային, ինչպես կտեսնենք ստորև մեր քննության առած 305 նշանագրերից շատ քչերն են, որոնց կարելի է վերագրել հայ հեթանոսական ժամանակաշրջանին: Անկախ դրանից, փորձաթիվ այդ բեկորները հարկադրում են մեզ մտածել, որ Հայաստանում, իրոք, երբեմն գոյություն է ունեցել գաղափարագիր գրություն, որը դարգացման շատ բարձր աստիճանի է հասել և տարածվել ամենուրեք»¹:

Նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցը մանրամասն քննության է առել մեծանուն Ղևոնդ Ալիշանը «Հայապատում» աշխատության մեջ՝ «Նախապատմիչը յառաջ քան զհայկական գրութիւն» գլխի տակ: Մատնացույց անելով հեթանոս Հայաստանում և Մաշտոցին նախորդած դարերում հանդես եկող պատմագիրներին՝ Արտավազդ, Բարդաժան, Բուզանդ, Ագաթանգեղոս և ուրիշներ, այդ հիման վրա նա անհավատալի է համարել, որ մեր ներկա մատենագրությունից առաջ, նախքան քրիստոնեության ընդունելը, հայերը որևէ ձևով և լեզվով ազգային հիշատակ նշանակած և ավանդած չլինեին:

Իսկ թե ի՞նչ լեզվով է եղել մեհենական մատենագրությունը, այդ մասին գրել է. «Անելող է մեզ քննել, թե ի՞նչ լեզուով և գրով նշանակուէին. հարկ է թէ ժամանակին հասարակաց կամ գիտնոց լեզուով. և եթէ տեղեաց ժողովուրդն առհասարակ հայ էր, վայել էր, որ հայերէն գրուած ըլլային, գոնէ տրից և նուիրաց վերաբերեալքն»: Վերջում նա հարց է տալիս և պատասխանում. «Այն ատեն հայերէն լեզուի գիր

¹ էմինի այս հոդվածն արժանացել է ժամանակակիցների հատուկ ուշադրությանը: Այն ֆրանսերեն է թարգմանվել և տպագրվել «Revue d'Orient» պարբերականում, իսկ 1865 թվականին հայերեն է թարգմանել Խ. Ստեփանյան: Ռուսերենը վերահրատարակվել է 1896 թվականին հեղինակի «Исследования и статьи» ժողովածուում: (Մեջբերումը վերցված է ժողովածուից՝ էջ 224):

¹ Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանայց աշխարհի, հ. 9. Վենետիկ, 1835, էջ 75:

կա՞ր թէ ո՛չ.— հաւանիմք թէ որեւէ կերպով կար գիր մի. բնիկ կամ օտարի, և մանաւանդ նշանագիր»¹:

Նախամաշտոցյան գրի և գրականութեան հարցի ուսումնասիրութեամբ հանգամանորեն զբաղվել է Ներսիսյան դպրոցի հոգեբանութեան և տրամաբանութեան ուսուցիչ Իսահակ Հարությունյանը: Նա վճռականապես պաշտպանել է նախաքրիստոնեական հայ մատենագրութեան առկայությունը: Նա այդ հարցին նախընտրած հատուկ ուսումնասիրություն է հրատարակել «Հայոց գիրը» վերնագրով: Հարությունյանը իր այդ աշխատության մեջ մանրամասն քննութեան առնելով հայ գրի և գրականութեան մասին հայկական մատենագրութեան մեջ եղած վկայությունները և կողմնակի այլ տվյալներ, եկել է հետևյալ եզրակացության. «Վերոհիշյալ բոլոր վկայություններն ի մի տեղ առնելով՝ մենք կրկին գալիս ենք այն եզրակացության, որ Մեսրոպյան այբուբենից դեռևս շատ առաջ հայերն արդեն ունեցել են սեպհական այբուբեն, որ գործածութեան մեջ է եղել»:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչո՞ւ այդ գրերը մեզ չեն հասել, Հարությունյանը հետևյալ բացատրությունն է տրվել. «... մեր նախնիքն արդեն յուրյանց կռապաշտութեան ժամանակ ունեցել են առանձին այբուբեն. սակայն քրիստոնեությունը մուտք գործելով Հայաստան, նորա եռանդոտ պաշտոնյաները կռապաշտական զանազան սովորությունց հետ ի միասին ոչնչացնում են նաև եղած քրմական գրականությունն և արգելում հին այբուբենի գործադրությունը, իսկ դորա տեղը դնում են հունական և ասորական այբուբեններն, որպեսզի ժողովուրդը միշտ առիթ չունենա անցյալի վերա մտածելու և նորա ուսման հետ հաստատ կերպով միանալու»²:

Իս. Հարությունյանի հայտնած կարծիքին և նրա մատնացույց արած փաստերին մենք հաճախ ենք անդրադառնալու: Այժմ ավելորդ չենք համարում ասել, որ Հարությունյանի «Հայոց գիրը» աշխատությունը ջերմ ընդունելություն է գտել. 1888 թվականին, հրատարակությունից առաջ այն արժանացել է Սահակ-Մաշտոցյան մրցանակի:

Նախամաշտոցյան հայ գրի և գրականության գոյության փաստը ընդունել է նաև ականավոր պատմաբան, գրաբարագետ-լեզվաբան Ա. Մ. Գարագաշյանը իր «Քննական պատմություն հայոց» աշխատության մեջ: Հարցը նա քննության է առել լեզվագիտական տեսադաշտի վրա և հետևյալ կարծիքը հայտնել. «Չէ ճշմարիտ այն, որ ընդհանրապես կկարծվի, թե հայք առաջ քան զՄեսրոպ չունենին նշանագիր, ուստի և էին անմասն դպրութենե: Նայելով հանգամանաց հայերեն լեզվին առաջ քան զՄեսրոպ՝ անհնար էր լեզվին առանց դպրության հասնել այն աստիճան դարգացման՝ հորում կգտնենք զնա ի հատակաստորս երգոց վիպասանաց, որոց կատարյալ նըմանություն է թարգմանչաց լեզուն: Այսմ վկայ ունենք զՓարսիցիցին, որ ի մեղադրելն զազգս վարվելուն համար ասորի լեզվով ի պաշտամունս եկեղեցվոյ, կհաւելու. «մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքնեան ձայնի և ոչ մուրացածոյ բարբառով շահել զողիս արանց և կանանց առ հասարակ»¹:

Ճիշտ է, մի այլ անգամ Գարագաշյանը խոսելով Փավստոս Բուզանդի մի տեղեկության մասին՝ քրիստոնեությունը Հայաստանում դժվար արմատավորվելու կապակցությամբ. այն բացատրել է «առ ի չգույժ դպրութեան» արտահայտությամբ: Սակայն չպիտի կարծել, թե նա հակասության մեջ է ընկնում և ընդհանրապես ժխտում նախաքրիստոնեական հայ մատենագրությունը. նրա այդ արտահայտությունը վերաբերում է նախամաշտոցյան շրջանին նախորդող շրջորդ դարի քրիստոնեության ժամանակին:

Լեոն իր «Հայոց պատմության» առաջին հատորում, խոսելով Արտաշեսյան հարստության շրջանի հայ մշակույթի մասին, որոշակի ընդունում է հայկական գրի և մատենագրության առկայությունը: Իր կարծիքը նա հիմնավորում է հետևյալ կերպ. «Մենք դեռ Արտաշեսյան հարստության ժամանակներից տեսանք, որ հայ պետությունը չէր կարող առանց դպրոցական դաստիարակության զարգանալ, քանի որ երկիր էր դա, ուր բազմալեզու ցեղեր կային, որոնք հայաց-

¹ Ղ. Ալիշան, Հայապատմ, Վենետիկ, 1901, էջ 21:

² Իս. Հարությունյան, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 263:

¹ Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Թիֆլիս, մասն 7, էջ 39:

վեցին, պետական մի ամբողջութիւն մեջ ձուլվեցին հատկապես հայերեն լեզվի միջոցով: Որ հայ ժողովուրդը պիտի ունենար իր գրականութիւնը, այդ թելադրում էր ասել և նրա լայն տարածված ու ներքնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը: Եվ, վերջապես, նույնիսկ Կորյունն ու Ղազար Փարպեցին էլ հավելում են. «մանաւանդ զոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս արանց և կանանց առ հասարակ»: Շատ մութ ակնարկներով հիշատակում են «վազնչուց» գոյութիւն ունեցած հայկական նշանագրերը¹:

Նախամաշտոցյան հայ գրութեան և մատենագրութեան գոյութեան մասին որոշակի արտահայտվել էր ուս ականավոր բանաստեղծ, հայ ժողովրդի լավագույն բարեկամ Վալերի Քրյուսովը իր «Летопись исторических судеб армянского народа» աշխատութեան մեջ: «...Ինչ վերաբերում է Հայաստանի այդ շրջանի (III—I դ. մ.թ.ա.) գրական կյանքին, ապա այդ մասին մեզ հասել են ամենասակավ տեղեկութիւններ: Գատեղով Հայաստանում հունական թատրոն գոյութիւն ունենալուց՝ պետք է կարծել, որ կրթված հայերը օգտվում էին հուն գրականութիւնից: Հավանորեն, գահից տրված օրինակը, նմանեցնողներ էր գտնում, և հայերից միմիայն արքայազն Արտավազդը չէր, որ իր ուժերը փորձում էր ինքնուրույն կերպով և հուն լեզվով գրական ստեղծագործութեամբ զբաղվելու ասպարեզում: Հայաստանի հնագույն շրջանից մեզ այդպիսի գործեր չեն հասել, բայց հետագա դարերում մենք տեսնում ենք հունարենն օգտագործող բազմաթիւ հայ գրողներ: Հելլենական հանճարի մեծ ստեղծագործութիւնները հանդիսացան նմուշներ, որոնցով դաստիարակվեց գրական միտքը Հայաստանում, նախքան այնտեղ ազգային գրականութիւնն առաջանալը»: Այնուհետև մանրամասն քննութեան առնելով սկզբնաղբյուրներում հայ գրի և գրականութեան մասին եղած վկայութիւնները, նա եզրակացնում է. «Եվ այսպէս, բոլոր փաստերը հարկադրում են մեզ մտածել, որ հայկական մատենագրութիւնը գոյութիւն է ունեցել մեր դարաշրջանի շուրջ հարյուրամյակի ընթացքում: Հայ գրողների այս ստեղծագործութիւնների կողքին, որոնք գրվել են հունարեն և

օտարերկրյա այլ լեզուներով, գոյութիւն են ունեցել հայերեն լեզվով ստեղծագործութիւններ՝ մի մասը տառադարձված օտար այբուբենով, իսկ մյուս մասը՝ դանիելյան գրերով: Այս ստեղծագործութիւնները հանդիսացան այն դպրոցը, որ մշակեց հայկական գրական լեզուն, որը մեր առջև ներկայացնում է հինգերորդ դարը Աստվածաշնչի թարգմանութեամբ, մշակված, ընդունակ տալու մտքի բոլոր երանգները՝ վերարտադրելով հունական բնագրի բոլոր առանձնահատկութիւնները: Հայ մատենագրութեան այդ վաղ ստեղծագործութիւնները, սակայն, մեզ չեն հասել, եթէ հաշվի չառնենք Գրիգոր Լուսավորչի հավաստի քարոզները. մենք գիտենք միայն այն մատենագրութիւնը, որն առաջացավ այն բանից հետո, երբ Մեսրոպը հայտնաբերեց նոր հայկական գիրը²:

Նախամաշտոցյան գրի գոյութեան մասին որոշակի կարծիք է հայտնել ականավոր հայագետ ակադեմիկոս Ն. Յա. Մառը իր «Ани» աշխատութեան մեջ: Նա այդ հարցը քննութեան է առել Կովկասի մշակութի լայն տեսադաշտի վրա. «Ողջ Կովկասը, — գրել է նա, — ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են եղել դեռևս ասորաբաբելոնական քաղաքակրթութեան դարաշրջանում: Հայաստանում մայրենի լեզվով գրականութիւն գոյութիւն ունի մեր թվարկութիւնից դեռևս մի քանի դար առաջ²:

1896 թվականին նախամաշտոցյան գրերի մասին առանձին գրքով «Մագումն հայ տառից» հանդես է եկել բանասեր Ն. Տաղավարյանը՝ նպատակ ունենալով ապացուցել, որ հայկական գիր է եղել հեթանոսական ժամանակաշրջանում, որից մնացած փշրանքը պիտի համարել դանիելյան գրերը. «...չիք որևէ վկայութիւն, — գրել է նա, — որ մեզ կասկած ներշնչե՞թե Գանիել հորինած լինի այդ գրերը. այլ ցույց կուտան ընդհակառակն՝ թե երբեմնի ի Հայս գործածեալ, և ապա բարձի

¹ В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, М., 1918, էջ 50:

² Н. Я. Марр, Ани, М.—Л., 1934, էջ 13:

¹ Ան, Հայոց պատմութիւն, հ. I, Թիֆլիս, 1917, էջ 682:

թողի եղյալ էին, որքն Դանիելի ձեռքն անցան: Ի մի բան՝ Դանիել ազանդապահ էր և ոչ հեղինակ»¹:

Նախամաշտոցյան հայոց գրի և գրականության հարցը հանգամանորեն քննարկել է ակադեմիկոս Հ. Աճառյանը «Հայոց գրերը» աշխատության մեջ: Աշխատությունը նախ լույս է տեսել 1927 թ. «Հանդես ամսօրյա» պարբերականի էջերում, որից և արտատպվել է առանձին գրքով՝ 1928-ին:

Հ. Աճառյանը մանրամասն քննարկել է նախամաշտոցյան հայոց գրի հետ առնչվող բազմաթիվ հարցեր՝ խեթական գրերը, խալդյան բևեռագրերը, դանիելյան գրերը, ծածկագրերը և այլ հարցեր: Սկզբնաղբյուրների ու հրատարակված գրականության ուսումնասիրությունը մեծանուն գիտնականին բերել է այն հետևություն, թե Մաշտոցից առաջ հայերը գիր և հայալեզու գրականություն չեն ունեցել: Նա գրել է. «Այս բոլորին եզրակացությունն այն է, թե մինչև Ս. Մեսրոպ ենթադրել հայալեզու գրականություն մը հույն, պարսիկ կամ ասորի տառերով՝ անհիմն է. և թե այս շրջանին հայերը ունեին ո՛չ թե հայերեն, այլ հունարեն, պարսկերեն և ասորերեն լեզուներով գրականություն»²:

1941 թվականին նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցը՝ կապված դանիելյան գրի հետ, քննարկել է նաև ակադ. Մ. Աբեղյանը «Մեսրոպ Մաշտոց և հայ գրի և գրականության սկիզբը» հոդվածում: Նա ևս ժխտել է նախամաշտոցյան գրի և գրականության գոյությունը, թեև հնարավոր է համարել, որ հայերը երբևէ բան գրած լինեին այլ լեզուների նշանագրերով:

«Այս ամենով,— գրել է նա,— հարկավ չի մերժվում, որ Մեսրոպյան գրերից առաջ փորձած լինեին գրել կամ նույնիսկ գրած լինեին որևէ բան հայերեն լեզվով, բայց այլ լեզուներով նշանագրերով»³:

¹ Ն. Տաղվարյան, Մագումն հայ տառից, Վիեննա, 1895, էջ 13:

² Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 129—130:

³ Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոց և հայ գրի ու գրականության սկիզբը: Աբեղյանի այս հոդվածը տպագրվել է նախ «Սովետական գրականություն» ամսագրում (1941 թ. № 1, էջ 47—51, № 2, էջ 41—51): Վերահրատարակվել՝ «Մեսրոպ Մաշտոց» ակադեմիայի հոդվածների ժողովածուում: Մեծերումը կատարված է վերջինից, էջ 256:

Եվ այսպես, բերված կարծիքներից դժվար չէ նկատել, որ անցյալում խնդրա առարկա հարցն ուսումնասիրող հայագետներն երկու խմբի են բաժանված եղել, ոմանք ընդունել են նախամաշտոցյան հայ գրի և գրականության գոյությունը, իսկ մյուսները մերժել: Հետևապես ճիշտ չեն այն պնդումները, թե լրջմիտ գիտնականներից ոչ ոք չի ընդունել նախամաշտոցյան հայ գրի ու գրականության գոյությունը և Աճառյանի ուսումնասիրությունը լույս տեսնելուց հետո վեներն ու տառակարծությունները վերացել են:

Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության հարցը նորագույն ժամանակներում լուրջ քննարկման խնդիր դարձավ 1962 թվականին, երբ հայ ժողովուրդը նշում էր իր մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանը: Մաշտոցի մասին գրված հոդվածներում և նրան նվիրված հանդիսավոր նիստերում կարգացված զեկուցումներում հեղինակները, բնական է, պետք է որ անդրադառնային և անդրադարձան Մաշտոցին նախորդած շրջանի հայկական մշակույթին ու դրա հետ սերտորեն առնչվող հայալեզու մատենագրությանը:

1962 թվականին նախամաշտոցյան հայ գրի և հայալեզու գրականության օգտին արտահայտվեց ակադ. Գ. Սևակը Երևանի պետական համալսարանի գիտական նստաշրջանում կարդացած իր զեկուցման մեջ: Այն հրատարակել է 1963 թ. «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածուում: Գիտնականը քննարկելով վիճելի հարցի շուրջը եղած տվյալները, եզրակացրեց. «Հնային ու վրացիները, թերևս նաև աղվանները, ինչպես այդ վկայում են հնադարյան ավանդույթները և հայկական ու վրացական մատենագրությունը, քրիստոնեությունից առաջ ունեցել են գիր և դպրություն»: Իր այս կարծիքը հիմնավորելու համար նա մատնացույց արեց հետևյալ փաստը. «Անկարելի է պատկերացնել, որ արդեն այդ ժամանակ զարավոր մշակույթի տեր, պետականություն, քաղաքներ, արվեստներ և առևտուր ունեցող ժողովուրդները չունենային իրենց գրչությունն ու դպրությունը թեկուզ և օտար՝ ասորական, հունական, պարսկական գրերով կամ նրանցից սերված նշանագրերով» (էջ 193):

Հարցին անդրադարձել է նաև Կ. Վ. Տրեերը. «Քանի որ հայերը մինչև շորորդ դարը շունեին իրենց այբուբենը, գրել է նա, ուստի նրանք հարկադրված են եղել օգտվել օտար գրերից՝ հարևան այն ժողովուրդների այբուբեններից, որոնց հետ նրանք քաղաքական կամ մշակութային կապեր ունենին: Հայերի կողմից օգտագործվող այդ գրերն են հանդիսացել սկզբում արամեականը, իսկ հետո՝ հունականը և պարթևականը, այսինքն՝ փեհլևի լեզվով օգտագործվող նույն արամեական գիրը»¹:

Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության մասին ի՞նչ տեսակետ է ունեցել ակադ. Հ. Մանանդյանը: Անհրաժեշտ ենք համարում այդ մասին խոսել, որովհետև անհիմն կարծիքներ են հայտնվել, որ իբր նախամաշտոցյան հայոց գիրը ընդունողները բռնաձեռք փորձեր են արել Մանանդյանին գիրը ընդունող գիտնականների շարքը դասելու՝ ցանկանալով օգտագործել նրա հեղինակությունը:

Իրականում, Մանանդյանը նախաքրիստոնեական գիր և հայալեզու գրականություն ընդունող գիտնականներից չէ, սակայն նա հավանական է համարել, որ հայերը Մաշտոցից առաջ՝ շորորդ դարում, փորձեր արած լինեն օտար լեզվի տառանիշերով հայերեն գրելու: 1941 թվականին ռուսերեն լեզվով լույս ընծայած «Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность» վերնագրով գրքույկում, որը հետագայում թարգմանվեց հայերեն, նա գրել է. «Իհարկե, միանգամայն հավանական է, որ Հայաստանում քրիստոնեության ընդունվելու ու տարածվելու հետ միաժամանակ պետք է ծագեր հայերեն այբուբենի և բրիստոնեական պաշտամունքի գրքերի թարգմանության պահանջը: Եվ, ավելի քան հավանական է, որ սկզբնապես, ինչպես երկվում է աղբյուրների մի քանի կողմնակի վկայություններից, հայերեն գրեր ստեղծելու փորձը արվել է Հարավային Հայաստանում, գլխավորապես ասորական այբուբենի օգնությամբ»¹:

¹ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 99—102:

տանում, գլխավորապես ասորական այբուբենի օգնությամբ»¹: Մանանդյանի խոսքը, իհարկե, ոչ թե նախաքրիստոնեական շրջանին է վերաբերում, այլ՝ նախամաշտոցյան մոտիկ ժամանակաշրջանին, այսինքն՝ շորորդ դարին և այն էլ՝ ոչ թե մատենագրությանը, այլ միայն գրին:

Մանանդյանն իր այս կարծիքը կրկնել է նույն հոդվածի շարունակության մեջ ևս. «Ասորական քարոզիչների կամ գուցեև հենց իր՝ Գանիելի այդ առաջին փորձը ոչ թե այն էր, որ նրանք հնարել էին հայերեն լեզվի հնչյունաբանությանը համապատասխանող այբուբեն, այլ միայն այն, որ նրանք օտար լեզվի գոյություն ունեցող նշանագրերը հարմարացրել էին հայերեն լեզվին»:

Նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցին անդրադարձել է նաև Հայկական ՍՍՀ ԳԱ-ի ակադեմիկոս Լ. Խաչիկյանն իր «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը» և «Ստարալեզու հայ գրականությունը շորորդ դարում» հոդվածներում: Առաջին հոդվածում, որը լույս է տեսել «Պատմա-բանասիրական հանդեսի» 1963 թ. 4-ում, նա ուսումնասիրել է Մաշտոցի անվան մատենադարանում եղած հմայիլներում գործածված նշանագրերը և հետևյալ կարծիքը հայտնել նրանց մասին. «...եղիշեի, Հովհան Մայրավանեցու, վարդան Այգեկցու և այլ հեղինակների մեզ արդեն ծանոթ վկայությունների լույսի տակ՝ դադարում են (հմայիլներ) ախտարական անիմաստ ու մտացածին խզբզանքների համարվելուց և՛ ստանում որոշակի նշանակություն հայ ժողովրդի գրավոր մշակույթի սաղմնային վիճակի մասին շոշափելի տվյալներ պարունակելու առումով» (էջ 156):

Բացի այս, հայ մատենագրությունից բերելով մի շարք վկայություններ, քրիստոնեական եկեղեցու գրքացների հրմայիլներում և ախտարական աշխատություններում գործածած նշանագրության մասին, նա գտնում է, որ «...պրիմիտիվ

¹ Մանանդյանի այս աշխատությունը թարգմանաբար հրատարակվել է նաև 1957 թվականին «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» գրքի երկրորդ հատորի Բ մասում (էջ 243—275), ապա՝ 1962 թ. ՍՍՀ ԳԱ-ի պատմության ինստիտուտի լույս ընծայած «Մեսրոպ Մաշտոց» ժողովածուի մեջ (էջ 25—84): Մեջբերումը վերցված է «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածուից (էջ 45):

մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր (հավանաբար գաղափարագրեր), որոնց դեմ երկար դարեր պայքարում էին հայոց եկեղեցու գաղափարախոսները» (էջ 156):

Խաչիկյանի ասածներից, իհարկե չի հետևում, որ նա ընդունում է նախամաշտոցյան հայոց գրի և գրականության գոյությունը, սակայն փաստ է, որ մաշտոցյան ժամանակներում նախաբանական նշանագրության գործածության հարցն առաջին անգամ առաջ քաշողը հայագիտության մեջ նա է եղել:

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1973 թ. № 3-ում լույս տեսած իր հոդվածում նա մատնացույց է արել շորրորդ դարում գրված 18 հայ հեղինակների աշխատություններ, որոնք, նրա կարծիքով, գրված են եղել այլ լեզուներով (էջ 27—51): Նա փաստորեն ընդունում է օտարալեզու և օտարագիր հայ մատենագրության առկայությունը շորրորդ դարում:

Օտարագիր և օտարալեզու մատենագրության մասին Խաչիկյանի առաջ քաշած այդ փաստը ընդունելով, մենք հնարավոր ենք համարել, որ մատնացույց արված մատենագիրների աշխատությունները գրված լինեն օտար նշանագրերով, բայց մայրենի լեզվով: Մեր կարծիքով, հարցի ուսումնասիրությունը դեռ գտնվում է նախնական վիճակում. այդ ուղղությամբ կատարվելիք մեծ աշխատանքներ կան: Պետք է նկատի ունենալ, որ ստեղծված այդ գրականության նպատակն է եղել ամրացնել քրիստոնեությունը հավատացյալ ժողովրդի մեջ, ուստի նրանք պիտի խոսեին ու գրեին մայրենի լեզվով: Այդ առթիվ անհրաժեշտ ենք համարում բերել Մ. Օրմանյանի հայտնած կարծիքը. «Իրավ ալ պաշտանմունքի և աղոթքի համար հնար չէր ժողովուրդը օտար լեզվի բռնադատել, զոր քնավ չէր ճանչնար և հնար չէր չիմացած լեզվով իր կրոնական զգացմունքները գոհացնել»¹:

Արտասահմանի հայագետներից նախամաշտոցյան գրի գոյությունը պաշտպանել է պրոֆ. Մ. Մինասյանը 1932 թրվականի Ֆրեզնոյի «Նոր օր» թերթի դեկտեմբերի 16-ի թերթում «Գրի ծագումը» խորագրով իր հոդվածաշարում: Նա

վճռականապես դեմ է հակառակ կարծիք հայտնողներին. «Ո՞րն է այն հայ մտավորականը,—գրում է նա,—որ պիտի համարձակվի հայտարարել, թե հայերն անգիր ու անգրագետ մնացին մինչև Քրիստոսից հետո հինգերորդ դարը: Ես... չեմ կարող իմ ազգիս վերագրել... մի այնպիսի իմացական ընդունակություն, մի այնպիսի մշակութային կյանքի կրկնվեցում, մի այնպիսի բարաբարոս հետամնացության հավերժացում, մի այնպիսի... հոգեբանություն, մի այնպիսի անմատչելի անտարբերություն՝ հանդեպ իրենց շրջա բոլորը ծաղկող գրականության դարևոր կյանքին» (բոլոր ընդգծումները հեղինակինն են — Ա. Ա.):

Նախամաշտոցյան հայկական մատենագրության հարցը վերջերս հանդամանորեն քննության է առել պատմական գիտությունների դոկտոր, հնագետ Հ. Մարտիրոսյանն իր «Հայաստանի նախնադարյան նշանագիրը» խորագրով արժեքավոր մենագրության մեջ, որը լույս է տեսել 1973 թվականին: Նա անվերապահ ընդունել է նախամաշտոցյան գրի և մատենագրության գոյությունը: Այս մասին հանդամանորեն խոսք կլինի իր տեղում:

Վերջին տարիներին նախամաշտոցյան մատենագրության հարցը սկսել է քննարկվել ըստ գիտական առանձին բնագավառների: Այս կարգի ուսումնասիրություններից ուշագրավ է ՀՍՍՀ ԳԱ-ի թղթակից անդամ Գ. Սարգսյանի «Նախամաշտոցյան շրջանի հայ պատմագրությունը» խորագրով հոդվածը, որը հրատարակվել է 1969 թվականին «Պատմա-բանասիրական հանդեսի» I համարում: Նույնը լույս է տեսել նաև «Գրական թերթի» 1970 թվականի հունիսի 26-ի համարում:

Սկզբնաղբյուրների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա Սարգսյանը ներկայացրել է հայոց պատմագրությունը Մետրոպոլիտից մինչև Մարաբաս Կատինա: Իր ուսումնասիրության աղբյուրները ամփոփելով, նա եզրակացրել է. «Բերված նյութերը բացահայտում են այն փաստը, որ հին Հայաստանում պատմագիտական մտքի զարգացման անընդ-

¹ Մ. Օրմանյան, Ազգապատմ, հ. Ա., Պոլիս, 1912, էջ 102:

մեջ շղթա է գոյություն ունեցել, որի առաջիմ նշմարելի սակավաթիվ օղակներն իսկ ընդգրկում են 500-ամյա մի շրջան. Մետրոպոլիտոս և Արամվազդ՝ մ. թ. ա. I դար—Տիգրանի Ներբողականի հեղինակ և Օղյումպ պատմագիր՝ մ. թ. ա. I—II դարեր—Բարդաժան՝ III դար—Մարբա Մծուրնացի՝ IV դար: Սա հայ պատմության նախնական շրջանն է»: (էջ 126)... Մի ժողովուրդ, որն ունեցել է անգամ պատմագրություն, հասկանալի է, առանց գրի լինել չի կարող:

Սարգսյանն իր այդ հողվածում, Բարդաժանի կապակցությամբ, քննության է առել նաև մեհենական պատմությունների լեզվի հարցը և հանգել հետևյալ հավանական եզրակացության. «Նորինացու ցուցմամբ, որպես մեհենական պատմությունների» սկզբնագրի լեզու բացառվում են հունարենն ու ասորերենը, և հաստատվում է, ըստ Երևույթին, հայերենը (ընդգծումը մերն է Ա. Ա.): նման անսովոր դրույթում իրականում աներևակայելի բան չկա, եթե զբաղվող հայերենի օգտագործման ոլորտը նախամաշտոցյան շրջանում սահմանափակված համարենք միմիայն մեհյաններով ու քրմության միջավայրով: Որ հայերենով գրելու փորձեր ընդհանրապես արվել են նախամեսրոպյան շրջանում, դրա ապացույցն են, օրինակ, այսպես կոչված «Գանիելյան նշանագրերի» մասին մեզ հասած տեղեկությունները» (էջ 124):

Սարգսյանն իր այդ կարծիքը փորձել է հիմնավորել 1978 թվականին Երևանում հայ արվեստին նվիրված միջազգային համաժողովում կարդացած «Հայկական գրության նախապատմության շուրջը» զեկուցման թեզիսների մեջ: Այդ մասին խոսք կլինի առջևում:

Հեթանոսական շրջանում գործածվող հայկական գրին անդրադարձել է դոցենտ Հ. Ժամկոչյանը «Հայ ժողովրդի պատմության» համալսարանական դասընթացի առաջին հատորում և այն կարծիքը հայտնել, որ եթե արքունական բարձր շրջանում գործածվել են արամեական և հունական գրերը (նկատի ունենալով արամեական և հունական տառանիշերը), ապա «Հայերեն լեզվով աշխարհիկ բովանդակություն ունեցող երկեր, բանաստեղծություններ, երգեր, նամակներ և զանա-

զան գրություններ գրելու համար հայերը օգտագործել են պարսկական և հունական տառերը»: Իբրև փաստարկ նա մատնացույց է արել հետևյալը. «Մ. Նորինացին վկայում է,— գրել է նա,— որ նույնիսկ իր ժամանակ Հայաստանում գոյություն են ունեցել պարսկական և հունական գրերով գրված սահմանափակների, պայմանագրերի, ֆեոդալական տների ազնվական ծագում ապացուցող գրույցների անբավ մատյաններ»¹:

Նախամաշտոցյան հայոց գրի գոյությամբ համոզված հանդես է եկել պրոֆ. Ա. Առաքելյանը «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» գրքի I հատորի մեջ: Ավելի քան հարյուր էջի վրա (էջ 163—265) մանրամասն քննարկելով հայ և օտար աղբյուրներում նախամաշտոցյան հայ մատենագրության մասին եղած տեղեկությունները, նա եկել է հետևյալ եզրակացության. «Այսպիսով, թե՛ հայկական և թե՛ օտար մատենագրական տվյալները միաբերան վկայում են, որ մեսրոպյան գրերից առաջ Հայաստանում գոյություն են ունեցել հայկական գրեր: Գրի գոյությունը լուրջապես հաստատում է նաև գրականության գոյության փաստը: Սակայն այդ գրականությունը ենթարկվելով ավերի ու հրկիզման, չի հասել մեր ձեռքը» (էջ 174):

Նախամաշտոցյան հայ գրի և մատենագրության օգտին արտահայտվել են նաև ակադ. Հ. Օրբելին «Известия» թերթում 1941 թվականի հունվարի 5-ին տրված հազորագրության մեջ, Գ. Լեոնյանը «Սովետական արվեստում» 1941 թրվականին հրատարակած հոդվածում, Ա. Ալպոյաճյանը՝ «Պատմություն հայ դպրոցի» գրքում (էջ 11—15), Գևորգ Սարաֆյանը՝ «History of Education in Armenia» ուսումնասիրության մեջ (էջ 28), Ա. Մկրտչյանը՝ «Հինգերորդ դարի հայ դպրության» մեջ (էջ 74) և շատ ուրիշներ:

Քննարկվող հարցի պատմագրությունն ամբողջական ներկայացնելու նպատակով ցանկանում ենք որոշ ծանոթություն տալ նաև մեր այն աշխատությունների մասին, որոնց մեջ այս կամ այն չափով խոսվել է նախամաշտոցյան հայոց գրի և գրականության մասին:

Հ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում, Ե., 1961, էջ 330:

Նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցին մենք առաջին անգամ անդրադարձել ենք 1940 թվականին «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի» գրքույկում: Մի քանի էջի վրա շատ հակիրճ թվարկել ենք հիմնական այն փաստերը, որոնք առաջ են քաշում ինչպես նախամաշտոցյան գիրն ու գրականությունն ընդունող, այնպես և մերժող հայագետները: Մեր նախասիրությունը եղել է ընդունող հայագետների կողմը:

Այդ նույն տարում, երբ «ИЗВЕСТИЯ» թերթում լույս տեսավ ակադ. Հ. Օրբելու հաղորդագրությունը՝ Սևանի շրջանում արամեական արձանագրություններ գտնելու մասին՝ որպես կարևոր փաստ նախամաշտոցյան հայ գրի և մատենագրության գոյության, հայագետների շրջանում վեճ բորբոքվեց ավյալ հարցի շուրջը: Մաշտոցի անվան մատենադարանի վարչությունը կազմակերպեց բանավեճ, ուր նախամաշտոցյան հայ գրի և գրականության գոյությունը փաստող զեկուցումով հանդես եկանք մենք: Մեր զեկուցման թեզիսները հրատարակվեցին 1941 թվականին Մաշտոցի անվան մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածուի» առաջին հատորում՝ «Նախամեսրոպյան հայ գրականության հարցը» վերնագրով:

Հետագայում նախամաշտոցյան գրականության հարցին նվիրված փոքրիկ մի գլուխ գետեղել ենք 1948 թվականին լույս տեսած «Հայկական պալեոգրաֆիա» աշխատության մեջ: Այն, փաստորեն, մեր «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի» աշխատության վերաշարադրանքն է՝ փաստերի գրեթե անփոփոխ կրկնությամբ:

Նախամաշտոցյան հայ գրի և մատենագրության հարցը մեկ անգամ ևս շոշափել ենք 1955 թվականին Բեյրութ քաղաքում՝ Գյուլբեկյան սրահում կարգացած դասախոսություններից մեկի ժամանակ: Մեր այս դասախոսությունը, վեց այլ դասախոսությունների հետ, հրատարակվել է Բեյրութում առանձին գրքով «Հայագիտական յոթ դասախոսություններ» վերնագրի տակ: Այդ դասախոսությունների շարքի շորտորդ թեման «Նախամեսրոպյան նշանագրերը և հայ մատենագրության առեղծվածը» նվիրված է նախամաշտոցյան գրի և մատենագրության հարցին: Գասախոսության մեջ, հիմնական

նում, ծանրացել ենք «Նշանագիր իմաստնոց» կոչվող գաղափարագրերի վրա:

Նախամաշտոցյան գրի և գրականության հարցին նորից անդրադարձել ենք 1959 թվականին հրատարակած «Հայ գրի և գրչության պատմություն» աշխատության մեջ: Այդ գիրքը նվիրված է եղել մեր մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին: Երրորդ գլխում՝ «Հնագույն ավյալներ նախամեսրոպյան հայ գրի և գրականության մասին» վերնագրի տակ, մենք բերել ենք հանրածանոթ այն փաստարկները, որոնք խոսում են հօգուտ նախամաշտոցյան հայ գրի և գրականության գոյության:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ հնագրությանը նվիրված վերահիշյալ համառոտ հնագրական ձեռնարկները գիտական ուսումնասիրություններ չեն: Այս մենք նշել ենք 1973 թվականին հրատարակած «Հայոց գիր և գրչություն» գրքի ներածության մեջ: «Նշված աշխատությունները, — գրել ենք մենք, — Երևանի պետական համալսարանում մեր կարգացած դասախոսությունների համառոտ սղագրություններն են: Այդ դասընթացները հրատարակվել են ուսանողների անմիջական պահանջները բավարարելու նպատակով և շուրհեն հայ հնագրության գիտական լուրջ ուսումնասիրություն լինելու հավակնություն» (էջ 12):

1969 թվականին Մեծամորում հնագետների գտած անծանոթ արձանագրությունների կապակցությամբ, «Գիտություն և տեխնիկա» պարբերականի խմբագրությունն իր էջերում բաց էր արել բանավեճ նախամաշտոցյան գրի և մատենագրության հարցի շուրջը: Խմբագրության խնդրանքով բանավեճին մասնակցեցինք նաև մենք՝ «Նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցի շուրջը» հոդվածով, որը լույս տեսավ այդ պարբերականի 1969 թվականի առաջին համարում: Այդ հոդվածում ևս մենք բերել ենք հայագիտության մեջ հայտնի և մեր նախորդ աշխատության մեջ օգտագործված փաստարկները հօգուտ նախամաշտոցյան հայ գրի և մատենագրության գոյության:

Մեր այս հոդվածի դեմ, նույն պարբերականի 1969 թվականի №12-ում, հանդես եկավ պրոֆ. Է. Աղայանը «Գոյություն ունեցե՞լ է արդյոք նախամեսրոպյան գիր և գրականու-

թյուն» վերնագիրը կրող հոդվածով: Նա վճռականապես մերժեց հեթանոսական հայ գրի և գրականության գոյությունը, գրելով. «Հայկական հնագրության պատմության արդի լավագույն մասնագետներից մեկը՝ պրոֆ. Ա. Աբրահամյանը, իր հոդվածի մեջ, որ հրատարակվել է «Գիտություն և տեխնիկա» ամսագրի այս տարվա առաջին համարում, պաշտպանում է այն կարծիքը, որի համաձայն հայերը գիր և գրականություն են ունեցել մինչև քրիստոնեության մուտքը և իր բոլոր դատողությունները և փաստարկներն ուղղում է այդ կարծիքը հիմնավորելու նպատակին: Մենք հետևում ենք հակառակ տեսակետին, այսինքն՝ ընդունում ենք, որ քրիստոնեությունից առաջ հայերը գիր և գրականություն, այս բառի բուն իմաստով, չեն ունեցել» (ընդգծումը հեղինակինն է—Ա. Ա.) (էջ 37):

«Պատմա-բանասիրական հանդեսի» շորրորդ համարում, 1962 թվականին հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու է. Պրվագյանը: Հոդվածը վերնագրված է «Նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցի շուրջը»: Քննության առնելով մեր աշխատության մեջ առաջ քաշած և մեկնաբանված պատմական տեղեկությունները, է. Պրվագյանը վճռականապես մերժեց ընդունել նախամաշտոցյան գրի և գրականության գոյությունը. «...մեր պատմիչների ուղղակի վկայությունները,— գրել է նա,— աներկբա ցույց են տալիս, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերեն նշանագրերով ու լեզվով դպրություն չենք ունեցել» (154—155):

Մենք հանդես եկանք պատասխան հոդվածով՝ «Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և Գանիելյան գրերը»: Այն տպագրվեց «Պատմա-բանասիրական հանդեսի» 1963 թվականի շորրորդ համարում:

1973 թվին, երբ լույս տեսավ մեր «Հայոց գիր և գրություն» վերնագրով գիրքը, է. Պրվագյանը, պատմական գիտությունների դոկտոր Վ. Հակոբյանի ընկերակցությամբ, գրախոսական տպագրեց «Պատմա-բանասիրական հանդեսի» 1975 թվականի շորրորդ համարում: Մենք հանդես եկանք նույն պարբերականի 1976 թվականի համարում՝ «Աղբյուրագիտա-

կան վիճելի մի քանի հարցերի մասին» խորագիրը կրող պատասխան հոդվածով:

Նախամաշտոցյան հայ գրի և հայալեզու գրականության հարցին է նվիրված ՀՍՍՀ ԳԱ-ի ակադեմիկոս լեզվաբան է. Աղայանի Երևանի պետական համալսարանի հրատարակչությամբ 1977 թ. լույս ընծայած «Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին» վերնագրով գիրքը:

Ի՞նչ հիմնական խնդիր է գրել իր առջև հեղինակը շուրջ տասը մամուլ ծավալով աշխատության մեջ. ապացուցել, որ հայ ժողովուրդը նախաքրիստոնեական շրջանում չի ունեցել ո՛չ սեփական գիր, և ո՛չ էլ հայալեզու գրականություն:

2. ԺԱՅՌԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայումս գործածվող հնչյունական գիրը, ինչպես բոլոր երկրներում, այնպես և Հայաստանում միանգամայն ինչ-որ հրաշքով ի հայտ չի եկել, այլ ունեցել է իր նախագոյակ շքրջանը: Սկսելով պատկերագրությունից, այն հետագա դարերում ենթարկվել է բազմապիսի փոփոխությունների, մինչև հասել է ներկայիս դարգացած հնչյունական գրի վիճակին: Խոսելով հայկական գրի սկզբնավորման մասին, անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե ի՞նչ ձևով և ե՞րբ է ստեղծվել այն Հայկական լեռնաշխարհում:

Գրի նախատիպը համարվում է ժայռերի պատկերագրությունը, որը գիտական գրականության մեջ հայտնի է պետրոգլիֆ և պիկտոգրամ անուններով¹: Նախամարդն իր պատկերացումները, իր կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները սովորություն է ունեցել պատկերի ձևով դրոշմել քարի վրա:

Գրի պատմության լավագիտակ շեխ գիտնական Չ. Լոուկոտկան պիկտոգրամ և պիտրոգլիֆ գրությունները համարում է գրի դարգացման սկզբնական տեսակը, նրա առաջին աստիճանը: «...Իրավացի են այն հետազոտողները, — գրել է նա, — որոնք պիկտոգրամների մեջ տեսնում են գրի դարգացման

առաջին աստիճանը, այս են հավաստում այն համանման նըշանները, որ դեռ այժմ էլ գործադրում են արևմտյան և կենտրոնական Աֆրիկայի բնիկները»¹:

Նույն կարծիքին է նաև Վ. Ա. Իստրինը. «Պիկտոգրամֆիլ գիրը՝ պատմականորեն գրի ամենաառաջնային տիպարն է» — գրել է նա:

Ե՞րբ է առաջացել պիկտոգրամ գիրը՝ հնչյունական լեզվից առաջ, թե՞ հետո, այդ մասին գիտություն մեջ տարակարծություններ կան: Ա. կադ. Ն. Յա. Մառը և ակադ. Ի. Մեշչանինովը գտնում են, որ գիրը նախորդել է հնչյունական լեզվին, իսկ մյուսները՝ Վ. Ա. Իստրին և ուրիշներ, համաձայն չեն այդ կարծիքի հետ այն պատճառարանությամբ, որ պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութերը և ավատարիական հետամնաց ցեղերի ազդագրական ուսումնասիրությունների տվյալները հիմքեր չեն տալիս նման ենթադրության համար:

Տարակարծություններ կան նաև նախնական գրի օգտագործման բնույթի շուրջ. Մառը և Մեշչանինովը գտնում են, որ նախնական գիրն ունեցել է բացառապես մոզական բնույթ և օգտագործվել է ծիսակատարությունների և համայնությունների համար, իսկ ուրիշները գտնում են, որ նախնական գիրը մոզական և ծիսական նպատակներից բացի կիրառվել է նաև գործնական նպատակների համար:

Ժայռային պատկերագրության բազմաթիվ գրառումներ են հայտնաբերվել Սկանդինավյան երկրներում, Աֆրիկայում, Սիրիում, Միջին Ասիայում, հարևան Վրաստանում, Ադրբեջանում և այլ երկրներում: Մեծ քանակությամբ ժայռագրեր են հայտնաբերվել նաև Հայաստանի տարածքում՝ Արագածի փեշերին, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի և Վայոց ձորի լեռներում և այլ վայրերում: Ժայռագրությունը հսկայական տարածություններ է ընդգրկում հատկապես Գեղամա և Սյունիքի լեռներում: Տեղ-տեղ տաս-տասնհինգ կիլոմետր տարածքով քարածայրերը և քարաբեկորները ամբողջապես ծածկված են մարդկանց և կենդանիների բազմատեսակ նկարներով ու խորհրդավոր սիմվոլիկ նշանագրերով: Հայաստանի քարածայրերի վրա փորագրված պատկերները որոշ տեղե-

¹ Հունարեն պիտրա՝ նշանակում է ժայռ, գրաֆե — փորագրված, իսկ պիկտոգրամը՝ լատինական պիկտո — պատկեր և հունական գրամմա — գիր բառերից է: Պիկտոգրամների և պետրոգլիֆների տարբերությունն այն է, որ առաջինները բացառապես նկարներ են, մինչդեռ պետրոգլիֆները ժայռագրություններ են, որոնք իրենց մեջ ներառում են նաև երկրաչափական այլ տարրեր: Մանթոթյունը վերցված է Լոուկոտկայի գրքից:

¹ Չ. Լոուկոտկա, Գրի դարգացումը, Ե., 1955, էջ 26:

րում այնքան գեղեցիկ են, բաղմազան և թև-թևի խմբված, որ կարծես մեկը բացօթյա ցուցահանդես կազմակերպած լինի:

Հայաստանի ժայռապատկերների մասին պարբերական մամուլում առաջին անգամ հաղորդագրություններ են եղել 1910—1914 թվականներին, «Արարատ» ամսագրում (Մ. Տեր-Մովսիսյան, Գր. Ղափանցյան և ուրիշներ), սակայն փորձեր չեն արվել դրանք պատճենահանելու, ուսումնասիրելու և գիտական շրջանառության մեջ դնելու համար: Այդ աշխատանքին ձեռնամուխ եղան նոր ժամանակներում. գործի նախա-ձեռնողները հանդիսացան ՀՍՍՀ ԳԱ-ի հնագետները:

Առաջին գիտնականը, որը եռանդով ձեռնարկել է ժայռապատկերների պատճենահանմանը և ուսումնասիրությունները, եղել է պրոֆ. Ա. Քալանթարյանը: Գծքախտաբար, նրա պատճենահանած և լուսանկարած ժայռագրությունների որոշ մասն է միայն հրատարակված¹:

Ժայռապատկերների մի քանի խմբեր Արագածի լանջերում և Գեղամա լեռներում հայտնաբերել է հնագետ Ս. Սարգսրյանը և հրատարակել 1967 թվականին «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում» վերնագրով գրքի մեջ (էջ 113—122): Ժայռապատկերների պատճենահանման, ուսումնասիրություն և հրատարակության գործում շնորհակալ աշխատանքներ են կատարել ակադեմիայի հնագիտական երկու արշավխմբեր, որոնցից առաջինը 1967—1968 թթ. ուսումնասիրել է Արագածի, Գեղամա լեռների, Վարդենիսի լեռների և Հայաստանի այլ վայրերում եղած ժայռապատկերները, իսկ մյուս խումբը՝ Սյունիքի լեռների: Առաջին գիտական արշավի պատճենահանած ժայռապատկերները հրատարակել են Հ. Ա. Մարտիրոսյանը և Հ. Ռ. Իսրայելյանը, 1971 թվականին «Գեղամա լեռների ժայռապատկերները» գրքում, իսկ մյուսը՝ Գ. Հ. Կարախանյանը և Պ. Գ. Սաֆյանը, 1970 թվականին «Սյունիքի ժայռապատկերները» աշխատության մեջ: Ժայռապատկերների մասին առանձին հոդվածներ են հրատարակել Լ. Բարսեղյանը, Գ. Կարախանյանը, Պ. Սաֆ-


յանը, Հ. Մարտիրոսյանը, Հ. Իսրայելյանը և այլ հեղինակներ:

Գ. Հ. Կարախանյանը և Պ. Գ. Սաֆյանը, խոսելով իրենց ուսումնասիրած ժայռապատկերների և նրանց պատմական արժեքի մասին, գրել են. «Հայաստանի բարձր լեռներում, ուր վաղուց են մարել հրաբուխները, ծովի մակերևույթից մի քանի հազար մետր բարձրության վրա, լեռնապարերի փեշերին, հրաբխավեժ պղնձագույն և սև, կուպրի երանգ ունեցող բարաշեջներում ու ժայռերին փորագրված նկարներում նախնադարյան մարդը դրոշմել է սեփական մտքի առաջին «գիրք», իր կենաց պատմությունը: Հինավուրց քարե մատյանի «տողերը» հազարամյակներով մեզանից բաժանող աշխարհից վկայություն են հասցրել մեր ժամանակներին՝ Հայաստանի մ. թ. ա. V—II հազարամյակների հնագույն ցեղերի հոգևոր և նյութական կյանքի մասին: Թև-թևի իրար հենված լեռների ստորոտներում պահպանված, տասնյակ սերունդների կողմից հազարամյակներ առաջ փորված ամենատարբեր թեմաներով մատյանի շխմբող «էջերում» ամբարված են մեր հեռավոր նախնիների խոհերն ու պարումները: Հեռավոր ժամանակներից մեզ հասած այդ պատկերներում արտահայտություն են գտել բնության անզուսպ ուժերը և նախնադարյան մարդկային ճիգի, պաշտամունքի՝ նախնադարյան մարդու աշխարհայացքի առանձին դրսևորումները, աշխատանքային առօրյան, հանապազօրյա կյանքի դրվագները, բաղմապատիկ դեպքերն ու դիպվածները: Հազարամյակներ առաջ գծված կենդանի ու ճշմարտացի քարեղեն պատկերները մեր հեռավոր նախնուն շրջապատող նրա աչքով տեսած բնաշխարհի, իրական, երկրային կյանքի, ինչպես նաև աշխարհըմբռնումների անզրադարձումներն են, նրա հարուստ որսաշխարհի փորագիր տեղեկանքները»¹:

Ժայռապատկերները, հիմնականում, մեզ հանդիպում են լեռնային արոտավայրերում, հետևապես նրանց ստեղծողները կարող էին լինել բոլոր անասնապահները նախնադարյան հասարակության էնեոլիթյան փուլում: Անհիմն չէ հնա-

¹ Այն հրատարակել է պատմական գիտությունների թեկնածու Լ. Բարսեղյանը «Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ» հոդվածում (ՊԲՀ, 1966, № 3, էջ 147—159):

¹ Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, էջ 6:



Նկ. № 1. Ուղտասարի ժայռապատկեր № 150:

գետ Հ. Մարտիրոսյանը, երբ նշում է. «Ակնհայտ է, որ այս հուշարձանների հանդես դալը կապված էր լեռնային արտա-վայրերի յուրացման, կիսաբուլվորական անասնապահության զարգացման հետ, որն սկսվում է տակավին նոր քարեդարյան ժամանակներում և լիովին ձևավորվում նախնադարյան մշակույթի էնեոլիթ-վաղ բրոնզեդարյան փուլում» (ՊԲՀ, 1969, № 3, էջ 193):

Հնագիտական ուսումնասիրությունները պարզել են, որ Հայաստանում եղած ժայռագրությունները տարբեր ժամանակների ստեղծագործություններ են: Դրանցից հնագույնը Թըվագրվում է մ. թ. ա. հինգերորդ հազարամյակով և կապված է նեոլիթյան և էնեոլիթյան ժամանակաշրջանների հետ, իսկ ավելի նորերը՝ պատկերազրված են մ. թ. ա. երրորդ և երկրորդ հազարամյակում: Վերջիններիս մի մասի ժամանակը հասնում է մինչև վաղ երկաթի դարը: Պրոֆ. Հ. Մարտիրոսյանը, ուսումնասիրելով ժայռապատկերների գրառության ժամանակի հարցը, հետևյալ կարծիքն է հայտնել. «Մեծ Պայտասարի հարակից մի քանի հուշարձանների նախնական ուսումնասիրությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ

ժայռապատկերների արվեստը Հայաստանում հարատևել է առնվազն հինգ հազար տարի՝ նեոլիթյան (մ. թ. ա. VI—V հազարամյակներ) ժամանակներից մինչև վաղ հայկական պետականության ստեղծման շրջանը: Նախնադարյան և վաղ պետականության այս մեծ ժամանակահատվածի մեջ հաջողվում է առանձնացնել նեոլիթ-էնեոլիթյան (մ. թ. ա. VI—V հազարամյակներ), վաղ բրոնզեդարյան (մ. թ. ա. III հազարամյակ), միջին (մ. թ. ա. II հազարամյակի առաջին կես), ուշ բրոնզեդարյան (մ. թ. ա. I-ին հազարամյակի երկրորդ կես), ինչպես նաև վաղ երկաթեդարյան (մ. թ. ա. I հազարամյակի կես) պատկերախումբը» (ՊԲՀ, 1970, № 9, էջ 70):

Հայկական ժայռապատկերներում զգալի տեղ են հատկացված որսորդական տեսարաններին: Բազմաթիվ կոմպոզիցիաներ կան, ուր պատկերված է նիզակով, նետով, աղեղով կամ հասարակ մահակով զինված որսորդը որսի պահին՝ հաճախ իր հետ ունենալով նաև որսորդական շուն:


Ուղտասարի մի ժայռապատկերում ներկայացված է գեղեցիկ կեցվածքով արու մի եղջերու, որը շրջապատված է նետաղեղով զինված որսորդներով: Շունը բռնել է եղջերուի պոչից և քաշում է: Որսորդներից երկուսը գլխիվայր ընկած են, հավանական է, մարտում սպանվել են: Ներքևում նկարված է մի օձ, որը հարձակվում է որսորդներից մեկի վրա: Տեսարանի առաջ ձախ կողմերում նկարված են խաչակիր սկավառակներ, որոնք, անշուշտ, ներկայացնում են արևի աստծուն: Եղջերուի առջև ընկած է ինչ-որ մի թռչուն: Ուղտասարի այս կոմպոզիցիան տալիս է մեզ որսորդական տեսարանի ամբողջական նկարագրությունը¹:

Ժայռապատկերներում ներկայացված են նախնադարյան Հայաստանի բոլոր տեսակի կենդանիները՝ վարազ, տուր, ցուլ, ձի, հովազ, այծ, եղնիկ, լուսան, վայրի էջ և այլն: Դրանց մեջ կան այնպիսի տեսակներ, որոնք ոչնչացվել են անցյալում և չկան այժմ: Ուսումնասիրողն այժմ լայն հնարավո-

¹ Եղջերուի կերպարի մոտավոր նմանակներ հանգիստում են նաև հնագիտական պեղումներից հայտնաբերված իրերի վրա: Եղջերուի ոճավորված մի գծանկար հնագետ Ս. Սարգսյանը հայտնաբերել է Ենեոլիթում, փայլեցված խեցու վրա (Ս. Սարգսյան, «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում», էջ 186, նկար № 1):


բություն ունի ժայռապատկերների հիման վրա տալու Հայաստանում երբեմնի գոյություն ունեցած կենդանական աշխարհի ամբողջական պատկերը:

Ժայռապատկերներում ամենից շատ տեղ է հատկացված այծերին. դրանք այնքան շատ են, որ ժայռապատկերները ժողովրդի մեջ ստացել են «այծագրություն» անունը: Այծերը պատկերված են խմբերով, որոշ դեպքում՝ մարդկանց և այլ կենդանիների հետ միասին: Նախամարդու կողմից այծերի նկատմամբ ցուցաբերած արտակարգ ուշադրությունը և ժայռապատկերներում այդքան մեծ տեղ հատկացնելը, իհարկե, պատահական չէ: Այժը կիսաբողջովոր անասնապահին տալիս էր կաթ, միս, մորթի և մաղ, իսկ դրանք նախամարդու կյանքում ունեին կենսական նշանակություն: Այծերի մեծ թվով պատկերումը, ինչպես երևում է, ունեցել է նաև մոգական նշանակություն, նրա պաշտամունքը կապված է եղել անդրշիրիմյան կյանքի պատկերացումների հետ, հավանաբար, Սանդարամեդի պաշտամունքի հետ:



Նկ. № 2. Գեղամա լեռների ժայռապատկեր № 145:

Ժայռապատկերների կոմպոզիցիաներում ուշագրավ է հատկապես սիմվոլիկ նշանների գործածությունը: Նրանց մեջ հաճախ են հանդիպում սկավառակներ, որոնք պատկերում են արևապաշտ ժողովրդի գլխավոր աստուծուն՝ Արեգակին: Սյուժետային կոմպոզիցիոն տեսարաններում հաճախ արեգակի սիմվոլիկ նշանը ներկայացվում է աստղային համակարգի մեջ՝ լուսնի, համաստեղությունների և այլ աստղերի հետ միասին: Գեղամա լեռների Պալատասար լեռան զագաթի ժայռապատկերներից մեկում ներկայացված է արեգակի երկու



Նկ. № 3. Ուղտասարի ժայռապատկեր № 307:

սկավառակ՝ այժի և մի քանի այլ նշանազրների հետ: Հանդիպում են նաև խաշմիշուկ նշանազրեր և տարբեր տեսակի աստղանշաններ:

Գեղամա լեռների № 145 ժայռապատկերներում պատկերված է արեգակի սկավառակը նեղ տերևաձև ճառագայթներով, իսկ նրա կողքին՝ կլոր լուսինն առանց ճառագայթների՝ շքրջապատված թասնմեկ աստղերով (հավանական է համաստեղություններով), իսկ նրանից դուրս երևում են ևս երկու աստղեր:

Ժայռապատկերներ փորագրող Հայաստանի նախաբնիկները, ինչպես երևում է, հետևում էին երկնային լուսատուների շարժումներին և դիտարկումներ կատարում: Իրավացի է հնագետ Հ. Մարտիրոսյանը, երբ նկատում է թե՛ «Այդ անասնապահության, և մանավանդ ոռոգելի երկրագործության հետ կապված դիտարկումների անհրաժեշտությունն էր, որ սաստիկ զգացվում էր երկրագործական մշակույթի այնպիսի նշանավոր օջախներում, ինչպիսին էին մ. թ. ա. V—III հազարամյակներում Արարատյան դաշտը, Արածանիի հովիտը, վանի օազիսը՝ Հայաստանում, Եփրատի և Տիգրիսի միջին ու ստորին հոսանքները՝ Առաջավոր Ասիայում, Կոնիայի դաշտը՝ Փոքր Ասիայում»¹:


¹ Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանազրերը, Երևան, 1973, էջ 70:



Նկ. № 4. Ուղտասարի ժայռապատկեր № 335:



Նկ. № 5. Ուղտասարի ժայռապատկեր № 72:



Նկ. № 6. Ուղտասարի ժայռապատկեր № 77:

Ժայռապատկերներում հաճախ հանդիպում են սիմվոլիկ պատկերներ, որոնք ներկայացնում են նախնադարյան մարդու պաշտամունքի կարևոր սրբությունները:

Անվիճելի է, որ ժայռապատկերներում խոյի հանդես գալն ունեցել է որոշակի պաշտամունքային նշանակություն: Այդ, ի դեպ, երևում է Գլխնի մեհյանի պաշտամունքային տախտակից, որի վրա պատկերված են երեք խոյակների գծանկարները, որոնք իրենց ձևերով գրեթե շեն տարբերվում Ուղտասարի № 307 գծանկարից:

Ժայռապատկերներում հանդիպում են մարդակերպ աստվածների սիմվոլիկ նշաններ, կրոնական պաշտամունքային տեսարաններ, երկզվեսանի օձեր, հիդրաներ, վիշապներ և երեվակայական այլ մտացածին արարածներ: Կոմպոզիցիոն այդ տեսարանները որոշակի վկայում են, որ անդրշիրիմյան կյանքի և հոգեպաշտության երևույթները կարևոր տեղ են ունեցել ժայռագրող մարդկանց պատկերացումներում:

Նախնադարյան մարդուն շարիք պատճառող սողուններից է հանդիսացել օձը, որը կարելի է տեսնել ժայռապատկերներում: Գեղամա № 144 ժայռապատկերում նկարված են շորս օձեր միատեղ, որոնցից երեքը կպած են իրար, իսկ մեկը պատկերված է առանձին՝ փոքրիկ եղջույրը գլխին:

Ուղտասարի № 335 ժայռապատկերում ներկայացված է հրեշ վիշապը այժի եղջուրներով, երկարող ձկնաձև իրանով և կեռված պոչով, որի ծայրը ճեղքված է: Այդ հրեշ-կենդանին կեռվեռված միայն մի ոտք ունի առջևում և այդ ոտքի վերջը նույնպես երկճեղք է: Իրանի ներքին մասում կան երկու փոքրիկ ելուստներ: Կասկած չի կարող, որ ֆանտաստիկ կերպարանք ունեցող հրեշը ժամանակին պաշտվել է: Ենթադրություններ են եղել, որ ցլագլուխ հարթաբանդակներ կան նշանավոր վիշապ քարարձանների վրա, որոնք կարող են մեկնաբանվել իբրև տարերքի և պտղաբերության գազափարը մարմնավորող հուշարձաններ:

Ուղտասարի մի այլ գծապատկերում ներկայացված է այլ ձևի մի հրեշ-վիշապ, որի այժի գլուխը փոխարինված է ձկան գլխով: Առջևում նա ունի երկու թև, որոնցից մեկը բարձրացված է վերև և ճանկի ձև ունի, իսկ մյուսը՝ կեռված է ներքև, վերջավորությունում՝ դարձյալ երկճեղք: Վիշապն ունի պոչ և

մեկ ոտք, որով բռնել է ինչ-որ մի սուր գործիք, հավանա-
կան է՝ սուր: Նրա իրանից նույնպես դուրս է գալիս փոքրիկ մի
ելուատ:

Ժայռապատկերներում հաճախ են հանդիպում քառանիվ
սալներ, որոնց լծված են եղներ կամ տուրեր: Տուրը ընտանի
խոշոր եղջերավոր անասունների նախատիպն է համարվում,
որը դժբախտաբար, ոչնչացվել է միջին դարերում և մեզ չի
հասել: Սալների մոտ երբեմն պատկերված են սալը քշող մեկ
կամ երկու մարդ: Բայց պատահում է նաև, որ սալը ներկա-
յացված է առանց մարդու: Ուղտասարի № 77 ժայռապատկե-
րում սալն այնքան պարզ է պատկերված, որ կարելի է տեսնել
նրա կառուցվածքի բոլոր մասերը. այն շորս անիվների վրա է,
ցանցաձև ծածկ ունի, քաշանն ուղիղ գծով միանում է լծանի
միջին մասում և փոքր ինչ դուրս է գալիս: Լծված եղներից
ներքև կան մեհենական փոքրիկ սկալառուտներ: Ժայռապատ-
կերներում սալի առկայությունը ապացույց է, որ տվյալ ժա-
մանակում երկրագործությունը արդեն որոշակի զբաղմունք է
եղել նախամարդու համար: Այդ, ի դեպ, ապացուցված է նաև
հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված սալ-
լերի գյուտով:

Ժայռապատկերներում շատ են նաև ծիսական պատկեր-
ները: Մարդիկ իրենց այս կամ այն հաջողությունը նշանա-
վորելու համար, ըստ երևույթին, սովորություն են ունեցել
կաղմակերպել ծիսական պարեր: Ուղտասարի № 251 ժայռա-
պատկերներում պատկերված է հինգ մարդ, որոնցից շոքը
պարում են: Նրանից վերև պատկերված է երկար եղջյուրնե-
րով մի այծ:

Ժայռապատկերներում վայրի կենդանիներից շատ են
հանդիպում հովազներ, որոնք, ինչպես երևում է, շատ են տա-
րածված եղել Հայաստանում, հատկապես՝ Սյունիքի շրջանում:
Վատ զինված մարդու համար հովազը, իհարկե, սարսափելի
կենդանի էր, որի հետ նա հարկադրված է եղել մենամարտի
մեջ մտնել: Ուղտասարի № 34 ժայռապատկերում ներկայաց-
ված է մի որսորդի մարտը հովազի հետ. ձախից մարդու վրա
է հարձակվել հովազը, իսկ վերջինս աղեղն ուղղել է նրա վրա
և պատրաստվում է նետահարել:



Նկ. № 7. Ուղտասարի ժայռապատկեր № 34:

Ուղտասարի ժայռապատկերներից սեպտիստական արվես-
տի գեղեցիկ նմուշ կարելի է համարել № 99 պատկերը, որի
մեջ ներկայացված երկու կատաղի հովազների կռիվը, դեմ-
դիմաց կանգնած, ցատկելու վիճակում, պատրաստ հռչակելու
իրար: Նրանց ձգված իրանը, ոտքերի շարժումը նկարված է
արտակարգ ճշմարտացիորեն:

Հայկական լեռնաշխարհում եղած գիշատիչ կենդանիների
պատկերների մեջ հանդիպում են նաև առյուծներ: Արվեստի
լավագույն նմուշներից կարելի է համարել Ուղտասարի № 30
ժայռապատկերները, ուր մարդը մարտնչում է առյուծի դեմ.
ձախից անշուքը ետին ոտքերի վրա կանգնած հարձակվել է
մարդու վրա և ցանկանում է հռչակել նրան, իսկ վերջինս կի-
րառել է ըստ երևույթին հին ժամանակներում որսորդության
մեջ գործադրվող մի ձև. աչ ձեռքը մտցրել է գաղանի երախը,
իսկ ձախով պատրաստվում է հարվածել նրան:



Նկ. № 8. Ուղտասարի ժայռապատկեր № 99:


Ժայռապատկերներում կան բազմաթիվ սիմվոլիկ նշաններ, որոնցից քառասունվեցն առանձնացրել է պրոֆ. Մարտիրոսյանը, դրանք համարելով գաղափարագրեր: Նա «Հայաստանի նախնադարյան հիերոգլիֆները և նրանց ուրարտա-հայկական նմանակները» հոդվածում, համեմատության մեջ դնելով ժայռագրության մեջ և Հայաստանի տարածքում պեղումներից հայտնաբերված հնագիտական ցուցանյութերի վրա եղած սիմվոլիկ նշանագրերը «նշանագիր իմաստնոց» ցանկերում եղած նշանագրերի հետ, գրել է. «Իմաստասիրական վերլուծման են ենթարկվում 50 նշանագրեր, որոնք օրինաչափ ձևով կրկնվում են Սյունիքի, Արագածի և Մեծամորի մի քանի պատկերացումներում, մ. թ. ա. III—I հազարամյակների կերամիկայի կուլտուր-կրոնական դրվագումներում և նույն ժամանակի բազմաթիվ մետաղյա իրերի վրա: Նախնադարյան այդ գրերը ժամանակագրական մեծ հաջորդականությամբ իրենց նմանակներն ունեն ուրարտական հիերոգլիֆներում մ. թ. ա. IX—V դարերում, նույնպես և հայկական հեթանոսական հիերոգլիֆ ցանկերում, որոնք ընդօրինակված են միջնադարյան ձեռագրերում՝ կարճ և պարզ բացատրություններով»:



Նկ. № 9. Ուղտասարի ժայռապատկեր № 30:

Հոդվածի վերջում գիտնականը եզրակացնում է. «Վերծանված և չվերծանված հիերոգլիֆ նշանները և այլ նշանագրեր անվիճելի ցույց են տալիս, որ նախնադարյան Հայաստանում սկսած III հազարամյակից մինչև մեր դարաշրջանը, օգտագործել են հիերոգլիֆ նշաններ, իսկ հետագայում հնչական

գիրը (ընդգծումը մերն է—Ա. Ա.): Այդ գրերի վերծանությունը ըստ հիերոգլիֆների ներքին իմաստի և ուրարտա-հայկական հիերոգլիֆ համակարգերի, վկայում են այն մասին, որ նրանք ընդգրկել են արտադրական և հասարակական բավականին լայն հասկացություններ և կուլտուր-կրոնական պատկերացումներ: Գրության առկայությունը, թեկուզև պրիմիտիվ, այն ժամանակներում, երբ դեռ նոր էր ձևավորվում հին արևելյան սեպագրությունը, ինքնին ցույց է տալիս նախնադարյան Հայաստանի զարգացման մակարդակը, որը նրան դնում էր հին արևելյան քաղաքակրթության հիմնական օջախների շարքում:




Նկ. № 10. Յուլակերտի արձանագրությունը:

Հայաստանի տարածքում գտնվել են անժանոթ նշանագրերով մի քանի արձանագրություններ, որոնք գեռ ընեն վերծանված: Դրանցից է Յուլակերտի կամ Դաշբուտունի ժայռի արձանագրությունը: Կասկած չի եղել չի կարող, որ մենք գործ ունենք ինչ-որ սեպակի գաղափարագրության հետ, բայց թե այն ո՞ր ժամանակից է, ի՞նչ բովանդակություն ունի, կապված է եղել արդյոք հայկական վաղ շրջանի մեհենագրության հետ, թե ոչ՝ դժվար է որոշակի խոսք ասել:

Մարտիրոսյանը մի այլ արձանագրություն է հայտնաբերել Արմավիրում: Այն բազկացած է իրար կցված օղակներից և եռանկյունաձև նշաններից:

Հայաստանի տարածքում նման գաղափարագիր նշանագրերով արձանագրությունների մասին տեղեկություններ են հաղորդվել պարբերական մամուլում: Առանձին նշանագրեր երևացել են նաև պեղումների ժամանակ հայտնաբերված խեցեղեն ամանների վրա: Դժվար է առայժմ այս բոլորի մասին վճռական խոսք ասել: Մի բան անվիճելի է, որ գաղափարա-

գրությունը Հայաստանում գործ է անվել հնագույն ժամանակներում, Աֆեմենյան շրջանից առաջ, քանի որ որոշակի հայտնի է, որ Աֆեմենյան աիբապետության ժամանակից սկսած Հայաստանում սկսել է գործածվել արամեական գիրը: Այս մասին խոսք կլինի հաջորդ գլխում:



Նկ. № 11. Արամեական արձանագրությունը:

պարզ տեսակները՝ պատկերագիրը, նշանագիրը և գաղափարագիրը:

Նախնադարում ստեղծված այդ նշանագրությունը, նրա կարծիքով, հիմք է ծառայել ուրարտական հիերոգլիֆ գրության համար. «Պահպանվելով ու զարգանալով հետագա դարերում գրության այդ ձևերը, — գրել է նա, — պարզունակ համակարգեր են կազմում և ընկնում ուրարտական հիերոգլիֆ գրության հիմքում, որն արմատով իսկ բնիկ հայաստանյան երևույթ է դառնում և չի ծագում ո՛չ միջագետքյան, ո՛չ հրնգլակյան և ո՛չ էլ խեթական ու այլ համակարգերից, ինչպես ենթադրում են որոշ ուսումնասիրողներ» (ընդգծումը մերն է — Ա. Ա.):


Մարտիրոսյանն այնուհետև ենթադրում է, որ ուրարտական այս հիերոգլիֆ նշանագրությունը, զարգանալով և իր մեջ ընդունելով որոշ փոփոխություններ, քաղաքացիություն է ստանում Հայաստանում, որպես մեհենական գրություն: «Պետք է ենթադրել, — գրել է նա, — որ Ուրարտական թագավորության ժամանակաշրջանում գրերի մեզ հետաքրքրող հա-

մակարգը խիստ զարգանում է, հարստանում նաև օտար փոփոխությունների հաշվին և դառնում տաճարային մեհենական գրության միակ ձևը մինչև միջագետքյան սեպագրի ստեղծումը»:

Ուրարտական պետության մեջ սեպագիր գրության լայն կիրառմանը զուգընթաց, Մարտիրոսյանի կարծիքով մեհենական գրությունը շարունակվում է օգտագործվել մինչև վանի թագավորության կործանումը, իսկ այնուհետև՝ «ինչ-ինչ եղանակներով, առանց լուրջ փոփոխությունների օգտագործվում վաղ հայկական հեթանոսական մեհյաններում»:

Հարգացման ավելի բարձր շրջանում, շարունակում է Մարտիրոսյանը, երբ հիերոգլիֆ գրությունը չի բավարարում զարգացող երիտասարդ պետականությանը, «Հեթանոսական Հայաստանում լայնորեն օգտագործում են օտարագրի հնչյունական գրերը: Սակայն նախնադարյան, ուրարտական, այժմ արդեն վաղ հայկական գաղափարագրությունը, շարունակում է հարատևել մասնավորապես մեհյաններում՝ իբրև կրոնական-հմայական գրության ձև»:

Մարտիրոսյանն ավելի է խորանում իր եզրակացությունների մեջ և գտնում է, որ «Քրիստոնեությունը չի մերժում «նախնեաց մերոց» գաղափարագրությունը նույնիսկ մաշտոցյան հնչյունական գրի հանճարեղ գյուտից հետո: Սակայն, ինչպես բոլոր դեպքերում, այնպես էլ այստեղ, նույ-



Նկ. № 12. Ժայռագրության մեջ հանդիպող գաղափարագրեր:

նությամբ պահպանելով նշանագրերի ձևերը, շատ հաճախ վերագրում է նրանց իր վարդապետության համապատասխան իմաստ: Այսպես, նախնադարյան արևապաշտ որսորդ, անասնապահ, երկրագործ պատկերագիրը դառնում է «կռապաշտ», պտղաբերող արևածին ոգին՝ «հեշտասեր», արևխաչն ճանկախաչը՝ պարզպես «խաչ», «աշտարակ»-ը՝ «տաճար» կամ «եկեղեցի» և այլն¹:

Այսպիսով, Մարտիրոսյանը հենվելով իր հայտնաբերած նյութերի և իր կատարած համեմատությունների վրա, փորձել է գտնել նախամաշտոցյան գրի և մատենագրության զարգացման ողջ պատմական պրոցեսը՝ նախնադարից մինչև մաշտոցյան գիրը:

2. Մարտիրոսյանի այս աշխատությունը պարբերական մամուլում արժանացել է բարձր գնահատականի: Գրախոսակառնով հանդես է եկել բանասիրական զիտությունների թեկնածու Արտաշես Մարտիրոսյանը: Նա այդ աշխատությունը համարել է «պրոֆեսիոնալ բարձր մակարդակի» ուսումնասիրություն («Սովետական Հայաստան» 1974, հունվար 3):

Գծվար է մեզ համաձայնել գրի պատմության այն սխեմայի հետ, որն առաջարկում է Լ. Մարտիրոսյանը: Ուսումնասիրության կարոտ է նաև ժայռագրության, հիերոգլիֆ-նշանների և «նշանագիր իմաստնոց» նշանագրության առնչությունները: Սակայն անուրանալի է Մարտիրոսյանի մեղմաջան աշխատանքը՝ հայկական պիկտոգրամ և պետրոգլիֆ գրերի հայտնաբերման և հրատարակության գործում: Բոլոր դեպքերում, գովեստի են արժանի մեր հնագետների և պատմաբանների շնորհակալ աշխատանքները՝ Աշխարհբեկ Քալանթարի, Գ. Կարախանյանի, Լ. Իսրայելյանի, Պ. Սաֆյանի, Լ. Բարսեղյանի և մյուս հեղինակների Հայաստանի առաջին գրատեսակի հայտնաբերման և հրատարակության գործում: Նրանց ջանադիր աշխատանքով կարելի եղավ անվիճելի ավացուցել, որ պիկտոգրամ և պետրոգլիֆ գիր է գտնվել

Հայաստանում նախնադարյան հասարակության ժամանակաշրջանում:

Տասնյակ հազարավոր նմուշներով ժայռագրերի հայտնագործությունը Հայաստանի տարածքում այլևս անիմաստ է դարձնում սովորական այն հարցադրումը, թե նախամաշտոցյան Հայաստանում արդյո՞ք գոյություն ունեցել է գիր, թե ոչ, քանզի պարզվում է, որ Հայաստանում սիմվոլիկ նշաններով պրիմիտիվ ժայռագրություն է գոյություն ունեցել դեռևս վաղ նախնադարում:

¹ Լ. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը, Երևան, 1973, էջ 63:

Յ. ՀԻԵՐՈՓՈԼԻՅ ԵՎ ՍԵՊԱԳԻՐ ԳՐԵՐԻ ԳՈՐԾԱՄԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ժայռագրութիւնը, ինչպես տեսանք, Հայկական լեռնաշխարհում գործածվել է նախադասակարգային հասարակութիւնի ժամանակաշրջանում գլխավորապես մոզակա՝ նայատակների համար: Հետագայում դասակարգային հասարակութիւնի մեջ, պիկտոգրաֆը (պատկերագիր) գիրն իր տեղը զիջում է սեպագիր և հիերոգլիֆ գրին:

Հայաստանի նախաբնիկների կողմից սեպագիր գրութիւնի գործածութիւնի մասին տեղեկութիւններ կան մ. թ. ա. երրորդ հազարամյակից: Այն գործածել են խուրրիները: Գրանցից հրնագրւն է Ուրկիշի թագավոր Տիշարի արձանագրութիւնը: Ենթադրւում է, որ խուրրիները և ուրարտացիները մի էթնոս են կազմել: Հայ ժողովուրդը իր կերպարանքով, ինչպես հայտնի է, պատկանում է արմենոիդ տիպին, որին, Ի. Մ. Գլախոնովի կարծիքով «պատկանել են հայկական լեռնաշխարհի ամբողջ տերիտորիայով տարածված խուրրի-ուրարտական ցեղերը»¹:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Զահուկյանը ևս ընդունում է խուրրիտական և ուրարտական լեզուների ազդակցութիւնը և նրանց մոտիկութիւնը հնդեվրոպական լեզուներին: Ըստ որում, նրա կարծիքով ուրարտական լեզուն ավելի է մոտիկ հնդեվրոպականին, քան խուրրիականը²:

Գրական լեզվի հարուստ մշակույթ է մեզ հասել խեթեր-

նով: Խեթական տոհմացեղային միութիւնը ոտք է դրել դասակարգային հասարակութիւն և ստեղծել պետականութիւն մ. թ. ա. քսաներորդ դարում և շարունակել իր գոյութիւնը մինչև մ. թ. ա. XII դարը:

Խեթական պետութիւնը եղել է իր ժամանակի ուժեղագույն պետութիւններից մեկը: Նա մրցակցութիւն մեջ է գտնւելել այնպիսի հզոր հարևանների հետ, ինչպիսիք են Եգիպտոսը, Բաբելոնը և Ասորեստանը: Խեթական այդ պետութիւնը հզորացման բարձր աստիճանի է հասել հատկապես մ. թ. ա. XVI դարում և գործուն փոխհարաբերութիւնների մեջ է գտնւել ինչպես հարևան երկրների, այնպես էլ հայկական լեռնաշխարհում ապրող հարևան ցեղախմբերի, հատկապես հայասացիների հետ:

Խեթական պետութիւնի մասին տեղեկութիւններ են պահպանվել եգիպտական, ասորական և բաբելական աղբյուրներում: Գիվանագիտական մեծ թվով վավերագրեր են հայտնաբերվել երեք հարյուր կիլոմետր կահիրեից հարավ, Նեղոս գետի արևելյան ափին գտնվող Եգիպտոսի Թել-Ամարնա կոչվող վայրում:

Խեթական պետութիւնի գործունեութիւնի մասին զգայացունց նորութիւն էր գերմանացի հնագետ Հ. Վինկլերի հազորումը: 1906—1907 թվականներին, Անկարայից շուրջ հարյուր հիսուն կիլոմետր արևելք, Բողազքոյ կոչվող վայրում խեթական, հատուկապէս մայրաքաղաքի ավերակները պեղելիս, նրան հաջողվեց պալատական շէնքում հայտնաբերել խեթական թագավորների արխիվի հազարավոր թրծաղյուս սալիկներ՝ սեպագիր և հիերոգլիֆ գրութիւններով: Հայտնաբերված խեթական գրութիւնները վերծանեց շիս ականավոր գիտնական Բենդերթիս Հրոզին: Վերծանութիւնից պարզվեց, որ թրծաղյուսի այդ սալիկների գրութիւնները պարունակում են ծիսական կանոններ, հրահանգներ, պայմանագրեր, աղոթքներ և այլ նյութեր: Հայտնաբերած այդ նյութերից արժեքավոր էին հատկապէս նրանք, որոնք տեղեկութիւններ են պարունակում Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերի մասին:

Խեթական պետութիւնի մեջ գործածված սեպագիր գրութիւնը կազմված է արքայականի և ասորականի տարբերա-

¹ Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Երևան, 1971, էջ 90:

² Г. Б. Джаукян, Взаимоотношение индо-европейских хурритско-урартских и кавказских языков, Е., 1967, էջ 170:

կներից, իսկ հերոզիֆ գրութիւնը համարվում է ավելի հին և տեղական: Հայ գրի սկզբնավորման տեսանկյունից կարևոր է հատկապես խեթական հիերոգլիֆ գրութիւնը, ուր կան այնպիսի գաղափարանշաններ, որոնք անշափ նմանութիւն ունեն հայկական ժայռագրի և «նշանագիր իմաստնոցի» մեջ գործածված գաղափարագրերին:

Հայկական լեռնաշխարհում առաջին գիր ունեցող պետական կազմավորումը եղել է Ուրարտուն: Մեզ են հասել ավելի քան 400 ուրարտական սեպագիր արձանագրութիւններ և քիչ թվով նաև ուրարտական հիերոգլիֆ գրութիւններ: Սեպագրութիւնը վերցված է ասորականից և ձևափոխելով հարմարեցված իրենց տեղական պահանջներին:

Ուրարտական սեպագրութիւնն առաջին անգամ 1882 թրվականին վերծանել է անգլիացի արևելագետ Ա. Սեյսը, իսկ հետո ավելի ճշտել և մութ հարցերը լուսաբանել են Մ. Նիկոլսկին, Ք. Պատկանյանը, Ն. Մառը, Ի. Մեշչանինովը, Գ. Ղափանցյանը և շատ ուրիշներ: Ուրարտական լեզվի, պատմության և մշակութի ուսումնասիրության ասպարեզում մեծ վաստակ ունեն Ք. Պատկանյանը, Գ. Մելիքիշվիլին, Ի. Դյակոնովը, Ն. Հարութիւնյանը, Հ. Կարազոյզյանը և ուրիշներ:



Նկ. № 13. Ուրարտական արձանագրութիւն Երիբունի (Երևան) քաղաքի հիմնադրման մասին:

Ուրարտական սեպագրութիւնն ունի բավական բարդ համակարգ. կան նշանագրեր, որոնք առանձին բառ են արտահայտում և կան առանձին հնչյուններ կամ վանկեր:

Ուրարտական հնագույն արձանագրութիւնը կիտուպրիի որդի Սարդուրի արձանագրութիւնն է ասորերեն լեզվով՝ գրված մ. թ. ա. IX դարի երեսնական թվականներին: Ուրարտերենով գրված հնագույնը՝ Իշպուինի արձանագրութիւնն է մ. թ. ա. IX դարի վերջին քառորդում: Իսկ ուրարտերենով ամենից ուշ գրված արձանագրութիւնը համարվում է Ռուսա IV-ի արձանագրութիւնը մ. թ. ա. VI դարի սկզբում: Եվ այսպես, ավելի քան երեք դար անընդմեջ Հայաստանի տարածքում գործ է ածվել ուրարտական գիրը:

Ենթադրութիւններ են եղել, որ գիր են ունեցել նաև հայկական տոհմացեղային միութիւններից հայասցիները: Չեխականավոր արևելագետ Բ. Հրոզնու աշակերտ պրոֆ. Ն. Ա. Մարտիրոսյանը հայասցիների գիր ունենալու մասին հետևյալ կարծիքն է հայտնել. «Ըստ իս,— գրել է նա,— մեր նախնիները երկրորդ հազարամյակին սեպագիր գործածած են իրենց դրացիներու պես միջազգային հարաբերութիւնց մեջ: Շուպիլուիումի (1410 մ. թ. ա.) և Մուրշիլի (1365 մ. թ. ա.) տարեգրութիւններուն տված տեղեկութիւնց համաձայն, Խայաշայի (Հայասայի) արքաները նամակագրութիւն ունեցած են հեթացի (խեթական) թագավորներուն հետ»: Եվ նա Մուրշիլի տարեգրութիւնից բերում է դիվանագիտական բնույթի այդ նամակների պատճենները: Ն. Մարտիրոսյանը՝ մատնացույց անելով խեթական սկզբնաղբյուրներից բերված այս տեղեկութիւնները, վերջում եզրակացնում է. «Վերև առաջ բերված տեղիքները լրիվ կրավեն համոզում գոյացնելու համար, որ մեր նախնիները երկրորդ հազարամյակի երկրորդ կեսուն արդեն սեպագիր կգործածեին: Առանց գրի գոյութիւն, չէին կրնար կազմակերպել և կառավարել իրենց հզոր պետութիւնը, որ քանիցս հանդգնած է հեթական լայնացված կայսրութիւն ղեմ պատերազմելու»¹:

Խուրրիական, խեթական և ուրարտական գրավոր մշա-

¹ Ն. Ա. Մարտիրոսյան, Սեպագրի կիրառումը մեր նախնաց մոտ՝ Ս. Մխարոպեն առաջ, «Մարմատա» թերթ, Կ. Պոլիս, 1963, 23 հունվարի:

կույթը, ի տարբերություն նախադասակարգային հասարակության ժամանակաշրջանի գործածական պիկտոգրաֆիկ գրի, հանդիսացել է պետական կաղմավորված ժամանակաշրջանի մշակույթ: Ի. Մ. Գյակոնովն անդրադառնալով այդ հարցին, իրավացիորեն նշել է. «Այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել ինչ-որ մի կենտրոն, որն իր գրավոր ավանդույթն է տվել խեթերին և միտանիններին»¹ XIV—XIII դարում, ուրարտացիներին IX դարում, պետք է համարել վկայություն այն իրողության, որ նրանք եղել են դասակարգային քաղաքակրթության կենտրոններ»¹:

Խոսելով Հայկական լեռնաշխարհում գործածվող պատկերագրության, հիերոգլիֆ և սեպագիր գրությունների մասին, հարց է ծագում, կարելի՞ է արդյոք դրանք համարել հայկական մշակույթ, և սկիզբ ու մեկնակետ ընդունել հայ գրավոր մշակույթի պատմության:

Հայ ժողովրդի էթնիկական կազմավորման միգրացիոն պատմագրության ներկայացուցիչները այս հարցին դյուրին պատասխան են տալիս. հայերը Հայկական լեռնաշխարհի նախաբնիկներ չեն, ասում են նրանք, այլ Թրակիայից եկած գաղթականներ, հետևապես, Հայկական լեռնաշխարհի նախարնիկների մշակույթը հայ ժողովրդի մշակույթի հետ առնչելու հիմքեր չկան:

Բոլորովին այլ տեսանկյունով մոտեցան հայ ժողովրդի էթնիկական կազմավորման հարցին և լուծեցին մեր գիտնականները: Եթե անցյալում տվյալ հարցի համար հիմք էին վերցնում միայն հունական մատենագրության ավանդական տեղեկությունները, ապա մերօրյա գիտնականները, խորամուխ լինելով հին արևելյան հիերոգլիֆ և սեպագիր սկզբնաղբյուրների մեջ, հայտնաբերեցին և գիտական շրջանառության մեջ դրեցին հայ ժողովրդի կազմավորմանը վերաբերող բազմաթիվ փաստեր, որոնք վրիպել էին նախորդ ուսումնասիրվողների ուշադրությունից: Բացի այդ, հարցի քննարկումը բազմակողմանիորեն տանելու համար նրանք օգտագործեցին նաև օժանդակ գիտությունների տվյալները՝ հնագիտության,

ազգագրության, լեզվագիտության, միֆոլոգիայի, պատմական աշխարհագրության և այլն: Գիտական այս բոլոր բնագավառների տվյալների համակողմանի ուսումնասիրության միջոցով նրանք հերքեցին հայ ժողովրդի ծագման միգրացիոն տեսությունը և ապացուցեցին, որ հայ ժողովուրդը հիմնականում տեղաբնակ (ավտոխտոն) ժողովուրդ է և կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում ապրող նույնալեզու և այլալեզու տոհմերի, ցեղերի և տոհմացեղերի միությունների ձուլումից: Նրանք ապացուցեցին նաև, որ արմեն ցեղախումբը, որի վրա հիմնականում շեշտ են դնում միգրացիոն տեսության կողմնակիցները, հայ ժողովրդի էթնիկական կազմի մեջ մտած բազմաթիվ ցեղախմբերից մեկն է եղել միայն: Բացի այս, հին արևելյան պատմական աղբյուրների տվյալներով այդ ցեղախումբը Հայկական լեռնաշխարհի տարածքում հանդես է եկել շատ ավելի վաղ, քան հունական աղբյուրներում նրանց գաղթի մասին եղած տեղեկություններն են ավանդում:

Մեր նպատակից դուրս է կանգ առնել Հայկական լեռնաշխարհում ապրած ժողովուրդների տեղաշարժերի վրա՝ շփոտելով, իհարկե, առանձին ցեղախմբերի տեղաշարժերը: Սակայն իրողությունն այն է, որ տեղաշարժերը էական դեր չեն խաղացել ժողովրդի կազմավորման պրոցեսում: Հայ ժողովուրդը էթնիկապես կազմավորվել է Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերից և հանդիսացել է տեղաբնակ ժողովուրդ¹:

Դժվար է համաձայնել նաև այն ուսումնասիրողների հետ, որոնք փորձում են հավասարման նշան դնել ուրարտական լեզվի և հայ ժողովրդի ձևավորված լեզվի միջև: Այդ փորձերն անհաջող են, որովհետև հայ ժողովուրդը կազմավորվել է ոչ թե մեկ, այլ տարբեր լեզուներ ունեցող տոհմերից, ցեղերից և տոհմացեղային միություններից: Ըստ որում, հայոց լեզվի ձևավորումը հազարամյակներ տևող պրոցես է եղել: Լեզուների մեջ, անշուշտ, տեղի է ունեցել մրցակցություն և հաղ-

¹ Այս մասին մենք հանգամանորեն խոսել ենք մեր «Յոթ դասախոսություններ» գրքի «Հայրենի գիտնականների կարծիքը հայ ժողովրդի կազմավորման մասին» գլխում: Այն լույս է տեսել Լիբանանի Անթիլիասում, 1955 թ.:

¹ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, 1968, ст 80.

թանակել է այն ցեղային լեզուն, որն ամենից ավելի դյուրամատչելի է եղել:

Զպետք է սակայն կարծել, թե հաղթանակող լեզուն պահպանվել է բյուրեղային մաքրությամբ. անվիճելի ապացուցված պիտի համարել այն, որ հայոց լեզվի մեջ ցեղային մյուս լեզուներից մտել են շատ բառեր և անուններ:

Պրոֆ. Ի. Մ. Գյակոնովը իր «Հայ ժողովրդի նախապատմությունը» գրքում, հանգամանորեն քննության առնելով հայ ժողովրդի կազմավորումը, անդրադարձել է նաև Հայկական լեռնաշխարհում նախաբնիկների մշակույթի ժառանգականության հարցին և հանգել հետևյալ եզրակացությանը. «Հայ ժողովուրդը, անկասկած, ժառանգորդն է լեռնաշխարհի վրա եղած այն ամենի, որն ստեղծել են նրա հնագույն բնակիչները, առաջին հերթին՝ խուրիները, ուրարտացիները, լուվիացիները (ընդգծումը մերն է—Ա. Ա.)»¹

Այդ կարծիքն է ունեցել նաև Մաուր: Նա գրել է. «Նրանք՝ հաբեթական լեզվաընտանիքին պատկանող հայերը, գիր ունենին Աքեմենյան պետության մեջ հարյուրավոր տարիներ առաջ նախքան Քրիստոսը: Այդ են վկայում, այսպես կոչված, երկրորդ կարգի սեպագիր արձանագրությունները, այդ են վկայում նաև Վանի սեպագիր արձանագրությունները, որոնք փորագրված են թրծաղյուսների, շենքերի և քարաժայռերի վրա՝ սկսած Քրդստանից, Վանի ավազանից՝ հարավում, մինչև Ախալքալաքի գավառը՝ հյուսիսում»²:

Այսպիսով, եթե անվիճելի է, որ հայ ժողովուրդը, հիմնականում, կազմավորվել է Հայկական լեռնաշխարհի վրա ապրած տոհմերից, ցեղերից և տոհմացեղային միություններից, այդ դեպքում առարկություն չի կառող լինել, որ նախնիների պատմությունը նրա պատմության օրգանական, անբաժանելի մասն է, հետևապես հայ ժողովուրդն օրինական ժառանգորդն է իր նախնիների ողջ ստեղծագործության, այդ քվում՝ նաև գրավոր մշակույթի:

Հայկական ձեռագրերում և հնատիպ տպագրություններում

¹ И. М. Дьяконов, *История языка*, էջ 211:

² Н. Я. Марр, *Кавказский культурный мир и Армения*, 1915, էջ 11:

առանձին բառերի փոխարեն գործածել են գաղափարագրեր (հիերոգլիֆ նշաններ): Դրանք մեծ թիվ են կազմում հատկապես հմայիլներում և ախթարական մատենագրության մեջ: Որպես հայ իրականության մեջ գործածված նշանագրեր, անհրաժեշտ ենք համարում նրանց մասին փոքր-ինչ տեղեկություն տալ:

Հայկական այդ գաղափարանշանները կցագրերի (հասպաման նշանների) հետ խառը միջին դարերում կազմել են առանձին ցանկեր, որոնց մեջ բերվում են գաղափարանշանները և կցագրերը ու տրվում նրանց մեկնությունը: Այդ ցանկերը ձեռագրում հանդիպում են տարբեր վերնագրերով. «Նշանագիրք», «Նշանագիրք. իմաստնոց», «Նշանագիր անուանց», «Այս է նշանագիր Հայոց ազգի», «Քաջատուրքին յառաջնոց գրոց և անուան», «Նշանագիր անուանց. կարեարանութին» և այլն: Պատահում են նաև առանց վերնագրերի: Նշանագրերի ցանկերը կազմված են լինում հետևյալ կերպ. առաջին գծի վրա բերվում են նախ նշանագրերը և ապա տրվում դրանց վերծանությունը հայերեն ներկա տառերով:

Այդ ցանկերը տարբեր թվով նշանագրեր են պարունակում. կան այնպիսիները, որոնց պարունակած նշանագրերը մի քանի տասնյակ են, կան և ցանկեր, որոնց նշանագրերի թիվը հարյուրների է հասնում:

Մինչև վերջերս հայկական նշանագրության այդ ցանկերը հայտնի էին 18 ձեռագիր ընդօրինակություններով: Մեր ուսումնասիրություններից պարզվեց, որ այդ ընդօրինակությունները սոցալսածից բավականին շատ են. միայն Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում դրանց թիվը հասնում է հիսունի: Այդ ցանկերի բիրտգրաֆիան խմբավորված հրատարակել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմության» մեջ (էջ 144—147):

Հայ նշանագրությունը առանձնահատուկ ուշագրության առարկա է դարձել հայագիտության մեջ, որը բացատրվում է նրանով, որ հայագետներից ոմանք ցանկանում են դրանց մեջ տեսնել հայկական մեհենական գիրը: Եվ քանի որ հարցի շուրջը լուրջ բանավեճեր կան, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այդ վարկածի սխալ կամ ճիշտ լինելու խընդրին:

Հայ նշանագրութեան առաջին ցանկը հրատարակել է Մ. Էմինը իր «Об армянском алфавите» հոդվածի հավելվածում: Նրա հրատարակութեան համար հիմք է ծառայել Մոսկվայի կազարյան ճեմարանի № 141 ձեռագիրը՝ 1620 թվականի գրչութեամբ: Այդ ձեռագրում եղած ցանկի 332 նշանագրերից Էմինը հրատարակել է 134-ը: Կազարյան ճեմարանի նույն ձեռագրի նշանագրերի ցանկը ամբողջությամբ հրատարակել է Իս. Հարությունյանը «Հայոց գիրը» աշխատութեան հավելվածում (110—112):

Հայկական նշանագրութեան երկրորդ ցանկը հրատարակել է Abbé P. Martin-ը 1873 թվականին «Des signes hiéroglyphiques dans les manuscrits arméniens» աշխատութեան մեջ: Նրա հրատարակած ցանկը պարունակում է 257 նշանագիր: Այնուհետև 120 նշանագրի մի ցանկ 1879 թվականին հրատարակել է Գ. Սրվանձտյանը «Թորոս աղբար»-ում (էջ 337—340):

Հայ նշանագրութեան ընդարձակ ցանկ, առանձին գրքով, հրատարակել է Տ. Պալյանը Վիեննայում 1898 թվականին «Նշանագիրք հայոց» խորագրով: Այդ ցանկը պարունակում է 551 նշանագիր: Նշանագրութեան ավելի ճոխ ցանկ հրատարակել է Ֆ. Մուրատը «Հանդես ամսօրեա»-ի 1903 թվականի համարներում (էջ 5—9, 144—146, 333—335): Այս ցանկի համար հիմք է ծառայել Բեռլինի արքունական մատենադարանի № 805 ձեռագիրը, որն ունի 505 նշանագիր:

Հայկական նշանագրութեան ամենից հարուստ հավաքածուն կազմել և հրատարակել է Հ. Աճառյանը «Հայոց գրերը» աշխատութեան հավելվածում: Աճառյանի հրատարակած նըշանագրերի թիվը 510 է, իսկ եթե հաշվելու լինենք նաև որոշ նշանագրերի տարբերակները, ընդհանուր թիվը կանցնի մեկ հազարից: Նշանագրերի հրատարակութեան համար Աճառյանին հիմք են ծառայել Մաշտոցի անվան մատենադարանի տասը ձեռագիր ընդօրինակությունները:

Նկատի ունենալով, որ այդ ցանկում կան այնպիսի նշանագրեր, որոնք գործ են ածվում հայկական ձեռագիր բնագրերում, ուստի ցանկանալով դրանց հետ ծանոթացնել հայկական հնագրությունն ուսումնասիրող ուսանողութեանը, մենք հայկական նշանագրութեան երկու ցանկ հրատարակել ենք

մեր գրքերում՝ «Հայկական պալեոգրաֆիայում» (էջ 91—98), «Հայ գրի և գրչութեան պատմութեան» մեջ (էջ 117—129, 168—173) և «Հայոց գիր և գրչություն» գրքում (էջ 214—224, 236—243): Առաջին հրատարակութեան համար հիմք են ընդունել մատենադարանի № 2371 և № 715 ձեռագրերի ցանկերը, որոնք մեզ հայտնի ձեռագրերից հնագույններն են, իսկ երկրորդ և երրորդ հրատարակութեան համար օգտագործել ենք մատենադարանի տասից ավելի ձեռագրեր: Ուսումնասիրութեան համար դյուրություն ստեղծելու նպատակով երկրորդ և երրորդ հրատարակություններում գաղափարագրերի ցանկերը բաժանել ենք սղագրութեան նշաններից, թեև, պետք է խոստովանվենք, որ այդ բաժանումը եղել է պայմանական, քանի որ գաղափարագրեր համարվածների մեջ կարող են լինել այնպիսիները, որոնք ստեղծված լինեն հայկական տառանիշերից՝ բարդ կցագրումներով, որոնք չէր կարելի ճանաչել:

Հայկական նշանագրութեան մասին առաջին անգամ խոսել է Մ. Չամչյանն իր «Պատմութիւն հայոց» աշխատութեան մեջ: Քննութեան առնելով վարդան Արևելցու տեղեկությունը՝ հայ հեթանոս թագավորների դրամների հայերեն գրեր ունենալու մասին, իր կողմից ենթադրել է, որ դրանք հավանաբար հընչական տառանիշեր չէին, «...այլ նշանագիրք ինչ, որք հնարեալ էին փոխանակ ամբողջ բառից, զի կան և այժմ ի հին ձեռագիրս այդպիսիք աւելի քան զերկու հարիւր, որոնց ոմանք ցարդ իսկ գործածեն»¹:

Հայ նշանագրութեան հարցը հանգամանորեն քննութեան է առել Մկրտիչ Էմինը: Նշանագրութեան մասին նրա կարծիքը եղել է հետևյալը. «Խոստապահանջ մոտեցման պարագային, ինչպես կտեսնենք ստորև, քննութեան առած երեք հարյուր նըշանագրերից շատ բշերն են, որ կարելի է վերագրել հայ հեթանոսական ժամանակաշրջանին: Անկախ դրանից, փոքրաթիվ այդ բեկորները հարկադրում են մտածել, որ Հայաստանում, իրոք, գոյություն է ունեցել երբեմնի գաղափարագիր գրություն, որը զարգացման բարձր աստիճանի է հասել և միաժամանակ տարածվել ամենուրեք»²:

¹ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, գիրք Ա, Վենետիկ, 1784, էջ 761:

² М. Эмин, Исследования и статьи, էջ 204:

էմինի հայտնած այս կարծիքի քննադատութեամբ հանդիս է եկել բանասեր Իս. Հարությունյանը հետևյալ պատճառաբանութեամբ. հայկական նշանագրերի մի մասը հայկական ներկա տառերից կազմված համառոտագրութիւնն և կապգրութիւնն է, ուստի մաշտոցյան գրից առաջ ստեղծվել չէր կարող, ապա՝ նշանագրերի մեջ կան այնպիսիները, որոնք քրիստոնեական գաղափարներ են արտահայտում՝ Աբրահամ, Սողոմոն, խաչ, եկեղեցի և այլն, որոնք հեթանոսական շրջանում սկիզբ առնել չէին կարող և, վերջապես, կան այնպիսիները, որոնք վերցված են հարևան ժողովուրդների ու ժամանակներում գործածած տառանիշերից: Վերջում եզրակացնում է, որ ոչ մի ապացույց չունենք, որ նշանագրերի ցանկի մեջ «...պարունակված սակավաթիվ պատկերազրերը մեր կրօնապաշտ նախնայաց սեպհականութիւնն են և ոչ թե ծնունդ հետագա ժամանակներին»¹:

Ն. Աճառյանը նույնպես չի ընդունել էմինի հայտնած կարծիքը՝ հայկական նշանագրութիւնը հեթանոսական հայկական գրութիւն համարելու հարցում: Սակայն նա խմբավորել է նշանագրերը և աշխատել պարզել նրանց ծագումը ըստ տեսակների: Անվանի գիտնականի հետևութիւնը եղել է հետևյալը. «Վերոհիշյալ ցուցակին մեջ գտնված բոլոր նշանագրերը, պատկերագիր թե համառոտագրութիւն, հետմետրոպիան շրջանին հայերեն տառերու վրա ձևված կամ առարկային պատկերեն առնված նշաններ են, և բնավ կապ չունին մեհենադրոշմներու և հաթյան կամ դանիելյան նշանագրերու հետ»:

Կարծիքներ են եղել, որ «նշանագիր իմաստնոցը» սղագրութեան ցանկ է: Ըստ այդ կարծիքների, հնում հայերն ունեցել են ոչ միայն զարգացած գիր, այլև՝ սղագրութիւն (стенография): Այդ կարծիքը պաշտպանող բանասերներից Գ. Զարբհանալյանը գտնում է, որ սղագրութեան այդ նշանները Հայաստանում գործ են ածվել շատ վաղուց և Քրիստոնեական կրօնից ի Հայաստան մուտք գտնելէն ետն ալ՝ արքունական գրչաց ու անոնց գործածած նշանագիրներուն կհանդիպենք աղգային մատենագրութեան պատմութեան մեջ. և որոց ձևն, ինչպես նաև կիրառութիւնն ի հոմեհացվոց մեզի

անցած կերևի: Անշուշտ տեսակ մ'էր այն համառոտագրութեան (sténographe), յորում աջողակ և հուշժ վարժ էին լատինք»¹: Նույն կարծիքն է հայտնել նաև հայագետ Լանգլուան:

Հայկական նշանագրութեան հնութիւնն ապացուցելու նրա պատակով այդ կարծիքը հայտնող հայագետները հիմք են ընդունում Ագաթանգեղոսի հաղորդած հետևյալ տեղեկութիւնները. երբ Տրդատի հրամանով շարշարանքի են ենթարկում Գրիգոր Լուսավորչին, և նա սկսում է աղոթել, նրա խոսքերը «գրեցին և մատուցին զայն առաջին թագաւորին»: Հոնփփմեհին ևս շարշարանքի ենթարկելու ժամանակ, երբ նա ևս աղոթում էր «...ոմանք ի մեծամեծ սպասաւորացն արքունի անդէն ընթացան պատմել թագաւորին զամենայն բանս նոցա. քանզի դիպեցան անդ նշանագիրք, որ գրեցին զամենայն բանս, և ընթերցան առաջին թագաւորին»: Ագաթանգեղոսի այս տեղեկութիւններից հետևում է, ասում են նրանք, որ Տրդատի արքունիքում կային «նշանագրող դպիրներ», որոնք սղագրել են Լուսավորչի և Հոնփփմեհի խոսքերը և ներկայացրել թագաւորին:

Այդ կարծիքը ևս քննադատել է Իս. Հարությունյանը: Նա համամիտ չէ, որ «նշանագիր իմաստնոցի» գաղափարագրերը մեհենական մատենագրութեան բեկորներ են, չի համաձայնում նաև Զարբհանալյանի և Լանգլուայի հետ, որ դրանք սղագրութեան նշաններ են: Մեհենական օգտագործվող գիրը, գտնում է նա, գաղափարագիր լինել չէր կարող, «...քանի որ այդ ժամանակ վաղուց արդեն զարգացած էր հոմեհական և հունական այբուբենը, պատկերագրի կամ նշանագրի գործածութիւնը բոլորովին մոռացութեան էր տրվել, իսկ համառոտագրութիւնն այնպիսի մի երկրորդական բան էր և միայն արտաքո կարգի զեպքերի համար, որ դորա հիշելն իբրև մի առանձին առավելութիւն կամ գիտութիւն՝ բոլորովին միտք չուներ: Ավելի հավանական ենք համարում, որ նշանագիր ասելով Ագաթանգեղոսն ուզում է ընդհանրապես «գիր» գաղափարն արտահայտել»²:

¹ Գ. Զարբհանալյան, Հայկական հին գրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 17:

² Իս. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 246:

¹ Իս. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 107:

Որ սղագրությունը IV դարում հայտնի է եղել հոռմեական կայսրության մեջ և գործածության մեջ գտնվել, այդ մասին վկայություն կա նաև Փավստոս Բուզանդի գրքում: Նա պատմում է, որ Ներսես Պարթևը Բյուզանդիոնում եղած ժամանակ, երբ ներկայանում է Վաղես կայսրին, սկսում է հանդիմանել նրան ապօրինի գործունեության համար, նրա խոսքերը «Գրելին զայս սեմիարք նոտարացի արքային, որը կային առաջի թագաւորին»: Կասկած լինել չի կարող, որ խոսքն այստեղ սղագրությանն է վերաբերում՝ стенография-ին, «սեմարք նոտարացն» ասելով, Հ. Աճառյանը ճշմարտացիորեն նկատի է ունեցել հունական անվանումը:

առակ. Զ: զինուոր. զ. Եր. զարա
 րիւնակ. զ. Կ. զորար. զ. Ը. Լ. Կ. Կ.
 ան. եւմանուեւ. Ը. Է. զարման. Կ.
 Բ. Ընթերցում. Ը. Ը. Ընդիր. Կ.
 Բարասոր. ան. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
 Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
 Կորդ. Բ. Ժամանակ. Բ. Ժամ.
 անգար. Բ. Ժամ. Ժամ. Ժամ.
 Իշխան. Զ. Իբրև. Բ. Իբրև.
 Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Լուսաւոր. Լ. Լուս. Լ. Լ. Լ. Լ. Լ.
 Կամ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Ի. Ժամ. Բ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 անու. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
 Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

Նկ. № 14. Մի էջ «Նշանագիր իմաստնոց» գրքից:

Անհավանական չէ, իհարկե, որ Տրդատի արքունիքում եղել են արբունի գրագիրներ, որոնք Լուսավորչի և Հռեփսիմեի խոսքերը գրի են առել և ներկայացրել թագավորին, սակայն դրա

հիման վրա չի կարելի պնդել, թե «Նշանագիր իմաստնոց» հենց այդ սղագրության նշանների ցանկն է: Իս. Հարությունյանը մեծ նշանակություն է տվել Ազաթանգեղոսի հետևյալ տեղեկությունը. «Տրդատ թագավորի հրամանը հասնելով ինձ՝ ոմն Ազաթանգեղոսի, որ Հոռմ մեծ քաղաքից էր, վարժված հայրենի արվեստի մեջ, սովորած հոռմեական և հունական գրությունը և ոչ պակաս տեղյակ նշանագրության գործածությանը (և ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց): Ի՞նչ պիտի հասկանալ այստեղ նշանագրություն ասելով՝ գաղափարագրություն (հիերոգլիֆ գրություն), թե՞ սովորական գիր: Իսահակյանը հակված է կարծելու, որ սովյալ դեպքում Ազաթանգեղոսը նկատի է ունեցել գիրը: Նա բերում է այդ բառի մի շարք գործածություններ հայ մատենագրությունից և աշխատում ցույց տալ, որ Ազաթանգեղոսի նշանագիր բառն ունի ոչ թե գաղափարագիր, այլ տառանիշ նշանակություն: Նրա վերջնական եզրակացությունն եղել է այն, որ «Տրդատի ժամանակ գործ դրված և Ազաթանգեղոսի հիշած տառերը հայերեն պետք է լինեին»:

Անկախ նրանից, թե Ազաթանգեղոսի «Նշանագրությունը» գաղափարանիշ պիտի հասկանալ, թե տառանիշ, երկու դեպքում էլ այն գրի առկայության ապացույց է:

Որ «Նշանագիր իմաստնոց» կիրիկյան և Նրզնկայի տարբերակները կազմվել էին XII—XIII դարերում՝ և դրանից ոչ շուտ, կասկած լինել չի կարող: Վեճի առարկա լինել չի կարող նաև սղագրության առանձին նշանագրերի հայկական բոլորագիր տառանիշներից կազմված լինելը, ինչպես ցույց է տվել Աճառյանը: Լուսաբանության կարոտ է միայն այն հարցը, թե ի՞նչ ատաղձի վրա են ձևված «Նշանագիր իմաստնոցի» բուն գաղափարագիր-նշանագրերը, որո՞նք են եղել նրանց սկզբնաղբյուրները:

Աճառյանը «Նշանագիր իմաստնոց» ցանկից առանձնացրել է այն նշանագրերը, որոնք, նրա կարծիքով, գաղափարագրեր են: Այդպիսիների թիվը, նրա հաշվով, 104 է: Հայկական նշանագրության մեր հավաքած և հրատարակած ցանկերում գաղափարագրերի թիվն անցնում է 200-ից: Բացառված չէ, իհարկե, որ գաղափարագրեր համարվածների մեջ լինեն

¹ Հարությունյան, Հայոց գիրը, էջ 251:

հայկական տառերի կցազրեր, որոնք ենթարկվել են այնքան մեծ փոփոխությունների, որ դժվար է այժմ նրանց մայրերը ճանաչել, սակայն ինչպես էլ դրանց ճանաչելու լինենք, այնուամենայնիվ, փաստ է, որ մենք ունենք հայկական մեծ թվով նշանազրեր: Հիմք չկա մտածելու, որ դրանք բմհաճույքով ստեղծված նշանազրեր են, քանի որ դրանց որոշ մասի նմանակները կան այլ ժողովուրդների հիերոգլիֆ գրությունների մեջ:

	աստված		աստված
	աստված		դրախտ
	թագավոր		թագավոր
	թագավոր		հսկա
	ծառա		լլառն
	որդի		սեր
	հաթի		փարթամ
	կարկամեշ		ճշմարիտ
	ka, ak, k		մարգարե
	n, ni		տե՛ս
	t —		եղբայր
	m		լրումն

Նկ. № № 15ա—15բ

2. Աճառյանն այդ առեղծվածը պարզելու նպատակով հայկական նշանազրության գաղափարագրերը համեմատության մեջ է դրել խեթական գաղափարագրության հետ: Նա գտել է 12 գաղափարագրեր, որոնք ձևով նմանվում են, սակայն իմաստով տարբերվում են դրանցից: Աճառյանը բերած ցանկի գաղափարագրերից նմանություն է տեսնում «№ № 15ա—15բ»

նշանազրերում: Նրա վերջնական եզրակացությունը եղել է այն, որ այդ նմանությունը կարող է պատահական լինել. «Բ՞նչ արժեք կրնային ունենալ այս համեմատությունները, — գրել է նա, — երբ նշանակության կողմն կապակցություն՝ չկա քնավ»¹: 2. Աճառյանի համեմատական ցանկից բերում ենք միայն 12 նշանազրերի դուգադրությունը:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ «նշանագիր իմաստնոց» ցանկերը մեզ են հասել երկու տարբերակով, որոնցից մեկը Կիլիկիայի գրչության դպրոցից է, իսկ մյուսը՝ Երզնկայի Մեզ հայտնի շուրջ վաթսուն նշանագրության ցանկերից (նկատի ունենք նաև արտասահմանյան ձեռագրերի մեջ եղածները) հիսունյոթը պատկանում են կիլիկյան խմբին, իսկ երեքը՝ Երզնկայի:













Կիլիկիայի ցանկի նշանագրության մեծամասնությունը կցազրեր են՝ կազմված հայկական տառանիշերի ձևափոխություններից, իսկ այդ տառանիշերի համար հիմք են ծառայել ոչ թե հայոց երկաթագիր կոչվող տառանիշերը, այլ՝ կիլիկյան բոլորագիրը: Այդ խմբի մասին ավելորդ ենք համարում խոսել:

Բոլորովին այլ բովանդակություն ունի նշանագրության Երզնկայի խումբը: Այդ ցանկը մեզ է հասել երեք ձեռագրով՝ մատենադարանի № 5118 և № 3177 գրչագրերում ու Քեռլինի կայսերական գրադարանի հայկական հավաքածուի № 805 ձեռագրում: Երզնկայի նշանագրության խումբը, ի տարբերություն Կիլիկիայի խմբի, ունի հետևյալ առանձնատեսակություններ. ա) նշանազրերի մեծ մասը գաղափարագրեր են, բ) նշանազրերը շարադրված են ոչ թե այբբենական կարգով, այլ՝ խառը, գ) նշանազրերի ցանկերը շունեն վերնագրեր:

Երզնկայի խմբի նշանագրության ցանկը ևս շատ հին համարել չի կարելի. նքա մեջ ևս, գաղափարագրերի հետ միասին, հանդիպում են հայկական բոլորագրի վրա կազմված կցագրեր, որոնք դարձյալ XII դարից ավելի հին լինել չեն կարող:











Նշանազրերի Երզնկայի տարբերակում գաղափարագրերի որոշ մասը ներկայացնում է առարկայի մոտավոր պատկերը: Այս խմբի գաղափարագրերից կարելի է մատնացույց անել հետևյալները.

¹ 2. Աճառյան, Հայոց գրերը, էջ 55:

	լուսին		մատանի
	խորան		գավազան
	տապանակ		վիշապ
	հոնք		նետ
	լեզու		պտուղ
	աթոռ		աշտարակ









Նկ. № 16ա—16բ

Փաղափարագրերի մի այլ խումբ տվյալ բառի իմաստն է արտահայտում.

	աղբյուր— մի կետ, որից սկիզբ է առնում հոսող ջուրը:
	փառասեր— իրար վրա բարձրացած պղպջակներ:
	արծաթասեր— բերանը բաց թսակ:
	մեղավոր— ճանկերով գլուխ:
	կեղծավոր— լեզու, որ երկուսի է բաժանված:
	քաղաք— պարիսպով շրջապատված տարածություն:
	գարուն— արեգակի և լուսնի միջև ընկած պահը:
	եղջերու— կլոր գլուխ՝ երկու եղջյուրներով:
	սպասավոր— խոհարարի շերեփը:
	սեր— ֆալլուս:

Նկ. № 17

Կան սակայն այնպիսի գաղափարագրեր, որոնց իմաստը բացահայտելը դժվար չէ. թե ինչ սկզբնաղբյուր են ունեցել դրանք, դժվարանում ենք պարզել: Այդպիսիներից, օրինակ, կարելի է մատնացույց անել հետևյալները.

	աղ		հանճար
	անկեղծ		մարդ
	կշիռ		առյուծ
	երկաթ		խնամի և այլն:

Նկ. 18ա—18բ

Հայկական գաղափարագիր նշանագրությունը մենք փորձել ենք համեմատության մեջ դնել նախ եգիպտական հիերոգլիֆների հետ և գտել շուրջ երեսուն նշանագրեր, որոնք ձևով նմանություն ունեն, սակայն նրանց մեծ մասը իմաստով տարբեր են:

Մի քանի նշանագրերի նմանության հիման վրա լուրջ եզրակացության գալ, իհարկե, չի կարելի: Սակայն կարելի է ասել, որ հայկական նշանագրությունը մտացածին ստեղծագործություն չէ, բայց այն կամրջել եգիպտական հիերոգլիֆների հետ, անկարելի է:


Հայկական նշանագրությունը մենք փորձել ենք նաև համեմատության մեջ դնել խեթական հիերոգլիֆ պատկերագրության հետ՝ ձեռքի տակ ունենալով այդ գրության բոլոր նշանագրերը: Պարզվել է, որ կան բազմաթիվ նշանագրեր, որոնք նման են իրար ոչ միայն իրենց ձևերով, այլև իմաստով:

Հետագա ուսումնասիրողների գործը դուրսացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել դրանք:

Ձևով և իմաստով շատ ու քիչ նմանվում են հետևյալները¹.

¹ Խեթական հիերոգլիֆների համար հիմք է ծառայել Ի. Մ. Дунаевская-ի աշխատությունը «Язык хетских иероглифов», М., 1969 էջ 92—107:

ԽԵՐԵՆՆ



զուխ
 Թագավոր
 մայր
 եղ
 եղջյուր
 կենաց ծառ
 բարի
 արեգակ
 լուսին



աստղ
 աստված
 շար
 տուն
 լեռ
 ջուր
 դարպաս
 հաց

Նկ. № 19

ՀԱՅԵՐԵՆՆ



զուխ
 Թագավոր
 ազգ
 դվարակ
 եղջյուր
 եղևնի
 (անթառամ)
 սեր
 արեգակ
 լուսին



աստղ
 արև
 սատանա
 քաղաք
 լեռ
 ջուր
 աշտարակ
 նշխարք

Կան հայկական գաղափարագրեր, որոնք նմանվում են խեթականին միմիայն ձևով: Դրանք հետևյալներն են.



բառի ցուցիչ



անհայտ



անհայտ



անհայտ



անհայտ



անհայտ



կա, կ



հո



անհայտ



անհայտ



տիտղոս



խոշոր շենք



շենք



անհայտ



կյանք



անհայտ



պտուղ



առավոտ



տապանակ



դատաստան



փառասեր



անիրավ



տես



հոգի



բուրաստան



վիշապ



դրախտ



մեղավոր



հեթանոս



արևմուտք



հոգի



հրեշտակ

Նկ. № 20

Մեր կատարած նախորդ համեմատությունների ժամանակ նշել ենք, այժմ դարձյալ կրկնում ենք նույն կարծիքը. Մենք հեռու ենք այս նմանությունների հիման վրա հասցնելու եզրակացություններ անելուց՝ գրություն մի համակարգը բխեցնելու մյուսից, սակայն չենք կարող և աչք փակել այս նմանությունների վրա: Մեր կարծիքով, եթե հայկական նշանագրերը ստեղծված լինեին մի առանձին անհատի բնածույրով, պարզ է, որ այդպիսի նմանություններ երբեք չէին լինի... Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հայ ժողովուրդը լինական ինչ-որ պարսպով անջատված չի եղել արևելյան մյուս ժողովուրդներից, այլ նրանց հետ ապրել է սերտ փոխազդեցության միջոցով: Վերջին տարիներին Կարմիր բուրում, Գվինում, Զանգեզուրում և Գառնիում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութերը եկան անվիճելիորեն փաստելու հայ ժողովրդի՝ իր հարևանների հետ ունեցած անտեսական և կուլտուրական գործուն փոխհարաբերությունների առկայությունը: Պեղումների ժամանակ տեղական արդյունագործության արտադրանքի կողքին գտնվեցին լինական, հնդկական, պարսկական, նգրապական և հարևան այլ երկրների զարդարանքներ, ամաններ, դրամներ և այլ իրեր: Այս բոլորից հետո չի՞ կարելի արդյոք մտածել, որ Երզնկայի հայկական գաղափարագրերի մի շարք նշանագրեր, որոնք նմանվում են եգիպտական, խեթական և Մոհենջո-Դարոյի նշանագրերին, պատահական չեն:

Անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ կանգ առնել ախտարական նշանագրության վրա, քանի որ հայագիտության մեջ կարծիքներ են հայտնվել, թե դրանք ևս հեթանոս հայ մեհենական գրության մեզ հասած նմուշներն են: Անսովոր նշանագրերով այդ բնագրերը հանդիպում են հմայիլներում՝ և ախտարական բովանդակություն ունեցող ձեռագիր մատյաններում:

¹ Հմայիլները 10 սանտիմետր լայնությամբ և 8—12 մետր երկարություն ունեցող ժապավենաձև փաթեթներ են, որոնց վրա գրված են լինում աղոթքներ, կախարդական համարվող նշանագրերով բանաձևեր, նկարներ: Դրանք կախում են մարդկանց կամ կենդանիների վզից՝ իբրև թե շար աչքից պահպանելու համար:

Ախտարական արվեստը հին պատմություն ունի. այն սկիզբ է առել և լայն քաղաքացիություն ստացել հեթանոսական շրջանում և կապված է եղել համաստեղությունների կազմով աստղերի շարժումների միջոցով կատարվող գուշակությունների հետ: Դա է պատճառը, անշուշտ, որ այդ արվեստը ստացել է «ախտարք» անունը, որը պահպանել են լեզվով նշանակում է «համաստեղություն», իսկ պարսկերենով՝ «աստղ» կամ «բախտ»:

Ըստ հին հավատալիքների, աշխարհում գոյություն ունեն շար և բարի ոգիներ. շար ոգիները մշտապես աշխատում են շարիք պատճառել մարդկանց, իսկ բարի ոգիները՝ բարիք, և ահա շարը չեզոքացնելու, շար ոգիների գործերը կաշկանդելու, իսկ մյուս կողմից՝ բարի ոգիների օգնությունն ապահովելու համար, գործի են կոչվել դյուրիշները, թովիչները, կախարդները, գրքացները և բոլոր տեսակի մյուս հմայություններով զբաղվողները: Նրանք իրենց փիթիկներով իբրև թե կարողանում են միջամտել շար ու բարի ոգիների գործունեությանը՝ նպատակ ունենալով օգնել մարդկանց:

Հարց է առաջանում, ախտարական մեզ հասած այդ նշանագրությունը կապ չունի՞ արդյոք հայ մեհենական գրության հետ: Քրիստոնեություն կողմից մեհենները կործանելուց և նրանում գործածվող մատենագրությունը ոչնչացվելուց հետո, թվում է թե միակ ուղին, որով կարող էր մեհենական նշանագրությունը պահպանվել և հասնել մեզ, ախտարքն էր, և նրանով զբաղվողներն էին, որ կարող էին գաղտնի գործածել և փոխանցելով սերնդից սերունդ, հասցնել նոր ժամանակները:

Ախտարական նշանագրության խմբերից մեկով՝ հմայիլագրերով, զբաղվել է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը և առանձին ուսումնասիրություն հրատարակել «Պատմա-բանասիրական հանդեսի» 1963 թ. № 4-ում՝ «Նախամետրոպոլիտան գրի հարցը և հմայագրությունը» վերնագրով: Նա գտնում է, որ հմայագրությունը, որը հանդես է եկել հեթանոսական շրջանում, քրիստոնեություն պաշտոնական կրոն ձևանալուց հետո, շարունակվել է գոյատևել ախտարքով զբաղվողների միջոցով: Եկեղեցական հայրերը ջանք ու եռանդ չեն խնայել հեթանոսությունից մնացած այդ վերապրուկները արմատախիչ

անելու ուղղութիւնը: Գիտնականը եկեղեցականների հմայիլի գրութեան դեմ պայքարելու համար պատմական մի շարք փաստեր է մատնացույց արել: Բերենք այդ տեղեկութիւններէց մի քանիսը:

Մեսրոպ Մաշտոցը «Խրատագիր և զգուշացուցիչ» խորագրով շրջաբերական թղթերից մեկում նշում է բոլոր նրանց, ովքեր զբաղվում են հմայագրութիւններով. նա պահանջել է այդպիսիներին վտարել քրիստոնեական համայնքներից: V դարի պատմիչ Նղիշեն իր «Արարածոց մեկնութեան» մեջ սպանիչ քննադատութեան է ենթարկել ախտարքով զբաղվողներին, որոնք, նրա ասելով, ալլանդակ դիտավորութիւններով նշանագրեր են գծում, մարգարեութիւններ անում գալիքի մասին և երազներ մեկնում:

Հովհան Մանդակունուն վերագրվող, բայց իրապէս VII դարի մատենագիր Հովհան Մայրագոմեցու հեղինակութեանը պատկանող մի ճառում, որն ուղղված է ախտարքով զբաղվողների դեմ, գատապարտվում են հմայութեամբ, բախտագուշակութեամբ, գրբացութեամբ և ախտարական նրման զբաղմունքներով պարապողները:

XIII դարի առակագիր Վարդան Այգեկցին կոապաշտութեան դեմ գրած իր քարոզում քննադատում է հեթանոսութիւնից մնացած որոշ սովորութիւններ, այդ թվում նաև՝ «Ուսումն ծրարագործութեան և այլ փաթեթք սատանայական», որոնցով գրբացները խաբում են խավարամիտներին և այլ շարագործութիւնների պատճառ դառնում:

«Կանոնագրքում» ախտարքով զբաղվելը պաշտոնապէս համարվել է ծանր հանցանք և պատիժներ է սահմանվել նրանց դեմ: Ըստ Աթանաս Ալեքսանդրացու «Կանոնախմբի», ախտարքով զբաղվելը՝ թովութիւն է, որով զբաղվողները պիտի պատժւեն:

Եվ այսպես, եկեղեցական հայերի թափած բոլոր ջանքերը՝ արմատախիլ անելու ախտարքով զբաղվելը, արդունք չեն տվել. փաստ է, որ այն գործածութեան մեջ է գտնվել ողջ միջնադարում և հասել նոր ժամանակները:

1. Խաչիկյանը Մաշտոցի անվան մատենադարանի հմայիլներից ընտրել է ութ լավագույնները և կազմել շուրջ 150 հմա-

յագրերի մի ցանկ: Հեղինակը չի կասկածում, որ եթէ մատենադարանում եղած մյուս հմայիլների նշանագրութիւնը ևս հաշվի առնվեր, ապա այդ ցանկի նշանագրերի թիվը կարելի էր հասցնել մի քանի հարյուրի: Ցանկը, անշուշտ, շատ ավելի կընդարձակվեր, եթէ հաշվի առնվին մանավանդ ախտարական ձեռագրերի պարունակած նշանագրերը:

Հրատարակված նշանագրութիւնը, իհարկէ, բավական է ընդհանուր պատկերացում կաղմելու համար, քանի որ տվյալ դեպքում մեզ անհրաժեշտ է պարզել, թէ կարելի՞ է ախտարական այդ նշանագրութիւնը համարել մեհենական գրութեան մնացորդներ, թէ ոչ:

Խաչիկյանը, անդրադառնալով այդ հարցին, հետևյալ կարծիքն է հայտնել. «Հարցի ուսումնասիրութեան ներկա փուլում, այդ հմայագրերի վերծանման մասին մտածելը վաղաժամ է: Գրանք, սակայն, Նղիշեի, Հովհան Մայրավանեցու, Վարդան Այգեկցու և այլ հեղինակների մեզ արդեն ծանոթ վկայութիւնների լույսի տակ դադարում են ախտարական անիմաստ ու մտացածին խղբանքներ համարվելուց և ստանում որոշակի նշանակութիւն հայ ժողովրդի գրավոր մշակույթի սաղմնային վիճակի մասին շոշափելի տվյալներ պարունակելու առումով: Առայժմ մենք չգիտենք հմայական այդ գրերի վերծանման դադտիքը: Սակայն գիտենք արդեն դրանց զուգահեռ, մեսրոպաստեղծ այբուբենով գրանցված հմայական գանազան բանաձևերի և մոզական բժշկութեան դեղատոմսերի բովանդակութիւնը: Վերհիշենք շար աչքի, կրծքացավի, ջերմի, գըլխացավի մասին վերը բերած բանաձևերը... Այդպիսի պարզունակ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր, (հավանաբար գաղափարագրեր), որոնց դեմ դարեր շարունակ պայքարում էին հայոց եկեղեցու գաղափարախոսները»: (ՊԲՀ, 1963, № 4, էջ 156):

Խաչիկյանի ախտարական նշանագրութեան մեջ հեթանոսական հայկական մատենագրութեան սաղմնային նմուշներ փնտրելու ցանկութիւնը լիովին հասկանալի է: Հեթանոսական նշանագրութիւնը, ինչպես ասացինք, կարող էր պահ-

պանվել միայն ախտաբերով զբաղվողների կողմից, նրանք էին, որ կարող էին ժառանգած լինել և պահպանել քրմության ավանդույթը, ուստի տրամաբանական է, որ նրանց դեմ պիտի ուղղված լիներ եկեղեցական հայրերի պայքարը:

Ախտարական բնագրերի մասին ընդհանուր պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում թալիսմանագիր հմայիլներից բերել նշանագրերի հետ (տե՛ս էջ 75):

Մատենադարանի հմայիլները շատ հին չեն. հնագույնը՝ 1499 թվականներից է, իսկ մյուսները՝ XVII—XVIII դարերից, ուստի եթե անգամ անվերապահ ընդունելու լինենք, որ նրանք նախամեսորոպյան գրության նմուշներից են, դարձյալ դժվար կլինի նրանց մասին անվերապահ կարծիք հայտնել, քանի որ այդ նույն հմայիլ գրող անձինք չեն հասկացել նշանագրերի նշանակությունը և դարերի ընթացքում ձեռքից ձեռք արտագրելու ընթացքում, պետք է, որ զգալի փոփոխությունների ենթարկված լինեն:

Ախտարական ձեռագրերում գործածված նշանագրութունը որոշ նմանություններ ունի հմայիլագրության հետ, սակայն սրանք ևս հնագրական օրինաչափությունների չեն ենթարկվում: Դժվար է որոշակի ասել, թե նրանք հնչական արժեք ունեցող տառանիշն՞ր են, թե՞ զաղափարագրեր:

Մաշտոցի անվան մատենադարանի № 8716 ձեռագրում գրի է առնված թալիսմաններ բաց անելու երեք բանալի-այբուբեն, որոնք հնչական արժեք ունեցող բնագրերի համար են և իրենց տառաբանակով ճիշտ այնքան են, որքան հայկական այբուբենը:

Ուշագրավ է հմայագրերի որոշ նմանությունը «նշանագիր իմաստնոց» զաղափարագրերին: Պարզվում է, որ երկուսի մեջ էլ կան այնպիսի նշանագրեր, որոնք նման են իրար: Դժբախտաբար, մենք չգիտենք հմայագրերի իմաստը, նմանությունների հիման վրա վճռական խոսք ասել չենք կարող:

Բանալիներ ընդօրինակող հեղինակը, որին հավանաբար

հայտնի է եղել ախտարական նշանագրության խմբերից մեկի վերծանությունը, նշել է. «Այս նշանագիր որ գրին ի տլիսիմն. զայս վասն այն գրեմ, որ ի տեսանիլ ինչ գիր նա համեմատելով լուծել զնոսա»: Դժբախտաբար, մեզ չհաջողվեց ձեռագրերում հանդիպել այնպիսի ախտարական բնագրի, որը կարելի լինել վերծանել այդ այբուբեն-բանալիով: Չհաջողվեց ձեռագրերում հանդիպել նաև երրորդ բանալուն համապատասխանող նշանագրերի: Ինչ վերաբերում է երկրորդ բանալուն, ապա այն աղվանական ծածկագրության հանրածանոթ այբուբենն է, որ և օգտագործվում է հայ ծածկագրության մեջ:

4. ԱՐԱՄԵԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԵՐԻ ԳՈՐԾԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի նախարանիկները, ինչպես տեսանք, պիկտոգրաֆիկ գիր են ունեցել նոր քարեդարյան և բրոնզեդարյան ժամանակներում: Հետագայում հայ ժողովրդի մեջ ձուլված, Հայկական լեռնաշխարհում պետականություն ստեղծած ցեղային միություններից մի քանիսը գործածել են սեպագիր և հիերոգլիֆ գրեր: Հարց է ծագում. կարո՞ղ է պատահել, որ հայ ժողովուրդն էթնիկապես ձևավորվելուց հետո, սոցիալ-տնտեսական հարաբերությունների ավելի բարձր աստիճանում, մոտացության տար իր նախնիների՝ դարավոր մշակույթը:

Այս հարցի ճիշտ պատասխանը տվել է ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը՝ Մաշտոցի ծննդյան հոբելյանի առթիվ կարդացած իր զեկուցման մեջ. «Հայ ժողովրդի կազմավորումը հանգեցրեց հայկական պետականության ստեղծմանը: Դարերի ընթացքում զարգացավ մեր ժողովրդի պետականությունը և նրա մշակույթը: Եվ եթե հայերին նախորդող ուրարտացիները զգացել են գրի պահանջը և ունեցել են սեպագրեր, ապա հայոց պետությունը ներկայացնելով իրենից հասարակության զարգացման ավելի բարձր աստիճան, բնական է, որ պետք է զգար իմֆորմացիայի փոխանակման կատարելագործված ավելի խիստ պահանջ» (ՊՔԶ, 1962, № 3, էջ 5):

Տվյալ հարցն ուսումնասիրող հայագետներից էր Աղաջանը ևս իր գրքույկում իրավացիորեն գտնում է, որ հայ ժողովուրդը պետականություն ստեղծելուց հետո անկարելի է, որ կառչած մնար սեպագրության ու հիերոգլիֆ գրությանը և շանցներ հնչյունական գրին, քանի որ հարևան բոլոր երկրներ-

ում գործածվում էր հնչյունական գիրը. «Հայ ժողովրդի կազմավորման, հայ պետականության և մասնավորապես Արտաշեսյան հարստության դարաշրջանում հայերը, — գրել է նա, — կամա թե ակամա (պատմական իրադարձությունների թելադրանքով), սերտագույն շփման մեջ էին պարսիկների, հույների, արամեացիների, հոմեացիների, իսկ ավելի ուշ՝ նաև ասորիների հետ, որոնք բոլորն էլ հնչյունական գիր ունեին: Կատարյալ թե անկատար, զարգացած թե անզարգացած, դժվարամատչելի թե դուրամատչելի՝ դրանք, այնուամենայնիվ, տառային կամ վանկա-տառային, բայց զաղափարանշանների տարրեր ունեցող այբուբեններ էին: Թե՛ ուրարտական սեպագրական համակարգը, թե՛ խեթական զաղափարագրական ու սեպագրական համակարգը իրենց զարն ապրել էին: Նույնիսկ պարսիկները հրաժարվել էին իրենց սեպագրական համակարգից, չուրացրել արամեական գրային համակարգը՝ ստեղծելով այսպես կոչված պահլավա-արամեականը, որից էլ հետագայում՝ պահլավականը, մինչև արաբական գիրն ընդունելը: Այդ ժողովուրդների հետ շփվող, նրանց մշակույթին հաղորդակից եղող հայերը պետք է հետ սերման ճանապարհ բռնեին ու խեթական կամ թեկուզ ուրարտական սեպագրական համակարգը վերցնեին: Այդ ի՞նչ ուղղմելի ժողովուրդ պետք է լիներ, որ մի կողմից Արտավազդի հունարեն ողբերգություններն ունենար ու դրանց բեմադրությունները դիտեր, իսկ մյուս կողմից՝ զաղափարագրական համակարգն ընտրեր գրելու համար» (էջ 195):

Խոսելով հին հայկական գրի և մատենագրության մասին, չպետք է հայ ժողովրդին մեկուսացնել իր հարևան ժողովուրդներից, որոնց հետ նա գտնվել է առևտրական, քաղաքական և մշակութային սերտ փոխհարաբերությունների մեջ: Պրոֆ. Մ. Մինասյանը այդ կարևոր փաստարկ է համարում նախամաշտոցյան գրի և զրականության հարցում. «Եթե, ուրեմն, մեկ հաս ուղղակի ապացույց իսկ չունենայինք Սահակ-Մեսրոպեն առաջ հայ գրի գոյությանը, — գրում է նա, — լուկ հայ ազգին Հայաստանի մեջ նախաքրիստոնեական գոյությունը պիտի պարտադրե մեզ ընդունել՝ թե քաղաքական այնքան կարևոր գիրք և իշխանություն ունեցող քաղաքակրթության և գրի ու գրականության երկրներում մեջ այնքան կենտրոնա-

կան դիրք գրավող, առևտրական այնքան լայն հարաբերություններ մշակող և մշակույթի ուրիշ մարզերուն մեջ այնքան ակնառու հառաջադիմություններ ցույց տվող մեր նախնիք չէին կարող անգիր և անգրագետ մնալ այնքան երկար դարեր, այն ալ ներսեն ու դրսեն շրջապատված ըլլալով զանազան այբուբենական գրչություններով» (Ֆրեզդնոյի «Նոր օր» շաբաթաթերթ, 1932, դեկ. 16):

Հեթանոսական Հայաստանի գրի և մատենագրության հարցը քննարկելիս անհրաժեշտ է, իհարկե, հաշվի առնել, թե խոսքը ո՞ր ժամանակաշրջանին է վերաբերում՝ արեմենյա՞ն, հելլենիզմի՞, թե՞ վաղ քրիստոնեական՝ IV դարին: Պետք է պարզել նաև, թե տվյալ ժամանակահատվածում Հայաստանի հարևան երկրներում գրային ի՞նչ համակարգեր գոյություն ունեին: Նկատի պետք է ունենալ նաև, որ հայերը կարող էին օգտագործել այլ ժողովրդի նշանագրերը, ինչպես վարվել են նրա մոտիկ հարևանները:

Քաղաքացիություն ստացած այս կամ գրային համակարգի տառանիշերի օգտագործումը տարբեր լեզուներով օրինաչափ երևույթ է եղել անցյալում: Այսպես, հայտնի է, որ եվրոպական ժողովուրդների մեծ մասն օգտագործել է լատինական այբուբենը՝ հարմարացնելով իր լեզվին: Մահմեդականությունը ընդունած արևելյան գրեթե բոլոր ժողովուրդները գործ են ածել արաբական գիրն իրենց լեզուներով:

Հին Արևելքում լայն գործածության մեջ գտնվող առաջին հնչյունական գիրը եղել է արամեականը: Գրի պատմության լավագիտակ մասնագետ Վ. Ա. Իստրինը, խոսելով արամեական գրի տարածման շրջանակների մասին, գրում է. «Արեմենյան Պարսկաստանում, պարսկական սեպագրության հետ, որը գործ էր ածվում պետական մոնոմենտալ արձանագրությունները գրելու համար, լայն տարածում ուներ արամեական գիրը, որն օգտագործվում էր գլխավորապես վարչատրնտեսական և առևտրական ասպարեզներում: Արեմենյան հարստության անկումից հետո սեպագրությունը մոռացության տրվեց և ողջ գրականությունը սկսեցին վարել արամեական գրի որոշ փոփոխված տարբերակով, այսպես կոչված՝ «պարսկա-արամեական» գրով: Հին պարսիկներից բացի այդ

գիրը գործ էր ածվում պարթևական, սողգեական, խորեզմական և պարսկական այլ լեզուներով»¹:

Արեմենյան պետության անկումից հետո, արամեական գրի հիման վրա մ. թ. ա. II դարում Պարսկաստանում առաջացավ փեհլևի-արշակունյան գիրը, իսկ մեր թվարկության III դարում սասանյան պարսկա-արամեական գրից առաջացավ փեհլևի, իսկ մեր թվարկության V—VI դարերում՝ Ավեստայի գիրը: Հայերը, որոնք զրադաշտական կրոնի հետևորդներ էին, բնական է, որ իրենց մեհյաններում պիտի օգտագործեին արամեական գիրը:

Անցյալում, երբ արամեական արձանագրություններ դեռ չէին հայտնաբերվել Հայաստանի տարածքում, կարող էր արամեական գրի գործածությունը հայ իրականության մեջ ինչ-որ չափով կասկածելի երևալ, իսկ այժմ, երբ գտնված են շուրջ տասը արձանագրություն, այլևս կասկածի տեղ չի մնում:

Արամեական գրի գործածությունը Հայաստանում վերացական ենթադրություն չէ այլևս, այլ կոնկրետ փաստ. այն բանավեճի խնդիր այլևս չի կարող: Արձանագրությունների մեջ, բարեբախտաբար, հիշվում են հայոց Արտաշես (189—160) և Վաղարշակ (185—216) թագավորները², հետևապես արձանագրություններ օտարների կողմից գրված համարել չի կարելի: Վիճելի խնդիր չի կարող լինել նաև այն իրողությունը, որ հայերը, որպես զրադաշտական կրոնի հետևորդներ, գործ են ածել արամեական գիրը: Մեղ մնում է պարզել, թե հայերն ունեցե՞լ են արդյոք այլ տառանիշերով իրենց ազգային լեզվով գրված մատենագրություն, թե ոչ:

Արամեական արձանագրությունները, դժբախտաբար, շատ են խաթարված, տառանիշերի մի մասն եղծված և քիչ բառանյութ կա, ուստի մեծ ձգվածությամբ է հնարավոր լինում վերականգնել նրանց բովանդակությունը: Արձանագրությունների մեջ գործածված անուններից ուշագրավ են «Րտաշես» և «Րեվանդական» անունները, որոնք հայկական բարբառային ձև ունեն: Մենք, որոշ վերապահությամբ, ուզում ենք

¹ В. А. Истрин, Развитие письма, էջ 228:

² А. Г. Периханян, Армянская надпись из Гарни, (ՊՔԷ, 1965, № 4, էջ 123—128):

բաժանել Կ. Տրևերի հայտնած կարծիքը այն մասին, որ Հայաստանում գտնված արամեական արձանագրությունների վերծանությունները չի կարելի դեռ ավարտված համարել: Բավականին անելիքներ կան որոշ բառերի հայերեն լեզվով գրված լինել-չլինելը պարզելու ուղղությամբ:

Կ. Վ. Տրևերը հավանական է համարում, որ արամեական լեզուն կարող էր շարունակվել և քաղաքացիություն ստանալ Հայաստանում մինչև մեր թվարկության երկրորդ դարը: «Մենք վճռական տվյալներ չունենք,— գրել է նա,— ենթադրելու համար, որ մեր թվարկության երկրորդ դարում կարող էր գործածություն մեջ գտնվել արամեական լեզուն: Սևմական լեզվի կառուցվածքը այնքան է տարբերվում հին հայկական լեզվից, որ դժվար է ենթադրել նրա տարածման հնարավորությունն այն երկրի բնակչության մեջ, որի համար փորագրված է հիշատակության կամ սահմանային նպատակով գրված այդ հուշարձանը: Սակայն մենք որոշակի տեղեկություններ ունենք, որոնք վկայում են, որ հայերը, սեփական այբուբեն չունենալու պատճառով, գործ են ածել արամեական, հունական և փեհլեի (այսինքն՝ հարմարեցված նույն արամեականը) գրերը մինչև IV դարը, երբ վերջնականապես ստեղծվեց և գործածության մեջ դրվեց հայկական այբուբենը»¹:

Հայտնի է, որ Հայաստանը Աքեմենյան գերիշխանության տակ է գտնվել մ. թ. ա. 550—334 թթ.: Եթե Աքեմենյանների տիրապետության տակ գտնվող բոլոր ժողովուրդներն օգտագործել են արամեական գիրը, հիմք չունենք կասկածելու, որ հայերը բացառություն են կազմել:

«Զպետք է կասկածել այն բանում,— գրել է Գ. Սարգսյանը,— որ Աքեմենյան պետության գրասենյակներում ընդունված արամեական լեզուն, գրության հետ միասին, գործ է ածվել նաև Հայաստանում մ. թ. ա. VI—IV դարերում, երբ նա գտնվել է Պարսկականի կազմում որպես սատրապություն»²:

𐎱	𐎲
𐎳	𐎴
𐎵	𐎶
𐎷	𐎸
𐎹	𐎺
𐎻	𐎼
𐎽	𐎾
𐎿	𐏀
𐏁	𐏂
𐏃	𐏄
𐏅	𐏆
𐏇	𐏈
𐏉	𐏊
𐏋	𐏌
𐏍	𐏎
𐏏	𐏐
𐏑	𐏒
𐏓	𐏔
𐏕	𐏖
𐏗	𐏘
𐏙	𐏚
𐏛	𐏜

𐎠	𐎡
𐎢	𐎣
𐎥	𐎦
𐎨	𐎩
𐎫	𐎬
𐎮	𐎯
𐎱	𐎲
𐎴	𐎵
𐎸	𐎹
𐎻	𐎼
𐎿	𐏀
𐏃	𐏄
𐏇	𐏈
𐏉	𐏊
𐏋	𐏌
𐏍	𐏎
𐏏	𐏐
𐏑	𐏒
𐏓	𐏔
𐏕	𐏖
𐏗	𐏘
𐏙	𐏚
𐏛	𐏜

Նկ. 21ա—21բ:

Առաջին շարքը նշանագրերն են, երկրորդը՝ հմայագրերը:

Անկախ նրանից, թե արձանագրությունն ինչ լեզվով է գրված եղել՝ հայերեն, թե արամեերեն, ենթադրվում է, որ հնչյունաբանորեն արամեերեն բառը կարդացվում էր հաղորդող ժողովրդի լեզվով: Տվյալ դեպքում մենք, հավանաբար, գործ ունենք գրի պատմության մեջ հայտնի «հետերիոգրամայի» կամ «պսևդոգրամայի» հետ, որը մ. թ. IV դարի կապակցությամբ առաջ է քաշել Գ. Սարգսյանը:


Հետերիոգրամա է կոչվում գրության այն տեսակը, երբ մի ժողովրդի ստեղծած գիրը փոխ է առնվում և օգտագործվում մեկ այլ ժողովրդի կողմից այնպես, որ փոխառնող այդ ժողովուրդը պահում է բառերի տառագծությունը, բայց այն կարդում է ոչ թե ըստ հնչյունական արժեքի, այլ՝ իմաստի: Պարսիկներն արամեացիներից փոխառնելով նրանց գիրը, այն

¹ К. В. Тревер, *նշված աշխատությունը*, էջ 171—172:

² Г. Саркисян, *К предыстории армянской письменности*, էջ 2:

հարմարեցրին և սկսեցին կարդալ իրենց լեզվով: Այսպես, օրինակ, արամեերեն MLK (թագավոր) բառը կարդում էին Sah, որն ունի դարձյալ թագավոր իմաստը, կամ HWH (ուտեի) արամեերեն բառը կարդում էին ast, որը դարձյալ ունեւր նույն «ուտեի» նշանակութունը:

Գրի պատմության մի այլ մասնագետ՝ Չ. Լոուկոտկան ևս, խոսելով Աքեմենյան պետության մեջ արամեական գրի օգտագործման ձևի մասին, դարձյալ առաջ է քաշել հետերիոգրամայի փաստը. «Աքեմենյան դինաստիայի անկումից հետո, սեպագիրը վերջնականապես մոռացվեց և ամբողջ պարսկերեն գրագրութունն սկսեց կատարվել բացառապես արամեական գրով: Այսպես առաջացավ պարսկա-արամեական գիրը, որը բուն արամեական գրից տարբերվում է որոշ առանձնահատկութուններով. օրինակ, գաղափարագրի հետ մեկտեղ, որ պահպանվել էին մի շարք դեպքերում, օգտվում էին հնչյունական գրից: Հնչյունաբանորեն հաղորդված արամեերեն բառը պարսկական տեքստում կարդում էին պարսկերեն»¹:



Նկ. № 22. Արտաշես I-ի արամեական արձանագրութունը:

Նույն կարծիքն ունի նաև Գրինգերը: Հետերիոգրամայի ժամանակ, գրում է նա. «Երբեմն դժվար է լինում պարզել քննարկի լեզուն, որովհետև այն ամբողջապես ծածկագրված է լինում արամեական հետերիոգրամայով: Դրա հետևանքով առանձին բնագրերի վրա կարելի է նայել ինչպես արամեական գրության, այնպես և հետերիոգրամայի: Միայն բառաշարքի միջոցով, եթե այն հատուկ չէ արամեականին, կարելի է լինում ճանաչել նրա հետերիոգրամա հանդիսանալը: (Այդպիսիներից են Փոքր Ասիայի որոշ արձանագրութուններ, Արմազի արձանագրութունը Վրաստանում և Սևանի լճի արձանագրութունը՝ Հայաստանում)»¹:

Հետերիոգրամայի հարցը, կապված Հայաստանում գտնված արամեերեն գրության հետ, առաջ է քաշել նաև արամեագետ Ա. Յա. Բորիսովը: Արտաշես թագավորի արամեական արձանագրության վերծանության հիման վրա նա հանգել է հետևյալ եզրակացությանը. «Եթե ընդունենք, որ արձանագրության շորորդ տողը պարունակում է ոչ թե արամեերեն, այլ հայերեն, պարսկերեն կամ ինչ-որ մի այլ լեզվով բնագիր, այն ժամանակ հասկանալի կլինի բացատրել այն օրինազանցութունը, որը թույլ է տրված հակառակ արամեական քերականության, որը նշված է մեր կողմից բնագրի երկրորդ տողում: Արամեերեն բառերը, որոնք նախկին վիճագրության ավանդույթի մնացորդներն են, պահվել են՝ թագավորի անվանը և տիտղոսին ավելի հանդիսավորութուն տալու նպատակով, ճեարավոր է, սակայն, ընդունել ճախ որպես հետերիոգրամա (ընդգծումը մերն է— Ա. Ա.)... Պատմականորեն լիովին հնարավոր է ենթադրել, որ հայկական թագավորները ևս, արևելյան հելլենիստական մյուս կառավարիչների նման, դրամի վրա գործածելով հունական տառանիշեր, միաժամանակ ներքին կարիքների համար գործ էին ածում կամ փորձում էին գործածել արամեական գիրը՝ հարմարեցնելով այն իրենց լեզվին, փոխառելով միաժամանակ մաքուր արամեական բառեր, օգտագործելով գաղափարագրութուն»²:

¹ Д. Дирингер, Алфавит, М., 1963, էջ 30 (Ի. Մ. Գյակոնովի առաջաբանը «Գրության մասին» վերնագրով):

² А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, («Вестник древней истории», 1946, № 2, էջ 103):

¹ Չ. Լոուկոտկա, Գրի զարգացումը, էջ 121:

Արամեական գրի լայն գործածության օգտին է խոսում 1909 թ. Կորդուբում սափորի մեջ գտնված մագաղաթի վրա գրված պատառիկը: Ուսումնասիրությունից պարզվել է, որ պատառիկի գիրը արամեերենի և պահլավերենի խառը մի գրություն է: Ուշագրավն այն է, որ մագաղաթը գրված է մ. թ. ա. առաջին դարում, այն ժամանակ, երբ Կորդուբը նվաճված էր Տիգրան Մեծի կողմից և գտնվում էր հայոց պետականության կազմում («Հանդես ամսօրեա», 1933, էջ 211):

Պրոֆ. Հ. Մարկվարտը ևս իր «Südarmerien und die Tigrisquellen» ուսումնասիրության մեջ մատնացույց է արել միջին պարսկերենի մի բանի հատվածներ, որոնք գրված են արամեերեն տառերով, բայց կարդացվում են պարսկերեն (էջ 536):

Արամեական գրի Հայաստանում գործածվելու մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Գիորգոս Սիցիլիացին մ. թ. ա. առաջին դ.: Նա հայտնում է, որ Եվմենեսի (մ. թ. ա. I դար) Հայաստանի սատրապ Օրոնտիասից (Երվանդից) ըստացած կեղծ նամակը գրված էր սիրիական, այսինքն՝ արամեական տառանիշերով¹:



Նկ. № 23. Տրդատ Թագավորի հունարեն արձանագրությունը Գառնիում:

Հեթանոս Հայաստանում մշակութային կարևոր օջախները մեհյաններն էին: Այնտեղ աշխատող քրմական գրագետ խավի ձեռքում էր տեղական գիրը: Իրավացի է շՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը, երբ գրում է. «Մեհյանները և թրմական դասը իրենց ձեռքում էին կենտրոնացրել գիրը, զբաղանությունը, դպրոցն ու կրթությունը, քաղաքացիական ակտերի (ծնունդ, ամուսնություն, ընտանիք և ընտանեական հարաբերություններ) կարգավորումն ու տնօրինումը, օրենքների սահմանումը, դատական իրավավարությունը, գուշակությունն ու աստվածների առջև բարեխոսությունը, մի խոսքով, ողջ հոգևոր կյանքը»¹:

Ո՞րն էր այն գիրը, որն օգտագործում էին հայ քրմերը ուսուցանելու և գրականություն ստեղծելու նպատակով: Եթե Արամեայան ողջ տերության մեջ գործածական գիրը եղել է արամեերենը, որը և, ինչպես տեսանք, գործածության մեջ է եղել նաև Հայաստանում, կասկածելու հիմքեր չունենք, որ մեհենական գիրը ևս պիտի լիներ արամեականը:

Մե՞նք գտնում ենք, որ արամեական այդ գիրն է, որ դարե շարունակ գործածության մեջ է եղել հայկական մեհյաններում: Արամեական այդ գրով են գրված եղել այն աշխատությունները, որոնց մասին վկայություններ կան հայ մատենագրության մեջ: Այդ գրով է գրված եղել Գառնադյաց Անիի արխիվում հավաքված նախամաշտոցյան մատենագրությունը: Վերջապես, այդ գրի փշրանկներից են դանիելյան գրերը, որոնք երևալ են IV դարում Բիստոնեական Հայաստանում: Այդ մասին խոսք կլինի ստորև:

Արտաշեսյան հզոր պետականության շրջանում, երբ հելլենիստական մշակույթը լայն տարածքով ծավալվեց Հայաստանում, արամեական գրից բացի Հայաստանում, գլխավորապես պետական պաշտոնական շրջաններում, սկսեցին գործածել նաև հունական տառանիշերը հայերեն գրելու համար:

Հունական տառանիշերով ու լեզվով Հայաստանի տարածքում գտնված են շուրջ տասը արձանագրություններ, որոնց ժամանակը ձգվում է մ. թ. ա. I դարից մինչև մ. թ. II դարը,

¹ Диодор Сицилийский, գիրք XIX, գլ. 23:

¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 906:

այլ խոսքով՝ ընդգրկում է Հայոց Արտաշեսյան և Արշակունյաց հարստութեան ժամանակները:

Արտաշեսյան հարստութեան ժամանակաշրջանում Արտաշատը և Տիգրանակերտը դարձան հելլենիստական անտիկ մշակույթի խոշոր կենտրոններ: Պատահական չէ, որ անտիկ աշխարհի փառաբանված այնպիսի գիտնական, ինչպիսին Ամֆիկրատես Աթենացին էր, իր ստեղծագործական աշխատանքի համար հարմար վայր էր ընտրել Հայաստանը: Նա Հայաստանում է գրել «Մեծ մարդկանց մասին» խորագրով իր նշանավոր աշխատությունը: Հայաստանում է ապրել և ստեղծագործել հույն նշանավոր փիլիսոփա, հոեոտոր և պատմագիր Մետրոգորոս Սկեպտացին, որը գրել է Տիգրան Երկրորդի ընդարձակ պատմությունը և «Կենդանիների բանականությունը» խորագրով փիլիսոփայական մի աշխատություն: Այդ ստեղծագործությունը ըստ Փիլոն Աղեքսանդրացու տեղեկության, թարգմանված է եղել հայերեն: Ըստ Պլուտարքոսի տեղեկության, Արտավազդ Հայոց թագավորը հունարեն լեզվով գրել է ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը ծանոթ են եղել հոմեոսիցներին մինչև իսկ Պլուտարքոսի ժամանակ: Հայոց Սոյեմոս—Տիգրան թագավորի հրամանով մանկավարժական աշխատանքներով զբաղվելու համար Հայաստան է եկել հայտնի հոեոտոր, գրող և մանկավարժ Յամբոլիքոս Բարելոնացին: Նա գրել է 35 հատորանոց «Բարելոնիկա» պատմավիպական երկը, որից որոշ հատվածներ հասել են մեզ: Ըստ Պլուտարքոսի տեղեկության, Արտաշատում գործել է թատրոն, ուր մ. թ. ա. 53-ին Կրասոսի դեմ տարած հաղթանակի առթիվ ներկայացվել է Եվրիպիդեսի «Բաբոսուհիներ» ողբերգությունը: Հնարավոր է արդյոք, որ զարգացման նման մակարդակի վրա գտնված ժողովուրդը լիներ անզրագետ և շունենար իր գիրը, թեկուզ և այլ ժողովուրդների այբուբենների տառանիշերով: Հայկական արքունի ազնվականությունը, անշուշտ, հետևում էր իր ժամանակի հելլենիստական ավանդույթին, դրսի աշխարհի հետ վարած դիվանագիտական բանակցությունները վարում էր հունարեն և արամեերեն լեզուներով, արքունիքում գործ էր անում արամեական և հունական գիրն ու լեզուն, սակայն այդ օտար լեզուներով արքունիքը չէր կարող հարաբերությունների մեջ

մտնել իր բուն ժողովրդի հետ, որոնց համար հունարենը կամ արամեերենը անծանոթ լեզուներ էին:

Հին հայկական հզոր պետականություն և հեթանոսական զարգացած մշակույթ ունենալու իրողությունը, ի դեպ, շնորհիվ նաև նախամաշտոցյան հայոց գրի ու գրականության գոյությունը մերժող գիտնականները, սակայն նրանք այդ կապում են ոչ թե հայոց գրական, այլ խոսակցական լեզվի և բանահյուսության հետ: Ուշագրավ է էդ. Աղայանի կարծիքն այդ մասին. «Պատմությունից հայտնի է,— գրում է նա,— որ հայ ժողովուրդը ժառանգեց ուրարտական քաղաքակրթությունը հենց իբրև ժողովուրդ կազմավորվելու պրոցեսում ստրկատիրական հասարակության սաղմնավորման ու կազմավորման դարաշրջանում: Այդ նույն պրոցեսում նա պատմական իրադարձությունների բերումով մտավ հունական, հոմեոսական և պարսկական քաղաքակրթությունների ոլորտի մեջ և, բնականաբար, շատ բան յուրացրեց դրանից: Ստեղծելով իր պետականությունը՝ Երվանդունիների, ապա և՛ Արտաշեսյան և Արշակունի թագավորական հարստությունները, մի կողմից էլ ավելի մեծ շահով հաղորդակից եղավ այդ քաղաքակրթություններին, մյուս կողմից՝ իր ներքին պատմական զարգացումով, տնտեսական ու սոցիալ-քաղաքական մակարդակով կանգնեց այդ ժողովուրդների կողքին՝ հավասար մակարդակի վրա: Այդ բոլորը բնականաբար, զարգացրին հայ ժողովրդի լեզուն, զարգացրին ոչ թե գրական մշակումով, այլ բանավոր հաղորդակցման պրոցեսում» (էջ 105—106): էդ. Աղայանի ասածից հետևում է, որ հայերը յուրացրին ուրարտական քաղաքակրթությունը, այդ թվում՝ նաև նրանց գիրը, մտան հելլենիստական մշակույթի ոլորտը, հաղորդակից դարձան ժամանակի քաղաքակրթությանը, կանգնեցին հարևան ժողովուրդների բարձր մակարդակին հավասար, բայց գիր շունենացան:

Նախամաշտոցյան գրի ժխտողներից ոմանք առաջ են քաշել մաշտոցյան գրերից առաջ հայոց «բանավոր գրականություն» գոյությունը տեսությունը. հայ ժողովուրդը, ասում են նրանք, հեթանոսական շրջանում ունեցել է բանավոր զարգացած գրականություն: Դրանով էլ պետք է բացատրել V

գարում հայ մատենագրության մեջ օգտագործված լեզվի բարձր զարգացածությունը:

Այդ տեսությունն անընդունելի է, քանի որ այն, ինչ չի գրվել, գրականություն չէ, այլ բանահյուսություն, իսկ նման բանահյուսություն ունեցել են անցյալում գիր շունեցող շատ ժողովուրդներ՝ քրդերը, լազերը, գնչուները և ուրիշներ, բայց նրանցից ոչ մեկը հավանություն չունի ասելու, որ ինքը գիր ու գրականություն է ունեցել:

Պետք է նկատի ունենալ նաև, որ լայնածավալ մի այնպիսի երկիր, ինչպիսին Հայաստանն էր, անկարելի էր առանց գրի և գրականության կառավարել, կազմակերպել հարկերի գանձում, բանակներին կռիվ առաջնորդել, երկիրը կառավարելու համար ներքին օրենսգրքեր շունենալ, հարաբերություններ պահպանել նախարարների հետ, արքունական գրագրություն վարել և այլն:

Հեթանոսական հայկական գրի ու գրականության գոյության ժխտողները Արտաշեսյան թագավորների՝ Տիգրանի, Արտավազգի և մյուսների, հունարեն արձանագրությամբ կտրված դրամները հայ հեթանոսական գրի և գրականության գոյությունը ժխտելու փաստ են դարձնում: Եթե հայերը գիր են ունեցել, ասում են նրանք, ապա ինչո՞ւ են հայ թագավորները հունարենով կտրել իրենց դրամները: Նրանք մոռանում են, որ հայկական դրամները շրջանառության մեջ էին գրվում ոչ մայն Հայաստանի տարածքում, այլև հելլենիստական ոլորտի մեջ գտնվող բոլոր երկրներում: Այն էլ ասենք, որ այդ ժամանակ դրամները հունարեն են կտրել նաև Պարսկաստանում, թեև այնտեղ գոյություն ունեի ինքնուրույն գիր, որը կասկածանքի ենթակա չէ: Այդ ժամանակ դրամները հունարեն էին կտրում Կապադովկիայում, Կիլիկիայում, Խերսոնեսում և հելլենիստական շրջապատույթի մեջ մտած բոլոր մյուս երկրներում: Բագրատունիների ժամանակ Հայաստանում դրամները կտրվել են արաբական լեզվով և գրով, մի՞թե դա հիմք կարող է տալ ասելու համար, թե հայերն այդ ժամանակ չեն ունեցել գիր ու գրականություն:

Նվ այսպես, վերը բերված փաստերը մեզ հիմք են տալիս ասելու, որ Արտաշեսյան և Արշակունյաց պետության մեջ գործածական գրերը եղել են արամեական և հունական գր-

րերը: Այդ համակարգի տառանիշերը օգտագործվել է հայերեն գրելու համար: Հայկական մեհյաններում օգտագործված գիրը եղել է արամեականը:

Նախամաշտոցյան շրջանում օտարալեզու և օտարագիր մատենագրության գոյությունն ընդունում են նաև ժխտող գիտնականները, սակայն նրանք մերժում են այլ համակարգի տառանիշերով հայալեզու գրականություն ստեղծելու հնարավորությունը:

Նախամաշտոցյան շրջանում հայալեզու մատենագրության հարցը ըստ էության քննության է առել ՇՍՄ ԳԱ թղթակից անդամ Կ. Վ. Տրևերը իր «Очерки по истории культуры древней Армении» արժեքավոր աշխատության մեջ և եկել հետևյալ կարծիքին. «Քանի որ հայերը մինչև IV դարի վերջը չունեին իրենց այբուբենը, ուստի հարկադրված են եղել օգտվել օտար գրերից՝ հարևան այն ժողովուրդների այբուբեններից, որոնց հետ նրանք քաղաքական կամ կուլտուրական կապերի մեջ են գտնվել: Հայերի մոտ օգտագործվող այդ գրերն են հանդիսացել սկզբում արամեականը, իսկ հետո՝ հունականը և պարթևականը, այսինքն՝ պարթև-փեհլևական լեզվով օգտագործվող նույն արամեականը: Արամեական այդ գրի հիման վրա հատկապես հիմնավորվեց հայկական գիրը» (էջ 99):

Երկրորդ անգամ Տրևերն այդ հարցին անդրադարձել է արամեական գրի Հայաստանում գործածվելու կապակցությամբ և նորից պնդել. «Մեզ մոտ կան որոշակի տվյալներ, որոնք վկայում են, որ հայերը մինչև IV դարը, մինչև հայկական այբուբենի ստեղծումը և գործածության մեջ դնելը չունենալով սեպհական այբուբեն, օգտագործել են արամեական, հունական և փեհլևի այսինքն՝ նույն արամեականին հարմարեցված գրերը» (էջ 164):

Սեփական գրի բացակայության ժամանակ, թե ինչո՞ւ հայերը պիտի օտար գրեր գործածեին, այդ մասին ուշադրավ բացատրություն է տվել Վ. Բրյուսովը. «Հնարավոր է ենթադրել, — գրել է նա, — որ այն գիրը, որով հայկական թագավորները փոխհարաբերությունների մեջ էին մտնում այլ պետությունների հետ, որոնց մասին տեղեկություններ են պահպանվել ինչպես հայ, այնպես և հռոմեացի պատմիչների

մոտ, գրվել են հունարեն, պարսկերեն կամ ասորերեն: Բայց հազիվ թե հայ թագավորները կարող էին օտար լեզուներով գիմել իրենց հպատակներին կամ գրել իրենց նախարարներին: Մենք գիտենք, որ Հայաստանում կազմակերպված է եղել ուղիղ դատավարություն, ժամանակ առ ժամանակ կատարվել են բնակչության մարդահամարներ: Նորից՝ դժվար է ենթադրել, որ այս բոլոր դեպքերում գիմում էին օտար լեզուներին: Բնական է մտածել, որ հայերեն գրելու համար օգտագործում էին այլ լեզուների տառանիշեր (ընդգծումը մերն է— Ա. Ա.)¹:

Ի դեպ, «Նախամեսրոպյան հայկական գրականության հարցը» վերնագրով մեր հոդվածում, գաղափարագրերի օգտագործման ճիշտ սահմանը շնչելու հետևանքով, այնպես է ստացվել, որ կարծես մենք խնդիր ենք ունեցել ապացուցել, թե արամեական և հունական հնչյունական գրերին զուգընթաց Հայաստանում շարունակել են գաղափարագրության գործածությունը մինչև III դարի վերջերը: Իրողությունն այն է, որ Արեմենյան շրջանում՝ արամեական գիրը գործածության մեջ մտնելուց հետո, գաղափարագրությունը դուրս է մղվել, իսկ հետագայում՝ հելլենիզմի ժամանակ, արամեականին զուգընթաց գործածվել է նաև հունական գիրը:

Օտար տառանիշերով հայերեն գրելու հնարավորությունը պարզելու տեսակյունից լուսարանման կարոտ է այն հարցը, թե այլ համակարգի տառանիշերով հնարավո՞ր է արդյոք գրել հայերեն:

Նախամաշտոցյան գիրը ժխտող գիտնականները գտնում են, որ այլ լեզուների այբուբեններով հայալեզու գրականություն ստեղծելն անկարելի է:

Եթե անցյալում կարելի էր վիճել այլ տառանիշերով հայերեն գրել-չգրելու հնարավորության մասին, ապա այժմ, երբ մեզ հայտնի են հունարեն տառերով ետմաշտոցյան շրջանում. հայերեն գրված մի քանի բնագրեր, նման վիճարանությունը թվում է անտեղի:

Այլ տառանիշերով հայերեն գրելու կարելիությունն ապա-

ցուցելու նպատակով «Հայոց գիր և գրչություն» գրքում մենք հրատարակել ենք հունատառ-հայերեն գրված շորս բնագիր: Անհրաժեշտ ենք համարում այստեղ ևս բերել դրանք իրենց վերծանությունների հետ միասին:

Սիսիանի շրջանի Սյունավանի տաճարի հարավային պատի արևմտյան մասի կենտրոնում, դրսից, Գրիգոր անունով մի նվիրատու իր անունը փորագրել է տվել հունատառ հայերենով.

ΕΣΤΡΕΓΟΡΓΡΕΞΗ

Երեք բառից բաղկացած այս արձանագրությունն առանց զժվարության վերծանվում է. «Յս Գրեգոր Գրեցի»¹: Բոլոր տառերն էլ հունարեն են, բացառությամբ «ց» տառի, որի համար օգտագործված է հայկական մեծատառ Յ-ն, իսկ «Ո»-ի համար օգտագործել են հունական Օ (օմիկրոն) տառը:

Վիմագրագետ Ս. Բարխուդարյանը գտնում է, որ Սյունավանի տաճարի արձանագրությունները, այդ թվում նաև հունատառ հայերենը, VI դարի են: Հայկական արձանագրությունների տառանիշերի հնագրական տվյալներով մենք ևս արձանագրությունը համարել ենք VI դարի:

Սյունավանի տաճարի VI դարի հունատառ-հայերեն այդ արձանագրությունը ժամանակին հիմք է տվել մեզ հանգելու այն եզրակացության, որ եթե հունական ազդեցությունից շատ հեռու՝ Սյունյաց լեռնաշխարհում գտնվում էին մարդիկ, որոնք իրենց հայերեն խոսքը գրի էին առնում հունարեն տառերով, ապա այդ ավելի սովորական պետք է լիներ Հայաստանի այն երկրամասերում, ուր նկատելի էր հունական ազդեցությունը:

Հունատառ-հայերեն մի բնագիր հանդիպում է Երուսաղեմի մատենադարանի № 1280 ձեռագրում: Այն ընդօրինակված է 1284 թ. Ք Նահանգին Սիւնեաց և ի տէրութեան մեծաշուք

¹ Ս. Գ. Բարխուդարյան, Գիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 85: Տաճարի կառուցման ժամանակը քննարկված է Ս. Խ. Մնացականյանի «Սիսիանի տաճարը» հոդվածում: Նա ևս տաճարը համարում է VI դարի գործ: (Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» 1965, № 4, էջ 221—238):

¹ В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, т. 2, 48:

իշխանի այսմ գաւառի Տարասիճին»¹: Մյունյաց նահանգի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը թողել է հունատառ-հայերեն հետևյալ հիշատակագրությունը.

ΖCΤΕΦΑΝΩCΜΕΓΑΠΑΡΤ ΗΧΕΘΕΚ

Վերծանվում է «ՉՍտեփանոս մեղապարտ յիշեցէք»: Երեք բառից բաղկացած հայերենը հունարեն գրելու համար Օրբելյանը կատարել է հետևյալ փոփոխությունները. Ղ-ն տառադարձել է Դ-ի, Յ-ն՝ Հ-ի, Ք-ն՝ Կ-ի, է-ն՝ Ե-ի, Շ-ն՝ Խ-ի: Հունական «Քս»-ի գործածությունը «Շ»-ի. «էտա»-ի գործածությունը՝ «յի»-ի, տարօրինակ թող չթվա, քանի որ առաջինը հունարենում շուտ աված ապաթարց ընդունելիս, կարդացվում է «հե» այսպես, ἥλιος հելիոս (արև), իսկ երկրորդը օգտագործել են «Շ»-ի համար, ἄρτάξατα (Արտաշատ): Հունական այբուբենում պակասող հնչյունների փոխարեն, ինչպես տեսնում ենք, գործ են անում հունական նմանահնչյուն տառեր, իսկ «Յ» տառի փոխարեն օգտագործվել է հայկականը:

Քննարկվող հարցերի համար ավելի կարևոր է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1297 ձեռագրի հունատառ-հայերեն գրությունը: Այդ ձեռագիրը ընդօրինակված է Տփլիսի հայոց գրչության դպրոցում 1963 թվականին: Գրչագրի պատվիրատուն է Հովհան Որոտնեցին՝ Գլաձորի համալսարանի նշանավոր ուսուցչապետը, իսկ գրիչը՝ Հուսիկը:

Հունատառ-հայերեն այս բնագիրը մենք նախ հրատարակել ենք 1946 թվականին Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ» 23-րդ հատորում (էջ 451—460)՝ «Երուսաղեմի հունատառ-հայերեն ծածկագրի վերծանությունը» վերնագրով, ապա դրանից մի հատված գետեղել «Հայոց գիր և գրչություն» աշխատության մեջ (էջ 25), իսկ վերջերս բնագիրն ամբողջությամբ վերահրատարակել ենք «Հայկական ծածկագրության» մեջ (էջ 145): Բերում ենք այդ բնագրի գծանկարը.

ΣΑCΝΖΗΔΑΝΩΔΑΜΦΑΝΩΗΝΙΔΓΘΕΛ
ΝΗΔΑΝΖΔΜΕΝΔΙΝΙΔΓΘΟΙΘΗΝΑΡΔΒΙ
ΝΕΙΨΔΡΕ:ΠΡΦΕΛ ΜΗΤΕCΑΝΕΝΕΙ
ΜΗΤΝΩΔΕΕΝ:ΕΙΔΙΓΝΔΜΕΝΔΙΝΙΘΛ
ΕΙΧΔΑΜΡΕ:ΕΛΡΗΥΗΧΕC -- Այսպիսի
ացուցին նկարագրեալ այսպիսի ՏΔΡΕΩΗΦ
ΔΡΟΙΡCΗΡΑΙΔΦΗΚ:ΕΙΧΡΟΙΝCΔΧΕΦ
ԻΦΗΥΓΘΟΦ:ΟΡΨΔΡΗΝCԳΦΟΙΕΔΤΑ
ΚΨΛΗΝΗ:ΟΡԻΘΟΊCΕΡΜΔΝΕΛΩΚ
ԾՆCΚΕΡΑΗΡΕ:ΔΡΕΦΔΚΝΚΟΙΡΑΦΟΩԾ
ΔΦΕΕΙΟΩΜΤΑΝΕ:Թեղաիրեսընթերցիր և
թեպգէտյիմարեցիր:

նկ. № 25:

Հունատառ-հայերեն այս բնագիրը վերծանվում է.

«Վասն զի անձամբ անձին յաղթելն քան զամենայն յաղթութիւն առաջին եւ քաջ է»:

«Որիեւ: Մի տեսանեն անմիտք եւ ասեն եւ այդն ամենայն խուլ և համբ է»:

«Եւրիպիդես: Հարեցից արո[յ]րս իրաւացիկ եւ զգրունս ասեցից ի պղծաց»:

«Որ գրարինս գգուէ՝ ատակք լինի»:

«Որ ի ծով սերմանէ, զձուկնս կերակրէ»:

«Արեգակն կուրաց ոչ ծագէ եւ ոչ մտանէ»:

Տվյալ գրության մեջ հունական տառանիշերից օգտագործված են հետևյալները. Ա, Ե, Շ, Թ, Կ, Մ, Ն, Օ, Շ, Ք, Վ, Փ: Վերջին երկու տառանիշերը նման են նաև հայկական Ի և Փ

¹ Յուցակ ձեռագրած Երուսաղեմի, Հ. Գ, Երուսաղեմ, 1956, էջ 469.

տառերին, որոնք կարելի է նաև հայկական համարել: Ե -ն օգտագործված է հայկական Ե-ի և է-ի փոխարեն, իսկ Բ-ն՝ հայկական Բ-ի և Բ-ի: Հայկական այբուբենից օգտագործված են Բ, Գ, Խ, Ս, Ձ, Ջ, Ջ տառանիշերը: Լատինականից օգտագործված է ֆ տառը՝ հայկական Յ-ի փոխարեն: Բոլորովին նոր կամ զգալի փոփոխություններով ստեղծված են հետևյալ վեց նշանագրերը.

Ճ	Գ	Ջ	Վ
Ճ	Հ	Օ	Ց
Դ	Պ	Կ	ՌԻ

Նկ. № 26:

Նոր ստեղծված տառերից վեցը ոչ մի նմանություն չունեն հայկական տառաձևերին և ստեղծված են մտացածին ձևով:

Հունարեն տառերով գրելու մի այլ փորձ է կատարել XII դարի ժամանակագիր Սամուել Անեցին՝ Զմմառի հայկական գրչագրերի ժողովածուի № 98 ձեռագրում, որը պատմատու-մարագիտական բովանդակություն ունի և գրված է 1178 թվա-կանին: Դրա մի նմուշը հրատարակված է մեր «Հայկական ծածկագրություն» մեջ: Այդ բնագրում, ի տարբերություն նա-խորդների, Սամուել Անեցին օգտագործել է հունական այբու-բենի այլ ձևի տառանիշեր:

Նույն ձեռագրում տոմար ունեցող ժողովուրդների անուն-ները Սամուել Անեցին գրել է հունական տառանիշերով:

ՅՕԻԱԿԿԵ

Յոնաց է:

ԵԲԲԱԵԳՈԳԵ

Եբրահեցոց է:

ԱԾՈՐՈԳԵ

Ասորոց է:

ՆԱԿԵԹՈՐԱԳՈԳԵ

Մակեթոնացոց է:

ԱԹԵԻԱԳՈԳԵ

Աթենացոց է:

ԲՈՒԹԱՐՔՈԳՈԳԵ

Բութանացոց է:

ԿՅՍԱՏՈԿՈԳՈԳԵ

Կապատոկացոց է:

ԵԹԵՆՍՈԳՈԳԵ

Եթեոպացոց է:

Նկ. № 27

Այդ նույն ձեռագրում կան հունատառ-հայերեն այլ գրու-թյուններ ևս, որոնք ավելորդ ենք համարում մեջ բերել:

Առարկություններ են եղել, որ հունարեն տառանիշերով անկարելի է հայերեն գրել: Այդ պատճառաբանությունը ձիշտ չէ: Դժվար չէ այդ կարծիքի անհիմն լինելն ապացուցել դա-նիելյան գրերի գործածության հիման վրա: Դանիելյան գրե-րը, ինչպես հայտնի է, պակասավոր գրեր էին, բայց իրողու-թյուն է, որ այդ գրերով հայկական դպրոցներում պարապել են երկու տարի և այդ աշխատանքը ղեկավարելու համար Մաշտոցին ուսուցչապետի բարձր կոչում է շնորհվել: Այդ մա-սին Կարյունը հաղորդում է. «Եվ երբ նրանցից (աշակերտնե-րից) շատերը սովորեցին, ապա (թագավորը) հրամայեց ամեն տեղ նույն (նշանագրերով) կրթել, որով երանելին (այսինքն՝ Մաշտոցը) հասավ նույնիսկ վարդապետական (այսինքն՝ ու-սուցչություն) զեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի ու-սուցչությունն արեց» (էջ 45):

Երկու տարի պարապելուց հետո, շարունակում է Կար-յունը, երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն «հայերեն լեզվի սեղորաները-կապերն ամբողջությամբ արտա-հայտելու համար», ուստի որոշեցին սեփական ինքնուրույն գիր ստեղծել:

Կարո՞ղ էին պակասավոր այդ գրերով շարունակել աշխա-տանքը և քաղաքացիություն տալ դրան: Իհարկե կարող էին: Հ. Աճառյանը այդ ապացուցելու համար մատնացույց է անում ասորերեն, եբրայերեն, արաբերեն և նման այլ այբուբեններ, որոնք նրա ասելով. «Ահա այսքան դարեր ի վեր գործածվում են և ո՞վ գիտե որքա՞ն ժամանակ պիտի գործածվեն: Եթե այս պակասավոր այբուբենները կարողացան այսքան դարեր դի-մանալ, նույնը կարող էր լինել նաև դանիելյան այբուբենը»:

Դրա հիման վրա Աճառյանը գտնում է, որ դանիելյան

գրերի երկու տարվա փորձը ոչ թե սովեր է նետում Մաշտոցի վրա, այլ մեծ պատիվ է բերում, եթե, ասում է նա «պարսիկները, թուրքերը և այլն հազարամյա գործածությունից հետո, նորերս միայն զգացին իրենց այբուբենի պակասությունը և զարմանելու կարիքը: Իսկ եթե Մեսրոպը երկու տարուց կարողացավ զգալ, սրանից ավելի ի՞նչ պատիվ իրեն»¹:

Աճառյանի այս պնդումից որոշակի հետևում է, որ անհիմն են այլ տառանիշերով հայերն գրելու անկարելիությունը պընդող գիտնականները, այլ հարց է, որ Մաշտոցը և իր գործակիցները շեն ցանկացել շարունակել «մուրածո» գրերի գործածությունը և ստեղծել են հայոց լեզվին համապատասխանող ինքնատիպ այբուբեն:

Ուսումնասիրողներից ոմանք հնարավոր են համարում այլ այբուբենի տառանիշերով հայերեն գրելու հնարավորությունը մի պայմանով: Եթե պակասող հնչյունների համար նոր տառանիշեր ստեղծվի: Բարեբախտաբար, վերը բերված հունատառ-հայերեն արձանագրությունները հենց այնպիսիներից են, որոնց մեջ պակասող հնչյունների համար նոր տառանիշեր են ստեղծված եղել:

Այն պատճառարանությունները, որ եթե այլ համակարգի այբուբենը հարմարեցնեին հայոց լեզվին և հայերենում պակասող հնչյունների համար լրացուցիչ տառանիշեր ստեղծեին, այդ դեպքում մենք կունենայինք արդեն հայերեն այբուբեն, ճիշտ է: Սակայն այդ դեպքում կունենայինք ոչ թե հայկական ինքնուրույն տառանիշերով գրություն, ինչպիսին ստեղծել է Մաշտոցը, այլ օտար տառանիշերով հայոց գիր:

Հետաքրքիր է, Աղայանը, այնուամենայնիվ, քննության է առել այն հարցը, թե հայերը ինչ համակարգի տառեր կարող էին հարմարեցնել իրենց լեզվին, և եկել է այն ճիշտ հետևություն, որ նախամաշտոցյան շրջանում այդ պիտի լիներ արամեերենը, լատիներենը և հունարենը, իսկ շորրորդ դարում՝ հունարենը և ասորերենը: Այլ խոսքով ասած՝ ասել է այն, ինչ ասում ենք մենք:

Բերենք նրա հայտնած կարծիքն ամբողջությամբ. «Բայց ընդունենք, թե, այնուամենայնիվ, ինչ-որ մի այբուբեն վերափոխել ու հարմարեցրել էին հայերենին: Ո՞րը պետք է

¹ Հ. Անառյան, Հայոց գրերը: Երևան, 1968, էջ 114:

լիներ այդ այբուբենը. այս հարցին պատասխանելու համար պետք է ճիշտ որոշենք ժամանակաշրջանը: Եթե խոսքը վերաբերում է Արտաշեսյանների դարաշրջանին և, առհասարակ, մինչըրիստոնեական շրջանին, ապա այդպիսիք կարող էին լինել հունականը, լատինականը և պահլավա-արամեականը: Ասորականը բացառվում էր, որովհետև նա ծագել է մեր թրվարկությունից երկրորդ դարում: Գիտենք, որ Արտաշեսյանների ժամանակաշրջանի Հայաստանում և դրանից էլ առաջ ու հետո՝ մինչև երրորդ դարը, գերիշխում էր հելլենիստական բնույթի հայկական մշակույթը: Լեզվական տեսակետից էլ, ինչպես թույլ են տալիս մտածելու զոնե Արտաշեսյան մայրաքաղաքում ներկայացվող հունական ողբերգությունները, Արտավազդի՝ նույնպես հունարեն ստեղծագործությունները և մեզ հասած հունական արձանագրությունները (օր. Տրդատի հունարեն արձանագրությունը), հունարենը գերադասված էր զոնե պաշտոնական շրջաններում: Սակայն դա չէր բացառում պարսկերենի գործածությունը, մանավանդ մեհենական գրականության բնագավառում: Այս բոլորը խոսում են այն մասին, որ ընտրությունը պետք էր կատարել այս երկու (թեևրևս նաև արամեական) այբուբենների միջև» (էջ 214—216):

Աղայանը ոչ միայն ճիշտ ընտրություն է կատարում՝ պարզելու, թե ինչ համակարգի այբուբենի տառանիշեր կարող էին հարմարեցնել և օգտագործել, այլև դժվարություն չի տեսնում այդ անելու մեջ. «Իսկ այն հայերը, ովքեր պետք է որևէ այբուբեն հարմարեցնեին հայերենին,— գտնում է նա,— իր ժամանակի դարձացած ու հմուտ մտավորականները, հայկական առաջավոր գործիչները պետք է լինեին և ոչ թե գրից ու գրականությունից անտեղյակ մարդիկ»:

Նա նույնիսկ ամօթաբեր է համարում հակառակը մտածելն անգամ: Խոսքն ուղղելով հայագետներին, գրում է. «Ի՞նչ են կարծում մեր հայագետները. հունական, հռոմեական և ասորական մշակույթներին հաղորդակից և Հռոմի ու Պարսկաստանի հետ «ոտ մեկնող» հայերը մեծ դժվարություն պետք է կրեին անկատար այբուբենը կատարելագործելու և կատարելության հասցնելու համար: Ֆեոդալական պետականություն ունեցող հայ ժողովուրդը խեղճ փարսերի (զրադաշտական պարսիկների) շափ է՞լ չկար...»: Աղայանի պնդումները միանգամայն համոզիչ են:

Այսուհանդերձ, Ազգայանին տարակուսանք է պատճառում այն, որ եթե հայերը նման հարմարեցված գրեր ունենային, այդ դեպքում քրիստոնեությունը ինչու պետք է վերացներ: Պետք է ասել, որ այստեղ ճիշտ չի պատկերացումը մաշտոցյան լուսավորական շարժման և գրի ստեղծման շարժառիթների մասին: Գրի ստեղծումը փաստորեն պատկերված է որպես զուտ տեխնիկական գործ, նկատի չի առնված, որ Մաշտոցի և նրա շուրջը համախմբված հայրենասեր մտավորականների խնդիրն է եղել այլ պատճառներից բացի ձեռքազատվել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը սպառնացող բոլոր տեսակի մշակութային ազդեցություններից և ստեղծել ինքնուրույն գիր:

Հայաստանի բաժանումից հետո, ճիշտ է, ժամանակավորապես դադարեցին Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև սկսած արյունոտ պատերազմները, որից առաջին հերթին, ոտնակոխ էր լինում, ավերվում Հայաստանը: Սակայն այժմ նախկին մրցակից երկրները Հայաստանի նկատմամբ կիրառեցին ավելի վտանգավոր՝ հայ ժողովրդին ձուլելու քաղաքականություն: Բյուզանդիան և Պարսկաստանը սկսեցին եռանդուն ջանքեր գործադրել՝ վերջ դնելու նաև հայ ժողովրդի մշակութային ինքնուրույնությանը: Պարսկաստանն այդ քաղաքականությունը Հայաստանում արդյունավորելու համար շեշտը դնում էր զրադաշտական կրոնի վրա: Մի այլ վտանգ Հայաստանին սպառնում էր հարավից և արևմուտքից: Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո Հայաստանը ողողվել էր ասորի և հույն քաղաքիչներով, որոնք իրենց հետ բերում էին ո՛չ միայն քրիստոնեության գաղափարներ, այլև՝ իրենց մայրենի լեզուն, իրենց մշակույթը, որը պակաս վտանգավոր չէր Հայաստանի համար: Ազգային գիրն ու գրականությունը մի դեմք էր՝ կովելու պարսկական և բյուզանդական ձուլողական քաղաքականության դեմ և երաշխավոր միջոց՝ քաղաքականապես ջլատված, թուլացած Հայաստանի երկու մասերն իրար կապելու: Ահա թե ինչու հայրենասեր և հեռատես մտավորականները, Մաշտոցի գլխավորությամբ, այնքան հետևողականորեն նախանձախնդիր էին հայոց ինքնուրույն գրի ու գրականության ստեղծմանը:

Միսավանի տանաբի վրա Գրիգորի թողած հունատառ-հա-

յերեն արձանագրությունը, Ստեփանոս Օրբելյանի հունատառ-հայերեն հիշատակագրությունը և մյուսները գալիս են ապացուցելու, որ հայ մատենագրության մեջ փորձեր են արվել հունական տառանիշերը հարմարացնելու հայկական լեզվին: Արդ, եթե այդ արվել է մաշտոցյան գիրը ստեղծելուց հետո, որի կարիքը, իհարկե, չկար, բոլորովին հիմք չունենեմ մտածելու, որ նույնը չէին կարող անել հայկական գրի բացակայության ժամանակ:

Վերը բերված փաստերը մեզ լիովին իրավունք են տալիս պնդելու, որ եթե հայ արքունական պաշտոնական շրջաններում և ստրկատիրական վերնախավի մեջ օգտագործվել է հունական գիրը, ապա մեհայաններում շարունակվել է կիրառվել Արեմենյան ժամանակաշրջանից սկզբնավորվող արամեական գիրը: Ըստ որում, եթե դիվանագիտական հարաբերությունների համար օգտագործվել է հունական և արամեական գիրը և լեզուն, ապա ներքին կարիքների համար գործ են անվել հունական և արամեական տառանիշերը հայերեն գրելու համար:

5. ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳՐԻ ՄԱՍԻՆ

Մատենագրական այն տեղեկությունները, որոնց մասին պետք է խոսենք ստորև, հրատարակված են և քանիցս քննարկված ինչպես մեր, այնպես և այլ հեղինակների աշխատություններում: Սակայն այժմ անհրաժեշտ ենք համարում կրկին անդրադառնալ դրանց, որովհետև որոշ հայագետների կողմից տվյալ տեղեկությունների մեկնաբանությունները, մեր կարծիքով, տարվում է միակողմանի:

Հեթանոսական Հայաստանի գրի ու մատենագրության հարցը մեծապես կապված է մեհենական գրավոր մշակույթի հետ: Այլ ժողովուրդների պատմությունից գիտենք, որ մեհյանները կրոնական կենտրոններ լինելուց բացի, եղել են նաև մշակույթի օջախներ, հիմք շունենք մտածելու, որ այդպիսին չեն եղել նաև Հայաստանի մեհյանները: Անկարելի է, որ քրմական դասն իր ծիսակատարությունների և մեհենական արարողությունների համար շունենար հատուկ մատյաններ, տոների ժամանակները որոշելու համար տոմարական օրացույց-ուղեցույցներ, դատավարությունը վարելու համար օրենսգրքեր. պետք է նկատի ունենալ, որ քրմական դասի ձևերում էր դատական իրավունքը:

Նախամաշտոցյան հայ գիրն ու մատենագրությունը ժըխտող գիտնականներն ընդունում են, որ հայկական մեհյանները գիր ունեցել են, սակայն գտնում են, որ այդ գիրը եղել է սիմվոլիկ նշաններ՝ կրոնական արարողությունների ժամանակ որոշ բանաձևեր, մաղթանքներ, անեծքներ, օրհնանքներ գրելու, բանաձևելու համար, որ նրանցով անկարելի էր կապակցված մտքեր գրել և արտահայտվել: Ենթադրություններ

են եղել նաև, որ հմայիլներում գործածված նշանագրերը մեհենական սիմվոլիկ այդ նշաններն են:

Մեհենական գործածվող գրությունը սիմվոլիկ նշաններ ընդունելը բացահայտ անհիմն է, քանի որ սիմվոլիկ այդ նշաններով չէր կարելի ոչ գրել պատմական ծավալուն աշխատություն և ոչ էլ նրանցից ստեղծել ամբողջ մեհենական արխիվ, ինչպիսին եղել է Հայաստանում:

Մեհենական մատենագրության մասին ուշագրավ մի տեղեկություն է հաղորդում Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ: Խոսելով Արտաշես Թագավորի դործունեության մասին, իրեն հատուկ բարեխղճությամբ նա մատնացույց է անում իր օգտագործած սկզբնաղբյուրները, որոնց մեջ նաև Օղյուպ կամ Օղյումպ քրմի աշխատությունը: Այդ մասին նա գրել է. «Այս բանը մեզ հաստատապես պատմում է Անիի Ուղյումպ բուրմը, որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ նրանք պատմելու ենք, որին վկայում են նաև պարսից մատյանները և հայոց վիպասանների երգերը» (էջ 182):

Օղյումպ քրմի անձնավորության և նրա գրած մեհենական պատմությունների հարցի ուսումնասիրությամբ վերջերս զբաղվեց Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Սարգսյանը: Նա մասնրամասն վերլուծության ենթարկելով Խորենացու մոտ Արտաշեսի թագավորական շրջանին վերաբերող բոլոր տեղեկությունները, և խոսնված նյութերի միջից առանձնացնելով նրանք, որոնք պատմահայրը վերցրել է Օղյումպ քրմից, ապա այդ տեղեկությունների հավաստիությունը ստուգելու նպատակով համեմատության մեջ դնելով Արտաշեսի մասին հույն աշխարհագիր Ստրաբոնի հաղորդած տեղեկությունների հետ, պարզել է, որ Խորենացու Օղյումպ քրմից վերցված տեղեկությունները հավաստի են և համապատասխանում են Ստրաբոնի հաղորդած տեղեկություններին: Նա հնարավոր է համարել անգամ, որ Օղյումպ քրմը և Ստրաբոնը օգտված լինեն մի ընդհանուր աղբյուրից: «Անկախ այդ աղբյուրատական կապերի և առնչությունների հավաստիությունից, կամ անհավաստիությունից, — եզրակացրել է նա, — փաստական նյութերով գծագրվում է նախամեսրոպյան պատմագրության արգասիքներից մեկը՝ «մեհենական պատմությունների» մի նը-

մուշ, Օղջումպ քրմի՝ Արտաշես Ա-ին նվիրված մի պատմական երկ, որ գրվել էր հավաստի աղբյուրների հիման վրա, և այնուհետև աղբյուր ծառայեց Մովսես Խորենացուն» (ՊԲՀ, 1969, № 1, էջ 120):

Այսպիսով, հայկական մեհյաններում ստեղծվել է մատենագրություն, եղել են արխիվներ, նույնիսկ՝ գործել են պատմագրող քրմեր: Այսուհանդերձ, Խորենացու վերջը բերված տեղեկություններից չի երևում, թե Անիի մեհյանի Օղջումպ քուրմը ինչ լեզվով և ինչ գրով է գրել: Այս անորոշությունը, բարեբախտաբար, հնարավոր է պարզել Խորենացու մեկ այլ տեղեկությամբ՝ կապված վաղ քրիստոնեական ասորի քարոզիչ Բարդաժանի գործունեության հետ: Ըստ Խորենացու, Բարդաժանը վերջին Անտոնինոսի ժամանակ (Անտոնինոս Կամոգոսի՝ 181—194 թթ.) գալիս է Հայաստան քրիստոնեություն տարածելու, սակայն հաջողություն չի ունենում: Օգտագործելով առիթը, նա մտնում է Գարանաղյաց գավառի Անիի մեհենական արխիվը, պատմական մի աշխատություն է թարգմանում ասորերեն, իսկ հետագայում նրա թարգմանած և մշակած ասորերենը թարգմանվում է հունարեն, որը ևս աղբյուր է ծառայել Խորենացուն: Այդ մասին պատմահայրը գրում է. «Մեկ այս բաները պատմում է Բարդաժանը, որ Եղեսիայից էր: Որովհետև նա վերջին Անտոնինոսի ժամանակ պատմագիր հանդիսացավ... նա մեր կողմերն եկավ, հուսալով թե կըկարողանա որևէ հետևող գտնել վայրենի հեթանոսների մեջ: Քայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարգաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը, նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը թարգմանեց ասորերենի և ապա նրանից՝ հունարենի» (էջ 201):

Բարդաժան կամ Բարդաժանը վաղ քրիստոնեական աշխարհի ընկնող ասորի եկեղեցական գործիչներից է, Եղեսիայի Աբգար Մանու թագավորի ազգականը և նրան քրիստոնյա դարձնողը: Նա Եղեսիայում դպրոց է հիմնել և ղգալի գործ կատարել ասորական մատենագրության ստեղծման ուղղությամբ, սակայն մեղադրվել է աղանդավորության մեջ: Համարվում է ասորական ինքնուրույն գրականության հիմնադիրը:

Նախամաշտոցյան հայ գիրն ու մատենագրությունը ժրխ-

տող գիտնականները ընդունում են, որ Գարանաղյաց Անիում իրոք եղել է արխիվ և այդ արխիվում գտնվել է պատմական աշխատություն, որից օգտվել է Բարդաժանը, սակայն հրաժարվում են ընդունել, որ այդ արխիվում գտնված մատենագրությունը հայերեն է եղել: Նրանց կարծիքով այն եղել է պարսկերեն:

Մեհենական մատենագրության հարցը՝ կապված Բարդաժանի օգտագործած սկզբնաղբյուրների հետ, քննարկման խնդիր է դարձել Գ. Սարգսյանի մոտ: Հիմնվելով պատմահոր տեղեկության վրա, նա հնարավոր է համարում, որ մեհենական մատենագրության լեզուն եղած լինի հայերեն: «Առանձնահատուկ ուշադրության է արժանի Բարդաժանի կապակցությամբ «մեհենական պատմությունների» լեզվի մասին արված Խորենացու ցուցումը,— գրում է նա:— Այս հարցը, անշուշտ, նախամաշտոցյան շրջանի մշակույթի կարևորագույն խնդիրների թվին է պատկանում և առանձին ուսումնասիրություններ է պահանջում, որոնք չեն կարող տեղավորվել ներկա հոդվածի շրջանակներում: Նշենք միայն, որ Խորենացու ցուցմամբ, որպես «մեհենական պատմությունների» սկզբնագրի լեզու, բացառվում են հունարենն ու ասորերենը, և հաստատվում է, ըստ երևույթին, հայերենը: Նման անսովոր դրույթում իրականում աներևակայելի բան չկա, եթե գրված հայերենի օգտագործման ոլորտը նախամեսոպոլյան շրջանում սահմանափակված համարենք միմիայն մեհյաններով ու քրմության միջավայրով»¹:

Գ. Սարգսյանը նույն խնդրին անդրադարձել է «Գրական թերթի» 1970 թ. հունիսի 26-ի համարում հրատարակած «Նախամեսոպոլյան շրջանի հայ պատմությունը» հոդվածում: Խոսելով մեհենական մատենագրության լեզվի մասին, գրել է. «Ի՞նչ լեզվով է գրվել «Մեհենական պատմությունը»: Այս հարցին ստույգ պատասխան տալու համար դեռևս բավարար նյութեր չկան: Հավանական լեզուներն են հունարենը կամ հայերենը: Վերջինի դեպքում «Պատմությունը» պետք է զբրված լինի քրմության նեղ ոլորտում ընդունված ինչ-որ նշանագրերով: Համենայն դեպս, որոշ առկա տվյալներ թույլ չեն

¹ Գ. Խ. Սարգսյան, Նախամեսոպոլյան շրջանի պատմագրությունը. («Պատմա-բանասիրական հանդես» 1969, № 1, էջ 124):

տալիս իսպառ բացառել հայերենը, որպես «Մեհենական պատմություն» լեզու, որքան էլ գիտնականները թերահավատ լինեն նախամեարդյան հայերենի գոյությունը նկատմամբ»:

II դարի ականավոր ժամանակագիր Հիպպոլիտոսն իր «Ժամանակագրության» մեջ թվարկել է այն ժողովուրդների անունները, որոնք ունեին դպրություն և ահա նրանց մեջ հիշված են նաև հայերը: Բերենք Հիպպոլիտոսի այդ տեղեկությունը.

«Սրանցից (այսինքն՝ իր թվարկած ժողովուրդներից—Ա. Ա.) նրանք, որոնք ունեին դպրություն, հետևյալներն են՝ եբրայացիները, լատինացիները, որով հռոմեացիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը և հայերը»¹:

Հիպպոլիտոսի այս «Ժամանակագրությունը» գրված է Ալեքսանդր Սեբրոսի իշխանության 13-րդ տարում, այսինքն՝ 234—235 թվականներին: Հեղինակի անձնավորության և նրա հազորագծ տեղեկությունների վավերականության հարցում կասկածներ չեն եղել:

Ի դեպ, Հիպպոլիտոսի «Ժամանակագրությունից» օգտվել և այդ հատվածն իր ժամանակագրության մեջ բերել է Անանիա Շիրակացին: «Եւ այս ազգք են,— գրում է նա,— որ գիտեն ի սոցանէ դպրութիւն. Իբերացիք, Ղատինացիք՝ որով Հրոմքն վարին, Սպանցիք, Յոյնք, Մարք, Հայք»²: Ժողովուրդների մյուս խմբավորությունների մեջ Շիրակացու մոտ հիշատակված են նաև պարսիկները, հնդկները, հույները և այլ ժողովուրդներ:

Հիպպոլիտոսի տեղեկությունը նախամաշտոցյան հայոց գիրը ժխտողները հավաստի չեն համարում հետևյալ պատճառաբանություններով: Ասում են, Հիպպոլիտի մոտ իսպանացիներն էլ են հիշված, իսկ նրանք մ. թ. IV դարում դեռ մատենագրություն չունեին, դեռ էթնիկապես չէին կազմավորվել: Այդ պատճառաբանությունը հիմնավոր չէ: Իսպանական ժողովրդի էթնիկական կազմավորումը տեղի է ունեցել նշված ժամանակից շատ առաջ՝ մ. թ. ա. IV—III դարերում: Հայտնի է նաև, որ Իսպանիան իր քաղաքական հզորության բարձր աստիճանին հասավ մ. թ. ա. III դարում և ստեղծեց բավականին զարգացած մշակույթ:

Ինչ վերաբերում է իսպանական գրի հնությանը, չպետք է անհիմն ենթադրություններ անել. այդ հարցին անդրադարձել է գրի պատմության լավագիտակ շխ գիտնական Չ. Լուկոսկան իր «Գրի զարգացումը» աշխատության մեջ: «Հավանականորեն, նոր փունիկյան գրից էլ սկիզբ են առել հին իսպանական երկու այբուբեններ,— գրում է նա,— որոնք գործ էին ածում կարթագենացիները հռոմեացիների տիրապետության ժամանակաշրջանում: Իբերական գրերով գրված են մոտավորապես 100 համառոտ արձանագրություններ, որ գտնվել են Իվասա կղզում»¹:

Մեկ այլ պատճառաբանությամբ Հիպպոլիտոսի այս վերկայությունը նախամաշտոցյան հայ գրի և մատենագրության առկայությունը հաստատելու համար ոչ մի արժեք չունի, որովհետև այն վերաբերում է դպրություն ունենալուն, իսկ դա կարող էր լինել օտարալեզու դպրություն: Օրինակ, ասենք, հայերի համար հունալեզու դպրությունը:

Այս պատճառաբանությունը անշափ հեռու է համոզեցուցիչ լինելուց. եթե հայերը չունենային սեփական լեզվով գիր և մատենագրություն, Հիպպոլիտոսը չէր կարող հունարեն լեզվով և հունարեն գրերով մատենագրությունը համարել հայկական և դրա հիման վրա հայերին դասել սեփական մատենագրություն ունեցող ժողովուրդների թվին: Հելլենիզմի ժամանակաշրջանում չի եղել Արևելքում ապրող մի ժողովուրդ, որն այս կամ այն առիթով գործածած չլինի հունարեն լեզուն և գիրը: Ինչո՞ւ Հիպպոլիտոսն Արևելքի բոլոր ժողովուրդներին չի համարել մատենագրություն ունեցողներ:

Նախամաշտոցյան հայկական գրի գոյության համար կարևոր փաստ է մ. թ. ա. II—III դ. դ. հույն պատմագիր Փիլիստրատոսի «Ապոլոն Տիանացու» կենսագրության մեջ հաղորդվող հետևյալ տեղեկությունը. «Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն տառերով հետևյալը. Արշակ թագավոր՝ Նյուսյա աստծուն, այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից: Այս Արշակն այն ժամանակ հայոց թագավոր էր և յուր բռնած հովազը, այդ կենդանու մե-

¹ Hippolitus Werke, IV, Bd. Die Chronik, Leipzig, էջ 58:

² Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 360:

¹ Չ. Լուկոսկա, Գրի զարգացումը, Ե., 1955, էջ 96:

Յուսկայան պատճառով նվիրել է Գիտնիստոսին... Այս կենդանին բոլորովին ընտանի եղավ և թույլ էր տալիս իրեն ձեռքով շոշափել և փաղաքշել, սակայն երբ դարունն եկավ, երբ հովազները նույնպես հաղթահարվում են սիրուց, արուի պահանջն զգալով՝ փախավ դեպի լեռները և յուր հետ տարավ նաև յուր զարդը, ապա գրավվելով համեմունքի բուրմունքից՝ բռնվեցավ ստորին Տավրոսի վրա»¹:

«Հայոց գիր և գրչութուն» աշխատության մեջ մենք ևս բերել ենք Փիլիստրատոսի այս տեղեկությունը և այն կարծիքը հայտնել, որ եթե Հիպպոլիտոսի և Բարդաժանի վկայությունները վերաբերում են մատենագրությանը, ապա այստեղ խոսքը կոնկրետ նշանագրերի մասին է. որոշակի նշվում է զբրանց հայկական տառանիշեր լինելը. «Գրված էր հայերեն տառանիշերով. թագավոր Արշակից՝ Նյուսիա ասածուն»²:

Փիլիստրատոսի այս տեղեկությունը ևս մերժվում է հետևյալ առարկումներով: Նախ, ասում են, հիշյալ Արշակը հայոց թագավոր չէ, հետևաբար՝ գիրը ևս, երկրորդ՝ հեղինակը, իբր խղճուկ գիտելիքներ է ունեցել Հայաստանի մասին, նույնիսկ «շփոթել» և Հայաստանում է տեղադրել Տավրոսյան լեռները, վերջապես սեփական աչքով չի տեսել, այլ հովազի մասին գրել է ուրիշի պատմածով:

Իրականում, հայ գահակալների ցանկում հայտնի է Մեծ Հայքի թագավոր Արշակ I-ը (34—35), ինչ վերաբերում է Տավրոսյան լեռներին, ապա նրա հայկական լինելը և Հայաստանում գտնվելը վեճ չի կարող հարուցել:

Փիլիստրատոսի հաղորդածը, իրոք, գրույց է, որի հավաստի լինելու մասին այժմ կոնկրետ ոչինչ ասել չենք կարող: Մակայն տվյալ զրույցը մեզ հետաքրքրում է ոչ թե նրա հավաստի լինել-չլինելու տեսանկյունից, այլ որ այդտեղ նշված է հայերեն տառանիշերի գոյության փաստը:

Հայտնվել են կարծիքներ, որ Փիլիստրատոսը շփոթել է մանյակի վրա գրված է եղել պահլավերեն, բայց նա կարծել է, թե հայերեն է: Թեև մենք փաստ չունենք, որ Փիլիստրատոսը շփոթել է, բայց եթե ընդունելի համարենք նման շփոթությունը և հնարավոր համարվի, որ Հայաստանից հեռու ապրող հույն հեղինակը պահլավերեն գրութունը հայերեն է կարծել, ապա այդ ևս ինքնին ապացույց է հայկական գրի հանրածանոթ լինելուն:

տոսը շփոթել է, բայց եթե ընդունելի համարենք նման շփոթությունը և հնարավոր համարվի, որ Հայաստանից հեռու ապրող հույն հեղինակը պահլավերեն գրութունը հայերեն է կարծել, ապա այդ ևս ինքնին ապացույց է հայկական գրի հանրածանոթ լինելուն:

Նրան երկրորդ դար համարելու փոխարեն, տեղափոխված է չորրորդ դար: Իրականում, այդպիսի շփոթություն չբարդիչ գալիս է Հայաստան, Գարանաղայց գավառի Անի ամրոցը: Շարունակության մեջ ցանկանալով ասել, թե IV դարում օտար լեզուներով Հայաստանում ինչ գրականություն կար, եղբայրացի ենք. «Չորրորդ դարում օտար լեզուներով Հայաստանում քաղաքացիություն ունեին հունարենը և ասորերենը. եթե Բարդաժանի արտագրածը ոչ ասորերեն էր և ոչ հունարեն, ապա մնում է ենթադրել, որ նա գրված պիտի լինի տեղակա՞ն լեզվով՝ հայերեն»: Վերջին ասած մեր խոսքը Բարդաժանի ժամանակին չի վերաբերում, այլ Մաշտոցի գրին հաջորդող IV դարին: «Հայոց գիր և գրչութուն» գրքում ևս նշված է, որ պատմահայրը նկատի ունի Անտոնիոս Պիոսին, որը գահակալել է 133—161 թվականներին, իսկ այդ՝ չորրորդ դարը չէ, այլ երկրորդ: Մեզ մոտ սակայն սխալմամբ հորենացու տեղեկությունը վերագրել ենք իրար հաջորդող Անտոնիոս անուն ունեցող կայսրներից առաջինին, իրականում, պատմահոր տեղեկությունը վերաբերում էր երրորդ Անտոնիոսին:

IV դարի պատմիչ Ագաթանգեղոսն իր «Հայոց պատմության» մեջ հայկական հեթանոսական աստվածների պանթեոնում հիշում է Տիր անունով աստծու, որին համարում է արվեստի, գիտության և ուսման, ճարտարապետության աստված: Ենթադրվում է, որ այդ աստծու մեհյանը գտնվել է Վաղարշապատից Արտաշատ տանող ճանապարհի վրա և կործանվել է Տրդատի և Գրիգոր Լուսավորչի կողմից: Պատմիչն այդ մասին գրում է. «Ապա ինքն իսկ Տրդատ թագավորը, ամբողջ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ դիցու-

¹ Բս. Հաբուսյունյան, Հայոց գիրը, էջ 252:

² Philostrati de vita apallonis Tiani. (Օգտվել ենք Ն. Ակինյանից, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 227):

հու Բագինը և այն, որ Երազամուլն կոչված տեղում էր գտնու-
վում: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության
դպիր, Որմզդի գրչի դիվան կոչված, երազացույց, երազահան
պաշտամունքի Տիր աստծու ճարտարության ուսման մեհյանը
և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել» (էջ
120):

Տիր աստծու անունը ժողովրդի հիշողության մեջ մնացել
է «Գրող» անունով՝ գիր անող աստծու նշանակությամբ: Նրան
վերագրվել է յուրատեսակ հաշվապահի պաշտոն. ըստ ավան-
դության, նա պարտավոր է եղել ծնվածներին գրանցել
ծննդյան մատյանում, իսկ մահացածների անունները ջնջել և
գրել ելից մատյանում: Այն մարդու անունը, որին նա ելք էր
անում ծննդյան մատյանից, ծոցը դրած երկինք էր տանում:
Այստեղից էլ առաջացել են ժողովրդի մեջ լայն տարածում
ստացած անեծքները. «Գրո՞ղը տանի քեզ», «Գրողի ծո՞ցը
մտնես», «Գրողի քածի՞ն լինես» և այլն: Մի ժողովուրդ, որը
ստեղծել է դպրության, գիտության և արվեստի աստված, նա
անպայման ունեցել է գիր և դպրություն: Եթե հեթանոս հա-
յերը գիր և գրականություն չունենային, գրի և դպրության
աստված չէին ստեղծի: Տիրը իր ստանձնած պաշտոնով, փաս-
տորեն, համապատասխանում է եգիպտական Քոթ և հունա-
կան Հերմես աստվածներին:

Այն պատճառաբանությունը, թե Ագաթանգեղոսը Տիր
աստծուն հիշում է որպես Որմիզդ աստծո դպիր, ճիշտ չէ, քա-
նի որ Որմիզդը ոչ թե պարսկական Ահուրամազդան է, այլ՝ Ա-
րամազդը, հայկական պանթեոնի հայ աստվածը: Իսկ եթե
ընդունենք փոխառության փաստը, կղժվարանաք ասել, թե
ով ումից է փոխ առել: Վերջապես, եթե անգամ ընդունելու լի-
նենք, որ հայերն են պարսիկներից փոխ առել, հարցի էու-
թյունը չի փոխվի, քանի որ փաստ է, եթե հայերը գիր գը-
րականություն չունենային, նման աստծու փոխառության
կարիքը չէին ունենա: Այստեղ կարևորը փոխառությունը չէ,
այլ աստծո անվան գործածությունը: Երբ հնագետները պե-
ղումների ժամանակ գետնի տակ գութանի խոփ են հայտնաբե-
րում, չեն քննում այն հարցը, թե գութանի առաջին ստեղծող-
ները ովքեր են եղել, այլ գտնված ցուցանյութի հիման վրա

փաստում են երկրագործության գոյությունը տվյալ վայրում:
Այսպես միայն պետք է ընդունել և բացատրել Տիր աստծո
հիշատակությունն Ագաթանգեղոսի կողմից:

Նախամաշտոցյան գիրը ժխտող գիտնականների մյուս
պատճառաբանությունը թե՛ Ագաթանգեղոսը Տիրին ոչ թե
որպես գրի աստված է հիշում, այլ՝ գիտության և արվեստի,
տեղին չէ, քանի որ Տիրի մեհյանը ներկայացված է իբրև
«ճարտարության», «ուսման» մեհյան, իսկ ինքը, Տիր աստ-
վածը՝ «Քրմական գիտության դպիր»: Կարծում ենք, հարկ
չկա ապացուցելու, որ ուսումը, գիտությունը, դպրությունը
առանց գրի չեն լինում:

Ժողովուրդների կողմից աստվածների ստեղծումը և պաշ-
տամունքը հեռակա կարգով չի լինում. նրանք աստվածներ են
ստեղծում միայն այն բնագավառի համար, որոնց հետ մըը-
տապես առնչվում են: Հայերը ծովի աստված չեն ստեղծել,
որովհետև ծով չեն ունեցել: Հույները և հուսիսայինները, ընդ-
հակառակը, ծովի աստված են ստեղծել և նրանց հատուկ տեղ
հատկացրել աստվածների պանթեոնում: Եթե հայերը գիր և
գրականություն չունենային, գրի և գրականության աստված
չէին ստեղծի:

Նախամեսրոպյան շրջանի հայալեզու գրականության օգ-
տին է խոսում Խորենացու ուշագրավ մի վկայություն, որ
հայոց Արտաշես թագավորի որդիներից մեկը՝ Վրույրը, եղել է
բանաստեղծ: Պատմահայրն իր տեղեկությունները քաղել է
մեհենական պատմությունից: Նա Վրույրի մասին գրում է.
«Իսկ Արտավազդը Սմբատի գնալուց հետո հորից ստանում է
բոլոր գորքերի իշխանությունը, որին փափագում էր: Սրա
վրա նրա եղբայրներն իրենց կանանցից գրգռվելով սկսեցին
նախանձել, ուստի Արտաշեսը Վրույրին, որ իմաստուն և բա-
նաստեղծ մարդ էր, նշանակում է հաղարապետ և նրան է
վստահում արքունական տան բոլոր գործերը, իսկ Մաթանին
նշանակում է Անիում Արմազդի կուռքի քրմապետ»:

Դժբախտաբար, Վրույրի բանաստեղծությունները մեզ չեն
հասել և այժմ դժվար է նրա մասին խոսք ասել:

Մեհենական մատենագրության զարգացման աստիճանը ցուցանող ուշագրավ տվյալներ կան հայկական աստղագիտական և տոմարական մատենագրության մեջ: Քրիստոնեությունը, որ այնքան դժժան դտնվեց հեթանոսական մշակույթի նկատմամբ ո՛չ միայն ձեռք չի տվել տոմարական գիտությունը և աստղագիտությանը, այլև հարմարեցնելով քրիստոնեության պահանջներին, օգտագործել է: Դրանով կարելի է բացատրել, որ տոմարական բովանդակությամբ բավականին հին հարուստ բնագրեր են հասել մեզ, որոնք և փաստական հարուստ նյութեր են պարունակում ոչ միայն ճշգրիտ գիտությունների, այլև հայ հեթանոսական մշակույթի պատմության վերաբերյալ ընդհանրապես:

Հայտնի է, որ հին հայկական տոմարական գիտության ստեղծողները և կիրառողները եղել են քրմերը: Տոմարով զբաղվելը քրմության հիմնական պարտականություններից մեկն էր. նրանք դիտարկումներ են կատարել և հետևել երկնային լուսատուների շարժումներին, ճշտել են ժամանակը և դրա հիման վրա կազմել տոնացույցներ՝ աստվածների տոները սահմանված ժամանակին նշելու համար:

Աստղագետ պրոֆ. Լ. Սիմյոնովը ուսումնասիրելով հայկական տոմարը, հետևյալ կարծիքն է հայտնել նրա հնություն մասին. «Բաբելոնում աստղաբախշությունը և նրա անհարազատ որդի աստղագիտությունը, զարգացած էին մեծ չափով դեռ սկսած մ. թ. ա. XXX դարերից: Այդ գիտությունները ժամանակի ընթացքում թափանցում են հին Հայոց երկիրը, և հայերը (խալդերը) դեռ շատ հնուց լավ ծանոթ էին թե աստղաբախշությանը և թե աստղագիտությանը: Երկրակամարի շատ աստղերին կամ համաստեղություններին տրված են տեղական հայկական անուններ: Երկնակամարի ամենագեղեցիկ համաստեղությունը, որը ուրիշ ազգերի կողմից անվանվում է Օրիոնի համաստեղություն, նվիրված էր հայ առասպելական նախահայր և հերոս Հայկին և այդ համաստեղությունը կոչվում էր «Հայկն»¹:

Հայ աստղագիտության պատմության քաջատեղյակ գիտնական Բ. Թումանյանն իր «Բրոնզի դարի գոտի-օրացույց» գրքում խոսելով հայ աստղագիտության մասին, նշում է նրա հնությունը. «Ֆրանսիական հայտնի աստղագետ ու բազմաթիվ հանրամատչելի գրքերի հեղինակ Կ. Ֆլամարիոնի, անգլիական գիտնական Ա. Բերրիի, ռուս տոմարագետ Վ. Ռոսովսկայայի և այլոց աշխատություններում բազմաթիվ հիշատակումներ կան Հայկական լեռնաշխարհի ու նրա առնթից երկրների բնակիչների աստղաբախշական գիտելիքների մասին: Ըստ վերոհիշյալ հեղինակների, այդ տերիտորիաներում ապրող ժողովուրդները գիտեին, որ լուսինը երկրին ամենամոտ գտնվող լուսատուն է, և որ նա իր սեփական լույսը չունի: Նրանք ճիշտ էին բացատրում լուսնի և արեգակի խավարումների պատճառը: Նրանց, դեռևս հույներից շատ առաջ, հայտնի էր խավարածրի թեքությունը, գիտեին, որ լուսնային տարին հավասար է 354 օրվա. սկզբում գտնում էին, որ արեգակնային տարին 360 օր ունի, ապա համոզվում են, որ այն բաղկացած է 365¹/₄ օրից: Այդ ժողովուրդներին բազ հայտնի էին ո՛չ միայն խավարումների կրկնման 18 տարի 10—11 օր տևող տարբերությունը և կամ լուսնի փուլերի կրկնման 19-ամյա պարբերությունը, այլև նույնիսկ օգտվում էին 600-ամյա պարբերությունից, որը բավականին մեծ ճշտությամբ պարունակում էր 7421 լուսնային ամիս¹:

Տոմարագետ Զ. Բադալյանն իր «Հայոց տոմարի հնության շուրջը» հոդվածում մատնացույց անելով մի շարք փաստեր հօգուտ հայկական տոմարագիտության հնության և ինքնատիպության, եզրակացնում է, որ հայերը գիր են ունեցել պատմական վաղ ժամանակներում: Հերքելով այն կարծիքը, որ հայերն իբրև թե ընդօրինակել են եգիպտական տոմարը, նա գտնում է, որ հայկական տոմարն ամբողջությամբ վերցրած ավելի կատարյալ է եղել, քան եգիպտականը: Իբրև հայկական տոմարի զարգացած լինելու փաստ, նա մատնացույց է անում հայերի յոթօրյա շաբաթի գործածությունը՝ եգիպտական տասնօրյա շաբաթի դիմաց, հայոց տոմարում

¹ Բ. Թումանյան, Զ. Մեացականյան, Բրոնզի դարի գոտի-օրացույց, Երևան, 1965, էջ 13—14:

¹ Լ. Սիմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին (Մատենադարանի Գիտական նյութերի ժողովածու, № 1, 1941, էջ 22):

տիպի արեգակնային օրացույցը 25 դար մեր թվարկությունից առաջ¹:

Ալիշանի և Սիմյոնովի կարծիքները՝ հայկական թվականի սկիզբը 2494 թվականը համարելու խնդրում, մեր կարծիքով, ընդունելի համարել չի կարելի, դեռ լուրջ ապացույցներ են հարկավոր, ապոկաստազը 428 թվականից սկսելու խնդրում, երբ շարժական տոմարով նավասարդի մեկը համընկնում էր օգոստոսի 11-ի հետ:

Խորենացին հայկական հնագույն տոմարի վերականգնումը կապում է հայոց Արտաշես թագավորի (189—150 մ. թ. ա.) անվան հետ: Մինչև Արտաշես, — ասում է ես, — շատ գիտություններ և արհեստներ, ինչպես նաև՝ տոմարական գիտությունը մոռացության էր տրված և կամ գործ էին անում ուրիշ ազգերից վերցրած տոմարը: Արտաշես թագավորը ձեռնամուխ եղավ և հիմք դրեց որոշ արհեստների և գիտությունների, այդ թվում և՛ տոմարական գիտության. «...մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, — գրում է նա, — որպէս հինից և ասպատակից պարապելաք, և այսպիսի գիտութեանց կամ անփույթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ, և զամսոց և զտարեաց զբոլորմանց... և այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի» (էջ 188):

Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ հեթանոսական հայկական տարին ունեցել է ոչ թե 12 ամիս, այլև՝ 13, որից 12-ը երեսնական օրով, իսկ մեկը՝ հինգ օրով: Հայկական ամիսներն ունեցել են հետևյալ անունները:

- | | |
|--------------------|------------------|
| 1. Նավասարդի—30 օր | 8. Արեգի—30 օր |
| 2. Հոռի — 30 օր | 9. Ահեկի—30 օր |
| 3. Սահմի—30 օր | 10. Մարերի—30 օր |
| 4. Տրե—30 օր | 11. Մարգաց—30 օր |
| 5. Քաղոց—30 օր | 12. Հրոտից—30 օր |
| 6. Արաց—30 օր | 13. Ավելյալ—5 օր |
| 7. Մեհեկի—30 օր | |

¹ Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին (Մատենադարանի «գիտ. նյութերի ժողովածու», հ. Ա, էջ 23): Այս կարծիքը վերջերս առաջ քաշեց նաև բանասեր Լ. Միրիջանյանը «Հայ բանաստեղծության ակունքները» ուշադրավ աշխատության մեջ:

Այս ամսանունների մեջ ուշագրավն այն է, որ հայկական ամսաթվերից շորորդը կրել է հայոց դպրություն աստծու՝ Տիրի անունը: Անկարելի է ընդունել, որ եթե հայերը զիր ու մատենագրություն չունենային, կարող էին պատահական ձևով դպրության աստծու անունը դնել իրենց ամսվա վրա: Իսկ Տիրը, ինչպես գիտենք, հանդիսացել է «Գիտության դպրի» աստվածը: Մյուս ամիսներից հայոց աստվածների անուններ են կրում նաև յոթերորդը՝ մեհեկան ամիսը, որը Միհրն է, և Արեգը:

Անուններ են ունեցել ոչ միայն տարվա բոլոր 12 ամիսները, այլև՝ ավելաց ամսվա հինգ օրերը: Բերում ենք նրանց անունները իրենց գաղափարանշաններով.

- | | |
|------------|---|
| Լուծ— |  |
| Եղջերու— |  |
| Ծկրավորի— |  |
| Փարազնոտի— |  |
| Արտախոյր— |  |

Նկ. № 28:

Ուշադրության արժանի է նաև այն, որ հայկական տոմարում անուններ են ունեցել ո՛չ միայն ամիսները, այլև ամսվա բոլոր օրերը: Ստորև բերում ենք նրանց անունները.

- | | | |
|------------|-------------|---------------|
| 1. Արեգ | 11. Երեզկան | 21. Գրգուռ |
| 2. Հրանդ | 12. Անի | 22. Կորդովք |
| 3. Արամ | 13. Պարխար | 23. Մմակ |
| 4. Մարգար | 14. Վանատ | 24. Լուսնակ |
| 5. Ահրանք | 15. Արամազդ | 25. Յրօն |
| 6. Մազդեդ | 16. Մանի | 26. Նպատ |
| 7. Ասողիկ | 17. Ասակ | 27. Վահագն |
| 8. Միհր | 18. Մասիս | 28. Սիմ |
| 9. Զոպարեթ | 19. Անահիտ | 29. Վարպ |
| 10. Մուրց | 20. Արագած | 30. Գիշերավար |

Հայկական պանթեոնի աստվածներից, ինչպես տեսնում ենք, օրեր են ունեցել Արամազդը, Վահագնը, Անահիտը, Աստղիկը, Միհրը և Արեգը: Հեթանոսական գլխավոր մեհյաններից ամսօրեր են ունեցել Երիզան և Անին, սրբազան լեռներից՝ Մասիսը, Արագածը, Նպատը և Սիմը, իսկ նախնիներից Աբամբը, որն ըստ Խորենացու Հայկի թոռան թոռնորդին է և որի անունով էլ մեզ կոչել են օտարները:

Հին հայկական տոմարում անուններ են ունեցել նաև ցերեկային և գիշերային ժամերը: Դրանք հայտնի են հին հայկական բազմաթիվ ձեռագիր ընդօրինակություններով: Գիշերային և ցերեկային ժամերն ունեցել են հետևյալ անունները.

Գիշերային ժամերը

- | | | |
|---------------|---------------|----------------|
| 1. Խաւարականն | 5. Կամաւօտն | 9. Լուսաճեմն |
| 2. Աղջամուղջն | 6. Բաւականն | 10. Առաւօտն |
| 3. Մթացեալն | 7. Հաւթափեալն | 11. Լուսափայլն |
| 4. Շաղաւօտն | 8. Գիղակն | 12. Փայլածուկն |

Ցերեկային ժամերը

- | | | |
|-----------------|----------------|----------------|
| 1. Այգն | 5. Շառաւիղեալն | 9. Հուրթափեալն |
| 2. Մայգն | 6. Եկրատեսն | 10. Թաղանթեալն |
| 3. Զօրեցեալն | 7. Շանթակալն | 11. Առաւարն |
| 4. Ըառագայթեալն | 8. Հրակաթն | 12. Արփողն: |

Հնում, ինչպես պարզվում է, չէին ասում, թե ժամը քանիսն է, այլ տալիս էին տվյալ ժամի անունը: Օրվա ժամը ճշտությամբ որոշելու համար օգտագործել են ստվերաչափումները և դրա հիման վրա կազմել աղյուսակներ: Հետագայում քրիստոնեական եկեղեցին օգտագործել է այդ աղյուսակները, որովհետև դրանք խիստ անհրաժեշտ էին՝ ժամերգությունը եկեղեցիներում և վանքերում օրվա ճիշտ ժամանակին սկսելու համար: Պատահական չէ, որ Հայաստանում պատրաստված շատ տաճարների պատերին դրված են արեգակի ժամացույցները:


Հին հայկական տոմարում շաբաթվա օրերի անուններն այլ են եղել, քան այժմ գործ է ածվում. նրանք կրել են արեգակի, լուսնի և հինգ մոլորակների անունները: Բերում ենք շաբաթվա օրերի այն ժամանակվա անունները՝ ներկա անունների

զուգահորությունը, նրանց յուրաքանչյուրի առջև դրված է իրենց գաղափարանշանը:

Շաբաթվա օրերի
հեթանոսական
անունները


Շաբաթվա օրերի
ներկա
անունները

1. Արեգակի օր




Կիրակի

2. Լուսնի օր



Երկուշաբթի

3. Հրատի օր




Երեքշաբթի

4. Փայլածուի օր




Չորեքշաբթի

5. Լուսնթագի օր




Հինգշաբթի

6. Արուսյակի օր



Ուրբաթ

7. Երեկի օր



Շաբաթ

Նկ. № 29:

Հայ հեթանոսական տոմարում զգալի տեղ է հատկացված համաստեղություններին (զորդյակներին): Հայտնվել են անգամ կարծիքներ, որ համաստեղությունների կենդանակերպ պատկերացումները սկզբնավորված պիտի լինեն Եփրատ գետի հովտում և Հայաստանում ապրող մարդիկ: Վ. Տ. Օլկոտի կարծիքով համաստեղության հնագույն ձևերը հորինող ժողովուրդներն ապրել են Եփրատի հովտում և Արարատ լեռան մոտակայքում. «Աստղաբաշխության տվյալները, — գրում է նա, — համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինող մարդիկ, հավանաբար, ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան մոտակա շրջաններում»¹:

Դա ապացուցելու համար մատնացույց են անում այն

¹ В. Олькотт, Легенды звездного мира, Петербург, 1914, էջ 8: (Հմմ. Բ. Թումանյան և Հ. Մնացականյան, Բրոնզի դարի գոտի-օրացույց, Ե. 1965, էջ 14—15):

փաստերը, որ կենդանակերպերի մեջ չկա ո՛չ փիղը, ո՛չ գետածին, ո՛չ կոկորդիլոսը և ո՛չ վագրը, հետևապես այն չէր կարող ստեղծված լինել Հնդկաստանում, Արաբիայում և Եգիպտոսում. Եգիպտացիները, գրում է Օլկոտը, որոնց հին հուշարձանների վրա գտնվել են կենդանաշրջանի տասներկու նշանները, ընդունում ենք, որ աստղերի մասին իրենց տեղեկությունները վերցրել են խալդեերից:

Հին հայկական տոմարական ձևազրկերից երևում է, որ հայերը բավականաչափ աստղագիտական գիտելիքներ են ունեցել նաև արեգակի և լուսնի պարբերաշրջանների վերաբերյալ և նրանց հիման վրա կազմել տոնացույցներ, ծանոթ են եղել 12 համաստեղությունների հետ: Հին հայկական տոմարական ձևազրկերից բերում ենք համաստեղությունների ցանկն իրենց զաղափարազրկերով:

	1. Խոյ
	2. Ցուլ
	3. Եկատր
	4. Խեցգետին
	5. Առիծ
	6. Կոյս
	7. Կշիռ
	8. Կարիճ
	9. Աղեղնաւոր
	10. Այծեղջուր
	11. Զրհոս
	12. Զուկն

Նկ. № 30:

Մեզ հասած տոմարական պատառիկների ուսումնասիրություններից երևում է, որ հին հայկական հեթանոսական տոմարը եղել է անշարժ, իսկ տարվա ամանորը եղել է գարնան գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին: Այդ օրը նվիրված է եղել հայր աստծուն՝ Արամազդին: Ժողովուրդը մեծ շուքով, փողերի և թմբուկների նվագակցությամբ է տոնել հայր աստծու տոնը:

Ի դեպ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1272 ձեռագիրը (1290 թ. գրչությամբ) պահպանել է մի տեղեկություն հայկական հեթանոսական մի քանի տոների ժամանակի մասին: Անհրաժեշտ ենք համարում այդ տեղեկությունը բերել այստեղ. «Ի Նաւասարդի Ա-ն (մեկն) տան էին Արամազդայ և ի Ժե-ն (15-ին)՝ Անհտայ, և ի սահմի յեթն տան էին Վահան և Վահագնի, և յամանային ժամանակս տան էին Ափրոդիտէ...»: Այնուհետև բերվում է մի ավանդություն վարդավառ անվան առաջացման մասին. Արամազդի հայրն էր հանդիսանում Կրոնոսը, ասվում է այդ ավանդության մեջ: Արամազդը կասկածել է, թե հայրը կարող է ունենալ երկրորդ որդի, որը մեծանալով մրցակից կարող է լինել, ուստի նա իր երկվորյակին սպանում և նետում է ծովը: Թափված արյունից ծովը փրփրում է: Սպիտակ ծովից ծնվում է Ափրոդիտեն: Նրա ծովից դուրս գալուց հետո «...ասէին, թէ ընդ որ անցանէր և ընթանայր, յընթացիցն արին իջանէր լուսից նորա, և վարդ ու մուրտ բուսնէր... հեթանոսական սովորութիւնն գտանն նոր վարդավառ անուանէն, և զվարդ նմա ընձայ մատուցանէին»¹:

Որ, իրոք, հին հայկական ամանորը եղել է մարտի 21-ին, վկայում է թանկարժեք տոմարական մի պատառիկ, որը մըմնացել է մատենադարանի № 1999 ձեռագրում: Այնտեղ հին հայկական ամիսները զուգավորության մեջ են դրված հռոմեական ամիսների հետ: Այդ զուգադիր բնագիրը վերնագրված է «Ամիսս Հայոց և Հռոմի հանդէպ միմեանց»:

Նաւասարդի, որ է մարտի, Մեհեկի՝ սեպտեմբեր,
Հոռի՝ ապրիլի, Արեգ՝ հոկտեմբեր,

¹ Մայր ցուցակ Երուսաղեմի Ս. Հակոբյանց հ. IV, էջ 452:

Սահմի՛ մայիս,
Տրեայ՛ յունիս,
Քաղոց՛ յուլիս,

Մարեր՛ դեկտեմբեր,
Մարգաց՛ յունուարի,
Հրոտից՛ փեպրուարի»:

Տոմարագիտութեան մեջ քաղաքացիութիւնն ունի այն կարծիքը, որ հայ տոմարում գոյութիւնն է ունեցել զուգահեռ հայկական տոմարական երկու համակարգ՝ շարժական և անշարժ: Հին հեթանոսական տոմարն արեգակնայինն էր, ուստի նախամաշտոցյան շրջանում շարժական տոմարի մասին խոսելը բացառւում է: Հայերը քրիստոնեութիւնն ընդունելուց հետո, երբ անհրաժեշտ եղավ առաջնորդել արեգակնա-լուսնային տոմարով, հիմք ընդունեցին շարժականը, սակայն շարժականին զուգընթաց, հին ավանդույթով, ժողովուրդը շարունակեց անշարժ տոմարի գործածութիւնը, որը խիստ կարևոր է երկրագործական աշխատանքների ժամանակը որոշելու համար:

Հին հայկական տոմարում սովորութիւնն է եղել արեգակնային ժամը բաժանել ոչ թե 60 մասի՝ րոպեի, այլ 30-ի, իսկ լուսնային ժամը բաժանել են հինգ մասի: Այդ երևում է Շիրակացու՝ լուսնի պարբերակաշրջանում կատարած հաշվումներին: Նա այդ մասին որոշակի գրել է. «Աւր արեգական՝ 1 (30) մասն, իսկ լուսնին՝ 5 (5) մասն: Բայց մասն լուսնի մեծ է, քան արեգականն»:

Հեթանոսական հայկական տոմարը գործածութիւնից դուրս հանվեց քրիստոնեութիւնը Հայաստանում պաշտոնական ճանաչում գտնելուց հետո: Բայց ի՞նչ նկատի ունի Հովհաննես Իմաստասերը, երբ գրում է. «Հաւաստապէս ի ՃԻԲ (122) ամ Քրիստոսի աւարտ առ թուականն Հայկայ»: Նրա այդ ակնարկը, անշուշտ, կարող է վերաբերել հայ հեթանոսական տոմարի և թվականի ինչ-որ մի փոփոխութեան և ոչ նրա դադարեցմանը:

Հին հայկական տոմարից մնացած այն փշրանքները, որոնք մենք բերեցինք վերևում (տարեթվերը, ամիսների և քրանց օրերի անունները, շաբաթվա օրերը, ժամերի անունները, համաստեղությունները և այլն), դժվար չէ նկատել, որ

դրանք բոլորն էլ կապված են մաթեմատիկական, աստղագիտական և տոմարագիտական բավականին բարձր իմացության հետ, որն անկարելի է առանց գրի և գրականության: Եթե մենք նախամաշտոցյան մատենագրության մասին խոսելու համար բացաճակ ուրիշ տվյալներ չունենայինք, տոմարական այս փշրանքները բավական էին համարձակորեն ընդունելու հայ գրի և գրականության գոյութիւնը նախամաշտոցյան Հայաստանում:

**6. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ ՆԱԽԱՄԵՍՐՈՂՅԱՆ ՀԱՅ ԳՐԻ ԵՎ
ԳՐԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախամաշտոցյան հայ գրի և գրականության գոյությունն ապացուցող մյուս կարևոր կովանը՝ հին հայկական հարուստ, քերականորեն օրինաչափված գրական լեզվի գոյությունն է, որը ժառանգեցին և օգտագործեցին V դարի հայ մատենագիրները: Համոզված կարելի է ասել, որ V դարի «ոսկեդարյան», կոչվող լեզուն սկսնակ գրական լեզու չէ: Սկսնակ շրջանի երկ չի կարելի համարել ո՛չ Եղիշեի, ո՛չ Եղնիկի և ո՛չ էլ հինգերորդ դարի մյուս մատենագիրների աշխատություններից որևէ մեկը: Այդպիսին չէ նաև Աստվածաշնչի թարգմանությունը: Եթե հայկական գրականության սկիզբը, իրոք, հինգերորդ դարը լիներ, ապա հնարավոր չէր, որ օգտագործվող գրական լեզուն այնքան հարուստ բառապաշար ունենար, ինչպիսին ունի հինգերորդ դարի մատենագրությունը, շօտագործելին մեծ թվով օտար բառեր, և ինքնուրույն աշխատությունները գրեին այնպիսի բարձր թեմատիկայով:

Մաշտոցյան գիրը ստեղծելուց հետո, ինչպես հայտնի է, Մահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցն իրենց աշակերտների հետ ձեռնամուխ եղան ինքնուրույն և թարգմանական գրականության ստեղծման: Հինգերորդ դարում մաշտոցյան դպրոցի գործածած գրական լեզվի հարստության մասին բազմաթիվ հայագետներ են խոսել, բերենք նրանցից միայն մեկի՝ պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի կարծիքը: «Սուրբ գրքի հայերեն թարգմանության լեզուն, — գրում է նա, — պարզ է, դյուրըմբռնելի, հստակ ու զեղեցիկ: Հատկապես սքանչելի են «Ծրգ երգոցի» «Սաղմոսագրքի», մարգարեական գրքերի և ավետարանների թարգմանությունները, որոնք վկայում են V դարի հայոց լեզ-

վի հարստության ու ճոխության, ինչպես նաև նրա պարզության և հստակության մասին: Այդ թարգմանությունը շատ կողմերով անգերազանցելի է համարվել, և գտնվել են օտարազգի գիտնականներ, որոնք այն անվանել են «թագուհի թարգմանության» (ՊՅՀ, 1970, № 2, էջ 59):

Հինգերորդ դարի ինքնուրույն և թարգմանական մատենագրության լեզվի հարստությունը նկատի ունենալով գրաբարագետ հայագետներից շատերը անկարելի են համարել, որ հայ գրական լեզվի սկզբնավորությունը համարվի հինգերորդ դարը: Ա. Մ. Գաբազաշյանը, որը համարվում է վեներիկյան դպրոցի հմուտ գրաբարագետներից մեկը, քննության առնելով հայոց գրական լեզվի սկզբնավորության հարցը, հանդես է հետևյալ եզրակացություն. «...չէ ճշմարիտ այն, որ ընդհանրապես կը կարծուի, թէ Հայք յառաջ քան զՄեսրոպ՝ չունին նշանագիր, ուստի և էին անմասն գրութենէ: Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄեսրոպ՝ անհնար էր լեզուին առանց դպրութեան հասնել յայն աստիճան զարգացման՝ յորում կը կգտնենք զնա ի հատակոտորս երգոց վիպասանաց, որոց կատարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուն»¹:

Տեղին է այստեղ հիշել այն դիտողությունը, որն արել է Վ. Քրյուսովը հայ գրական լեզվի սկիզբը V դարը համարող գիտնականներին. «Անկարելի է ընդունել, — գրել է նա, — որ հայկական գրականությունը հանկարծ կարող էր կանգնել աշխարհի առջև կատարյալ ստեղծագործությամբ (Աստվածաշնչի թարգմանությունը), ինչպես Աթենաս Պալլասը, սրը դուրս է գալիս Զևսի գլխից՝ կատարյալ զինվածությամբ»²:

Նախամաշտոցյան հայոց գրական լեզվի գոյությունը ժըխտող գիտնականների հիմնական կովաններից մեկն այն է, որ իբրև թե հինգերորդ դարում Հայաստանում իբրևից շատ թե քիչ տարբերվող բարբառներ չեն եղել. գոյություն է ունեցել հայկական միասնական մի ընդհանուր լեզու և ահա գրաբարը բոլոր հատվածների խոսակցական կենդանի այդ լեզուն է: Այս կարծիքը ոչ միայն հիմնավոր չէ, այլև անտեսում է մատեն-

¹ Ա. Գաբազաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Գ, էջ 39:

² В. Брюсов, նշված աշխատությունը, էջ 48:

նգրական շատ տեղեկություններ: Հայաստանում հնագույն ժամանակներում եղած բարբառների մասին հստակ վկայություններ են տալիս մի շարք մատենագիրներ՝ Կորյունը, Խորենացին, Դավիթ Անհաղթը և ուրիշներ, ուստի այդ մասին վեճ լինել չի կարող: Բերենք թեկուզ Ստեփանոս Սյունեցու վկայությունը բարբառների գոյության մասին. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորձայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ-Հայեցին և զՍպերացին և զՍյունին և զԱրցախայինն և այլ մի՛ միայն զՄիջերկրայան և զոստանիկան, վասնզի պիտանիք այսոքիկ են ի տաղաշափության, այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»:

Լեզվաբաններից Ս. Ղազարյանն ուսումնասիրելով բարբառների սկզբնավորության հարցը, եկել է այն եզրակացություն, որ «...հայերենը հինգերորդ դարում ունեցել է իր բարբառները, որոնք գրաբարի կողքին շարունակել են իրենց գոյությունը և զարգացել ու կատարելագործվել են»¹:

Մենք ևս գտնում ենք, որ անցյալում բարբառներ եղել են: Մեր կարծիքով բարբառները պետք է համարել ոչ թե ուշ դարերում հանդես եկած նոր երևույթ, այլ տոհմացեղային լեզվի մնացորդների արգասիք: Այսպիսով, V դարի Հայաստանում առկա են բարբառներ, և դրանց զուգահեռ կատարելություն հասած գրական լեզու:

Եթե գրական այդ լեզվի սկիզբը V դարը լիներ, անհնար է, որ այդքան զերծ մնար բարբառայնությունից, անհնար է, ու տարբեր վայրերում գրված աշխատությունները լեզվական և քերականական միատեսակություն ունենային, մանավանդ, որ հայ մշակույթի այդ ժամանակվա մեզ հայտնի գործիչները տարբեր բարբառների ներկայացուցիչներ են: Օրինակ, Հովհաննեսը՝ Եկեղյաց գավառից, Հովսեփը՝ Պաղնական տնից, Գրիգորը՝ Գերջանից, Երեմիան՝ Աղվանքից, Մուշեն և Աղանը՝ Արժրուտներից, Տիրայրը՝ Խորձենական գավառից, Եզնիկը՝ Կողբ գյուղից, Հովսեփը՝ Վայոց Ձորից, Գյուտը՝ Տայքից, Անանիան՝

Սյունիքից, Սամուելը՝ Տաշիրից, Ինքը՝ Մաշտոցը, Տարոնից, Երեմիան՝ Վաղարշապատից, Ղևոնդը՝ Վանանդից և այլն:

Սա մեզ իրավունք է տալիս ասելու, որ հայոց գրական լեզվի արմատները գնում են դեպի խոր հնագարը, որ V դարի գրական լեզուն նախկինում ձևավորված է ընդհանրական դարձած գրական լեզվի օրգանական շարունակությունը և արտահայտությունն է:

Այս առիթով, իրավացի է բանասեր Իս. Հարությունյանը, երբ գրում է, թե գրաստեղծման «հաջողության մեծ մասը հիմնվում էր այն հանգամանքի վերա, որ մեր թարգմանիչները ձեռնարկեցին մշակել ո՛չ թե մի որևէ հասարակ գավառական բարբառ, այլ արարատյան ընդարձակ երկրի բարբառը, որ վաղուց արդեն ընդունվել էր իրրև պալատական և իշխանական շրջանների մեջ գործադրվող լեզու: Այս պատճառով անկասկած այդ արքունի կամ ոստանիկ լեզուն ժողովրդականություն և հարգանք պետք է ունենար: Բացի այդ նըպաստավոր հանգամանքից, ոստանիկ լեզուն պետք է եղած լիներ և հայոց կոապաշտական ժամանակի (ընդգծումը հեղինակինն է, — Ա. Ա.) գրական լեզուն և այն, շատ բնական է, որովհետև դժվար է ենթադրել, որ արքունիքն ու հոգևորականությունը, որ այնպիսի սերտ կապերով շղթայված են միմյանց հետ, տարբեր լեզու գործադրեին յուրյանց բանավոր և գրավոր հարաբերությանց մեջ»¹:

Առարկություն է եղել, որ եթե նույնիսկ նախամեսրոպյան շրջանում մայրենի լեզվով գիր ու գրականություն ունենայինք, ապա այդ լեզուն քրիստոնեությունն ընդունելուց հետո պետք է մեռած լեզու լիներ, և քրիստոնյա հայերը պետք է գրեին ո՛չ թե մեռած հեթանոսական լեզվով, այլ՝ իրենց ժամանակի կենդանի լեզվով: Այս առարկայությունը, մեղմ ասած, անհամոզիչ է: Կրոնական և գաղափարական հեղաշրջումները երբեք պատճառ չեն եղել գրական լեզվի մահացման: Մարդկային հասարակությունը երբեք այդպիսի փաստ չունի: Նըման երևույթների պատճառով գրական լեզուները չէ որ մահանում են, այլ՝ դրանցով ստեղծվածն է, որ դատապարտվում է մահացման: Այդ բանը անկարելի է մանավանդ հայ

¹ Ս. Ղազարյան, Հայերեն բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 176):

¹ Իս. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 161:

իրականութեան մեջ, եթէ նկատի ունենանք, որ քրիստոնէական շրջանի սկզբներին՝ մ. թ. IV դարում, գրական-ասպարեզում էին մեծ մասամբ հեթանոսական ժամանակի գրական լեզվի քաջածանոթ քրմական դասի զավակները: Թվարկենք քրմերի տղաներից մի քանիսի անունները, որոնք քրիստոնեութեան ժամանակ եպիսկոպոսական աստիճան են ունեցել և թեմեր ղեկավարել՝ Աղբիանոս, Եվտաղիոս, Բասոս, Մովսես, Եվսերիոս, Հովհաննես, Ագապես, Արտիթես, Արսուկես, Անտիոքես, Տիրիկես, Կյուրանկոս (էջ 441—442): Անկարելի է կարծել, թէ եպիսկոպոսական աստիճանին հասած քրմերի այս տղաները հեթանոսական ժամանակաշրջանում գրական այլ լեզու էին գործածում, քրիստոնեական ժամանակում՝ մի այլ: Հիմք չունենք, ընդհանրապես, մտածելու, որ արգելված է եղել հեթանոսական ժամանակից եկած հայոց գրական լեզվի գործածությունը:

Հայոց գրական լեզվի հնութունը փաստվում է նաև V դարի մատենագրութեան բառապաշարի հարստութեամբ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ այդ լեզվով խիստ հարազատ ու անթերի թարգմանվել են հունական և ասորական բարդ բնագրեր, որոնցում շնչին քանակ են փոխառյալ բառերը: Այնինչ՝ նոր հանդես եկող գրական լեզուների փորձք ցույց է տալիս, որ բոլոր նման դեպքերում փոխառությունների առավել մեծ քանակն անխուսափելի է:

Նախաքրիստոնեական գրական լեզվի մերժողներն իսկ հաշվել են, որ Աստվածաշնչում գործածված փոխառյալ բառերը կազմում են ընդհանուր բառապաշարի 40/0-ը միայն, որը մեր կարծիքով մեծ տոկոս չէ: Իսկ եթէ նկատի առնենք, որ նշված փոխառություններից շատերն էլ կարող էին մուտք գործած լինել հայերենում ավելի վաղ ժամանակներից, պատկերն ավելի կփոխվի: Պարզ կդառնա, որ V դարի գրական հայերենը նորաստեղծ լեզու չէ: Եվ ինչո՞ւ միայն Աստվածաշնչի օրինակը: Նորաստեղծ գրական լեզվով անկարելի կլինեին նաև մյուս բարձրարժեք թարգմանությունները՝ իմաստասիրական, կրոնական և այլ գործերի ճոխութեան հասնող ինքնուրույն մատենագրութեան ստեղծումը և այլն:

Հայոց գրական լեզվի հնութեան և հնամենիության ապացույց են նաև հեթանոսական ժամանակների գրական այն

փշրանքները, որոնք հինգերորդ և հետագա դարերի մատենագիրների շնորհիվ հասել են մեզ և բնավ չեն տարբերվում հինգերորդ դարում գործածվող գրական լեզվից: Անհրաժեշտ ենք համարում բերել դրանցից մի քանիսը: Վերհիշենք նախ Վահագնին նվիրված հանրահայտ երգը.

«Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի:
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ,
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աշքունքն էին արեղակունքս:

Թերենք այլ օրինակներ ևս.

I «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս դարձուի սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արադ հասուցանելով ի բանակն իւրս:

II «Թեղ ասեմ այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցիր քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ, հաւանեաց բանից աշագեղոյ զստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Ձի վասն միայ ջինու ոչ է օրէն դիցազանց՝
Զայլոց դիցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
Վամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշանամութիւն յախտեանական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատելս:

III «Ո՞տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ զառուօտն նաւասարգի,
Զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուսք և թմբիկի հարկանէաք,
Որպէս օրէն էր թագաւորացս:

IV «Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, մեր Շիրակայ ամբարքն շին»:

V «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշեսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինականն»:

VI «Արտաազդայ ոչ գտեալ, ասեն, քաջի որդւոյն Արտաշեսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանայն Արտաշատու՝ նա անց, ասէ, զնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին որ անտանեալ կոչի Շարուրայ»:

VII «Տենշայ Սաթինիկ տիկին տենշանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարածի ի բարձիցն Արգաւանայ:

VIII «Վիշապազունք զողացան զմանուկն Արտաազդ, և դն փոխանակ եղին»:

IX «Հատուած զնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասազ զե-տով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասազ զետով, կոել կոփել զզոտնն նրուանդայ արքայի»:

X «Մինչ դու զնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերա-կացս ո՞ւմ թաղաւորեմ»:

XI «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս. անդ կայցես, և զլոյս մի տեսցես»:

Այս պատմութիւնների հիման վրա Գարագաշյանը եզրակաց-նում է. «Եթե հին վիպասանական հատակոտորներ ևս, որ հասած են մեզ, առնունք ի համարի՝ կստիպվինք ընդունել, թե մատենագրական շարժումն սկսած էր ի մեզ հառաջագույն քան զգյուտ գրույն: Մի՞թե կսխալինք, եթե ասեմք, թե դպրու-թյուն մեր գլխովին սկսավ բազմոք հառաջ, քան զգյուտ զը-րուցն: Վիպասանության մնացորդը՝ են ըստ բնութեան ար-դարև համադրիք ընդ լեզվին թարգմանչաց, ըստ նյութույն՝ հավանականապես հեթանոսական»¹:

Ուսումնասիրողներից ոմանք հայկական մատենագրու-թյան մեջ V—VI դարերում օգտագործած գրական լեզվի մը-շակված լինելը փորձում են բացատրել այլ կերպ. քրիստո-նեությունը Հայաստանում ճանաչում գտնելուց հետո, ասում են նրանք, Աստվածաշունչը բանավոր ձևով անընդհատ թարգ-մանել են և այդ ընթացքում հայկական գրական լեզուն մը-շակվել է: Այսպես, ակադ. Հ. Մանանդյանը, խոսելով Աստվա-ծաշնչի լեզվի կատարելության մասին, գրում է. «Ինչ վերա-բերում է գիտնականների ցուցումներին՝ Աստվածաշնչի հա-յերեն թարգմանության լեզվի մասին, որի մեջ իսկապես ճըշ-

տորեն և լիովին վերարտադրված են ասորական կամ հունա-կան բնագրերի բոլոր նրբերանգներն ու առանձնահատկու-թյունները, ապա ինչպես դժվար չէ կոահել, այս թարգմանու-թյան կատարելությունը բացատրվում է ո՛չ թե նրանով, որ հայերեն գրականությունը գոյություն է ունեցել V դարից դեռ շատ առաջ, այլ հավանաբար նրանով, որ քրիստոնեությունն ընդունելուց հետո, հայերի մոտ, գրեթե մեկ ամբողջ դարի ընթացքում գոյություն է ունեցել Աստվածաշնչի մասնակի թարգմանություններ՝ բանավոր հաղորդամբ»¹:

Նման կարծիք հայտնել է նաև բանասեր Ե. Քասունին. «Լուսավորիչը տնորինած էր,— գրում է նա,— որ թարգմանիչ մը կարգացվածներուն զլիսավոր մասերը բերանացի թարգ-մանե ունկնդիրներուն: Այս կերպով զոնե մեկ դար հայերեն լեզուն մշակվեցավ ու կոկվեցավ, ասորերենի ու հունարենի պես զարգացյալ լեզուներու ազդեցության տակ և հասավ այն կատարելության, զոր ոսկեդարյան անդրանիկ թարգմանու-թյունը մեզի կներկայացնեն»²:

Որ նախամաշտոցյան ժամանակներում եղել են թարգմա-նիչներ և այլ լեզուներից հայերեն թարգմանողներ, անհեր-քելի տեղեկություններ կան հայոց մատենագրության մեջ: Գարագաշյանը հենվելով երեքնացու տեղեկության վրա, հիշում է նախամաշտոցյան շրջանում թարգմանություն կատարողներից հինգի անունները՝ Հովհան, Հովսեփ, Եղնիկ, Կորյուն, Ղևոնդ և Արձան, որոնք թարգմանություններ են կա-տարել նախամաշտոցյան ժամանակաշրջանում և շարունակել իրենց թարգմանությունները մաշտոցյան գրի ստեղծումից հետո: Աճառյանը հիմնվելով Գարագաշյանի նախամաշտոց-յան շրջանի թարգմանիչների մասին հայտնած այս կարծիքի վրա, իր կողմից ավելացնում է. «Եթե թարգմանիչ տիտղոսը տրվեր հունարենից կամ ասորերենից գրքեր թարգմանած լի-նելու պատճառով, բնական է, թե գրերի գյուտից առաջ թարգ-մանիչ չպիտի գտնվեր: Բայց ահա վերոհիշյալ վեց անձերից

¹ Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Գ, էջ 69—70 :

¹ Հ. Մանանդյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշա-կութային ինքնուրույնության համար, («Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, էջ 45):

² Ե. Ս. Քասունի, Հայ մշակույթի պատմություն, էջ 266:

դոնէ մի մասը թարգմանիչ էր գրերի գյուտից առաջ: Նույնիսկ Մեսրոպը թարգմանիչ է կոչվել Խորենացուց՝ քարոզության դեռ առաջին շրջանում¹:

Արդ, եթե նախամաշտոցյան շրջանում եղել են թարգմանիչներ, նշանակում է, որ կատարվել են նաև թարգմանություններ, իսկ այդ թարգմանությունները, վեճ չի կարող լինել, եղել են հայերեն: Եվ ընդհանրապես դժվար է հավատալ, որ ամբողջ IV դարում մարդիկ զբաղված են եղել սոսկ բանավոր թարգմանությամբ: Էլ չենք ասում, որ բանավոր խոսքը այդքան մաքուր լեզվի հիմք դառնալ չէր կարող: Ավելի շուտ գրավոր խոսքն է բանավորի զարգացման միջոց, քան՝ հակառակը:

Նախաքրիստոնեական հայոց գրական լեզվի ժխտողների այն պնդումները, որ եթե մենք նախաքրիստոնեական շրջանից գրական լեզու ժառանգած լինեինք, ապա քրիստոնեությունն ընդունելուց հետո այն դատապարտված պիտի լիներ մահացման, և քրիստոնեության ընդունած ժողովուրդը պիտի գրեր ո՛չ թե մեռած հեթանոսական, այլ իրենց ժամանակ գործածվող կենդանի լեզվով: Այդ պնդումն ընդունելի չէ. կրոնական և գաղափարական հեղաշրջումները երբե՛ք պատճառ չեն լինում լեզվի մահացման: Սովետական միության մեջ ոչ մի ժողովուրդ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո չփոխեց իր լեզուն, այլ ժառանգածն ավելի զարգացրեց:

Խոսելով V դարի հայ մատենագիրների ընտրած թեմատիկայի մասին, մենք անկարելի ենք համարում, որ անգրագետ ժողովուրդը, եթե միայն անգրագետ համարելու լինենք հայ ժողովուրդին, գրական լեզու ստեղծելով, առանց մատենագրական ավանդույթ ունենալու, կարող էր մեկեն ձեռնամուխ լինել ոչ միայն Աստվածաշնչի, այլև տասնյակ բնափիլիսոփայական և աստվածաբանական բարդ բնագրերի թարգմանությունը, կատարել նրանց խորիմաստ մեկնությունները, գրել պատմագրական մեծարժեք ինքնուրույն այնպիսի աշխատություններ, ինչպիսիք գրել են: Չենք ժխտում, իհարկե, առանձին մատենագիրների անձնական հանձարն ու իմաս-

տույթունը, բայց չենք գտնում, որ առանց հասարակական պատշաճ զարգացման առտիճանի, կարելի էր գրել «եղծ աղանդոց», Վարդանանց սխաղործությունները պատմագրել և կամ բարդ աստվածաբանական բնագրերի թարգմանությունը ձեռնամուխ լինել:

Հարց է առաջանում, եթե նախաքրիստոնեական շրջանում հայերը իրոք ունեցել են գիր և գրականություն, ապա ինչպե՞ս է, որ դրանից ոչ մի պատառիկ չի հասել մեզ: Հարցին պատասխանելու համար շպետք է մոռանալ գրի ու գրականության սահմանափակ գոյությունը հեթանոսական դարերում և քրիստոնեության կատաղի անհանդուրժողականությունը հեթանոսության ու նրա մշակույթի նկատմամբ, որը Հայաստանում հասած է եղել մոլեգնող շափերի. թագավորական հրամանով ու զորաբանակներով ամենուր հեթանոսական տաճարների հիմնահատակ կործանում, տաճարական ունեցվածքի բռնագրավում և ոչնչացում, մահապատիժ և հալածանք: Այս պարագաներում դարմանալի կլինեին, եթե հեթանոսական մշակույթից, առաջին հերթին գրից ու գրականությունից, որևէ բան հասներ: Իսկ ինչ էլ որ հասել է, սոսկ պատահական, և չի նկատվել ժամանակին:

Ազգաթանգեղոսի տեղեկություններից երևում է, որ քրիստոնեության տարժման առաջին իսկ քայլերը սկսվել են մեհյանների կործանումով: Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը, բանակն առած շրջել են Հայաստանում և կործանել, քարուքանդ արել մեհյանները: Նրանք իրենց ավերածությունները սկսել են Դարանաղյաց գավառի Քորդան գյուղի «սպիտակափառ Բարշամինա» աստծու մեհյանից: Ազգաթանգեղոսը այդ մասին հաղորդում է. «Նախ այն կործանեցին ու նրա արձանը փշրեցին և բոլոր գանձերը, ոսկին ու արծաթը ավարի մատնեցին ու աղքատներին բաժանեցին»: Այնտեղից թագավորը և Գրիգոր Լուսավորիչը շարժվեցին Դարանաղյաց Անի, ուր գտնվում էր հայկական թագավորների պանթեոնը. «Այստեղ կործանեցին Բագինը Զևս (Արամաղդ) աստծու, որը բոլոր աստվածների հայրն էր անվանված»:

Անիից նրանք շարժվեցին Եկեղյաց գավառի Երիզա ավանը, ուր «...Փշրեցին Անահիտ դիցուհու ոսկի արձանը,

¹ Զ. Աճառյան, Հայոց գրերը, 1968, էջ 273:

ամբողջ վայրը քանդեցին, փշացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին»:

«Այնտեղից,— շարունակում է Ագաթանգեղոսը,— Գալլ գետի վրայով այն կողմ անցան ու քանդեցին Արամազդի դստեր՝ Նանեի մեհյանը Թիլ ավանում»:

Այնտեղից շարժվեցին Գերջանի Բագայառիճ գյուղը և այնտեղ էլ «Ի հիմանց բրելով քանդեցին, կուտակված գանձերը ավարի մատնեցին»:

Եվ այսպես Տրդատը և Գրիգոր Լուսավորիչը զորք առած շրջագայում են Հայաստանում և հիմնահատակ կործանում մեհյանները ու նրանց ավերակների վրա քրիստոնեական եկեղեցիներ կառուցում:

Զենոբ Գլակի տեղեկություններից երևում է, որ հեթանոսությունը կամովին չի զիջել իր դիրքը. հեթանոսության և քրիստոնեության մեջ, գրեթե բոլոր վայրերում, տեղի են ունեցել կատաղի կոիվներ: Հայտնի է, օրինակ, որ Տարոնի Ողական ամրոցի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում հեթանոսների ու քրիստոնյանների կողմից իրար են բախվել հսկայական ուժեր: Կառավարական բանակն ունեցել է 7800 զինվոր, իսկ քրմապետ Արծանի բանակը՝ 6946 զինվոր: Քրիստոնյաներին մեծ դժվարությամբ է հաջողվել հաղթել հեթանոսներին: Ճակատամարտում սպանվել է 1038 հոգի, որոնց մեջ՝ նաև քրմապետ Արծանը և իր որդին:

Անհիմն չէ Լեոն, երբ գրում է. «Նոր կրոնի ամենահզոր հակառակորդը դարավոր անցյալն էր, և Գրիգոր Լուսավորիչը, ինչպես և նրա հաջորդները, ամեն խստությամբ զինվեցին այդ անցյալի դեմ: Նրանք քանդեցին ու ոչնչացրին հեթանոսության բոլոր հիշատակները, ոչինչ չիսնայեցին, որպեսզի ժողովրդի աչքի առաջ չմնա անցյալը հիշեցնող մի շուղ անգամ: Երկիրը զրկվեց դարավոր կյանքի և կուլտուրայի բոլոր նշաններից ու վկաններից, որոնք պիտի լուսավորեին անցյալի կարևոր կենսական հարցերը, ազգի քաղաքական մտավոր կացության հանդամանքները: Հայի անցյալը կորչում էր անդառնալի կերպով»¹:

Անտեսելի չէ նաև ժամանակի գործոնը: Ոչ ոք չի կարող ժխտել, որ Մաշտոցը ստեղծեց մեր հարևան աղվան ժողովրդի գիրը, որը գործածության մեջ է դրվել: Բայց ո՞ւր է աղվանական այդ գրերով ստեղծված մատենագրությունը: Տարիներ առաջ եղան ուսումնասիրողներ, որոնք աղվանական գրի մեզ չհասնելը հիմք ընդունելով, փորձեցին անդամ ժխտել Մաշտոցի՝ աղվանների համար գիր ստեղծելու իրողությունը: Բարերախտաբար Աղբբեջանի հնագետները Մինգեշաուրում կատարած պեղումների ժամանակ երկու-երեք մետր խորության տակ կարողացան գտնել աղվանական մի քանի արծանագրություններ, որնք և եկան ապացուցելու հայ պատմիչների հազորդած տեղեկությունների վավերականությունը: Ժամանակը, պետք է ասել, գրավոր մշակույթի պահպանման գործում շատ է դաժան գտնվել: Մերձավոր արևելքում մեզ հայտնի են ժողովուրդներ, քաղաքակրթություններ, որոնք անհայտացել են պատմության ասպարեզից առանց հետք անգամ թողնելու: Եղել են Հին աշխարհում գործող առևտրաշատ քաղաքներ, որոնց տեղադրությունն այժմ դժվարությամբ է որոշվում: Հեռուն չգնանք. Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի տեղագրությունը շատ ժամանակ է, որ պարզվել է:

Քրիստոնեությունը հեթանոսության նկատմամբ անհաշտ գտնվեց ոչ միայն իր հաստատման արյունոտ պայքարում, այլ նրանից հետո ևս: Հայտնի է, որ նա շարունակեց անհաշտ պայքարել նրա դեմ. ոչ միայն հեթանոսությունը, այլև քրիստոնեական դոգմատիկ կանոններից փոքր-ինչ շեղումը դիտվել է որպես աղանդավորություն: Իսկ թե ինչպիսի դաժանություններ են վարվել այդպիսիների հետ, այդ մեզ հայտնի է ազգային եկեղեցական ժողովուրդների ընդունած կանոններից. կտրում էին աղանդավոր համարվածների ձեռքերի և ոտքերի ջլերը և աղվեսադրոշմ խարանում ճակատին: Ստեղծված այդպիսի իրադրության մեջ կարո՞ղ էր մեկը համարձակվել հեթանոսական գիրք կամ գրություն պահել իր մոտ:

Ահա թե ինչու հեթանոսական ժամանակաշրջանից գրավոր ցուցանյութեր պահանջողները շատ խստապահանջ չպետք է լինեն:

Կարող է հարց առաջանալ: Իսկ ինչպե՞ս է, որ Հայաստա-

¹ Ան, Սուրբ Մեսրոպ, էջ 86—87:

նում գրված ուրարտական, հունական, արամեական արձանագրությունները հասել են մեզ:

Պատասխանը դժվարություն չի հարուցում: Ոչնչացվել է հեթանոսական հայկականը և ոչ օտարագիրը: Իսկ Հայաստանի տարածքում գտնված ուրարտական, հունական և արամեական արձանագրությունները, որոնք գրված են պետական պաշտոնական շրջանների կողմից, հայալեզու չեն, կամ էլ՝ չեն գիտակցվել հայկական: Մեկ հարց ևս. ինչպե՞ս բացատրել հին հայ պատմիչների վերապահությունները ոչ միայն գրի, այլև հեթանոսական մշակույթի նկատմամբ ընդհանրապես: Այդ հարցին մենք պատասխանել ենք «Հայ գրի և գրչության պատմության» մեջ. «Հին հայ մատենագիրները նախամեսրոպյան հայ գրականության փաստի վրայով լուսվյա՞մք են անցնում, որովհետև նրանք որպես քրիստոնյա մատենագիրներ, նպատակ ունեն հեթանոսական շրջանը ներկայացնել որպես բարբարոսական շրջան և հին հայկական ողջ մշակույթը կապել միայն քրիստոնեության հետ, Հայաստանում հեթանոսական շրջանում տիրում էր տգիտությունը և խավարը, և քրիստոնեությունն է, որ եկավ լուսավորելու»:

Այսպիսով, գրական լեզվի ֆենաթիվը մեզ բերում է համոզման, որ V դարում հայ մատենագրության մեջ գործածված գրական լեզուն նոր չէր ստեղծվում, այլ անցյալ դարերի ընթացքում ստեղծված, մշակված, բառապաշարով հարստացած լեզուն էր, որը ժառանգվեց V դարի հայ մատենագիրների կողմից և գործածվեց:

7. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԸ

Դանիելյան գրերի մասին դժվար է նոր խոսք ասել: Իրավացի է ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, երբ գրում է. «Դանիելյան նշանագրերի մասին զանազան բանասերներ բազմաթիվ կարծիքներ են հայտնել մեկը մյուսին հակառակ՝ որ այսօր մարդ ինչ կարծիք էլ որ հայտնելու լինի այդ նյութերի վերաբերությամբ՝ դժվար թե բոլորովին նոր լինի այդ կարծիքը. նա հավանաբարն ասված է եղել ուրիշների կողմից»¹: Չնայած անվանի գիտնականի այս վերապահությանը, այնուամենայնիվ, նա գտնում է, որ այդ հարցով զբաղվելն անհրաժեշտ է պատմագիտական նոր լուսի տակ:

Դանիելյան գրերի հարցը սերտորեն կապված է նախամաշտոցյան հայ գրի և գրականության խնդրի հետ: Իրավացի է ակադ. Գ. Սևակը, երբ նկատում է, թե՛ «Դանիելյան գրերը և այդ գրերի հարազատությունը Մեսրոպին, դժբախտաբար, անարդարացի կերպով մոռացության են տրվում մեր բանասերների կողմից, մինչդեռ հենց նրանք կարող են տալ մեսրոպյան գրերի ակունքներին հասնելու բանալին» («Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, էջ 199):

Դանիելյան գրերի մասին մեզ տեղեկություններ են հաղորդում հինգերորդ դարի երեք պատմիչներ՝ Կորյունը, Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին: Աշխատենք նախ նրանց հաղորդած տեղեկությունների հիման վրա պարզել, թե ինչ գրեր են նրանք համարում դանիելյան կոչվող այդ գրերը:

Կորյունը հայտնում է, որ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, երբ եկան Վոսմշապուհ թագավորի մոտ և հայտ-

¹ Ստ. Մալխասյանցի հոդվածը տպագրված է «Տարազ»-ում, 1893, էջ 41:

նեցին նրան հայոց գրեր ստեղծելու իրենց մտադրութունը, վերջինս նրանց հայտնեց, որ հայկական նշանագրեր կան Դանիել անունով մի ասորու մոտ. «Յայնժամ պատմէր նոցա արքան վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչէցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագրերս աղփարետաց հայերէն լեզուի» (էջ 42) (այս և մյուս բնդգծումներ մերն են—Ա. Ա.): Կորյունը դանիելյան գրերը, ինչպես տեսնում ենք, ներկայացրել է որպես հայերեն այբուբենի նշանագրեր:

Մովսես Խորենացին պատմում է, որ Վառձապուհի Միջագետքում գտնված ժամանակ, նրան է ներկայացել Հաբել անունով մի քահանա և խոստացել հայերեն լեզվի տառեր ստեղծել. «Վասն որոյ մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր, յարմարեալ ի Դանիելէ Եպիսկոպոսէ» (էջ 325): Այստեղ ևս դանիելյան գրերն անվանված են հայերեն լեզվի նշանագրեր:

Փարպեցին դանիելյան գրերի մասին տեղեկութուն է հաղորդում երեք անգամ: Նախ նա դանիելյան գրերի մասին խոսում է հայ ուսանողների արտասահման ուսման ուղարկելու կապակցութեամբ և ցավ հայտնում, որ հայ երիտասարդները թեև ջանք ու եռանդ չեն խնայում արտասահման գնալու և օտար լեզուներ սովորելու համար, սակայն դրանից ժողովուրդը ոչինչ չի օգտվում: Ապա պատմիչն ավելացնում է, որ այս հոգածութեամբ «Զայս ի բազում ժամանակս զմտաւածեալ երանելի առն Մաշտոցի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքնեան ձայնիւ, և ոչ մտրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առ հասարակ ամենայն եկեղեցիս բազմութեանն» (էջ 13): Փարպեցին այստեղ խոսում է հայերեն լեզվի նշանագրերի գոյութեան մասին, թեև Դանիելի անունը չի տալիս:

Երկրորդ անգամ Փարպեցին խոսում է դանիելյան գրերը բերելու կապակցութեամբ և հայտնում, որ գրերը բերելու նըպատակով Դանիելի բարեկամ Հաբել քահանայի մոտ է ուղարկվում Վահրիճ անունով մեկը, քանի որ Հաբելին «...ասացեալ էր յառաջագույն ցարքայ, որ և մերձաւոր էր առն բա-

րեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրք հայերէն կային» (էջ 14): Այստեղ ևս Փարպեցու մոտ դանիելյան գրերը հայկական են համարված:

Փարպեցին երրորդ անգամ դանիելյան գրերի մասին խոսում է դարձյալ առանց հեղինակի անունը տալու: Հստ նրա տեղեկութեան, Մաշտոցը, ավագ քահանաները, նախարարները և Վառձապուհ թագավորը, ցանկանալով Սահակ Պարթևին համոզել, որ նա հանձն առնի Աստվածաշնչի թարգմանութեան գործը, զալիս են նրա մոտ, ավագ քահանաները դիմում են նրան հետևյալ խոսքով. «Մենք որ կամքս առաջի բո, հանդերձ երանելիան Մաշտոցին, զոր զարթոյց աստուածային շնորհ ի ցանկութիւնս այս՝ կարգեալ զվաղեցոցն գրել շարագիրս տառիցն, զորս ոչ որ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր»: Կասկած լինել չի կարող, որ այստեղ խոսքը վերաբերում է Դանիելին. դժվար է ենթադրել, որ դանիելյան գրից բացի եղել են հնից մնացած հայկական այլ գրեր ևս, որոնք Փարպեցու ասելով, անփութ չեն գտնվել այն գործածութեան մեջ ղնելու:

Ուսումնասիրողներից ոմանք, հիմնվելով Փարպեցու այն տեղեկութեան վրա, որ նա օգտվել է Կորյունից, գտնում են, որ նրա հաղորդած այն բոլոր տեղեկութունները, որոնք չբնական Կորյունի մոտ, մոզոնված են Փարպեցու կողմից:

Փարպեցին, իրոք, օգտվել է Կորյունից, բայց Կորյունի բրնագրի ո՞ր տարբերակից: Աղբյուրագիտական ուսումնասիրութունները պարզել են, որ Կորյունի բնագիրը մեզ է հասել կրճատված և փոփոխված վիճակով, իսկ Փարպեցու օգտվածը՝ Կորյունի նախագաղափար բնագիրն է հանդիսացել: Անհրաժեշտ ենք համարում այդ մասին բերել մի բանի հեղինակավոր գիտնականների կարծիքը:

Ղ. Ալիշանը քննութեան առնելով Փարպեցու սկզբնագիրը, գրում է. «Զեմք կրնար ըսել, թե՛ մեր ունեցած և հրատարակած օրինակած չափ և համանման էր սկզբնագիրն: Ինչպես երկարին հետ համառոտն այլ կա, երկարեն այլ երկարագույն եղած թվի սկզբնագիրն. գոնն անտարակույս է այդ մեզի ծանոթեն զատ՝ իր ուրիշ պատմական գրվածք արտագրելն»¹:

¹ Ղ. Ալիշան, Հայագատում, էջ 341:

Նույն կարծիքն է հայտնել նաև պրոֆ. Ն. Աղոնցը. «Ճակատագրի տարօրինակ բերումով Կորյունի աշխատությունը ևս ենթարկվել է խմբագրական վերամշակման, և պահպանված տարբերակը չի կարելի համարել նախնական»¹:

Ակադ. Հ. Մանանդյանը, մեջ բերելով Աղոնցի այս կարծիքը, իր կողմից ավելացնում է. «Աղոնցը միանգամայն ճիշտ նկատում է, որ Կորյունի երկի պահպանված բնագիրը չի կարող համարվել նախնական, քանի որ հետագա դարերում այս աշխատությունը ենթարկվել է խմբագրական վերամշակման: Դրանում իսկապես կարելի է համոզվել, եթե ուշադրության առնվեն այն հատվածները, որոնք Ղազար Փարպեցին քաղել է Կորյունից: Ղազարը հավանաբար ծանոթ է եղել Կորյունի երկի հնագույն խմբագրությանը»²:

Անհիմն է նախամաշտոցյան գրի մասին խորենացու հաղորդած տեղեկությունների թերազնահատությունն այն պատճառաբանությամբ, որ իբրև թե նա Մաշտոցի աշակերտը չի եղել և նրա բերնբերան հաղորդած տեղեկություններին դժվար է հավատալ:

Մենք խորենացու իսկ վկայություններից գիտենք, որ նա եղել է Մաշտոցի կրտսեր աշակերտը և Սահակ Պարթևի ու Մաշտոցի կողմից մի քանի ընկերների հետ Աղեքսանդրիա է ուղարկվել սովորելու. «Մեծ Սահակն և Մեսրոպը,— գրել է խորենացին,— մեզ առանց ուղարկեցին Աղեքսանդրիա պանծալի լեզուն սովորելու, իսկական ճեմարանում կատարելագործվելու» (էջ 305): Գիտենք նաև, որ անցյալում քիչ թվով բանասերներ չեն եղել, որոնք փորձել են շարժել պատմահորը՝ հասցնելով մինչև իններորդ դարը: Նորագույն ուսումնասիրողները, բարեբախտաբար, խորենացուն իր ժամանակից այնքան էլ հեռու չի տանում, այլ համարում են միայն Մաշտոցից երեք սերունդ հետո հանդես եկող հեղինակ՝ Մաշտոցի աշակերտի, աշակերտի աշակերտը: Պատմահայրը, ինչպես երևում է, հանգիստ չպիտի ունենա մեր հարգարժան հայագետի ձեռքերից...:

Ճիշտ է, Կորյունի, Փարպեցու և խորենացու հաղորդած

տեղեկությունների մեջ կան հակասություններ, սակայն այդ հիմք չպիտի ծառայի ընդհանրապես արժեքադրվելու նրանց հաղորդած տեղեկությունները:

Այսպիսով, հին հայկական երեք պատմիչներն էլ դանիելյան գրքը համարում են հին հայկական գրք, որոնք գտնվել են Դանիել Ասուրու մոտ:

Բանասիրության մեջ բանավեճի տեղիք է տվել այն հարցը, թե դանիելյան կոչվող գրքն իր՝ Դանիելի՞. ստեղծածներն էին, թե՞ հորինված էին վաղուց և պահվում էին կամ գտնվել էին նրա մոտ:

Հինգերորդ դարի երեք պատմիչների վկայություններից էլ երևում է, որ դանիելյան գրքը նրա ստեղծածները չէին, այլ գտնվել էին և պահվում էին նրա մոտ: Ըստ Կորյունի տեղեկության, դանիելյան գրքը հայկական տառեր էին: Խորենացին դանիելյան գրքը համարում է «վաղընչուց գրեալ շարագիր» տառեր: Իսկ Փարպեցին, ինչպես տեսանք, դանիելյան գրքը նույնպես համարում է հին հայկական գրք, որոնք գտնվել էին Դանիելի մոտ:

Ուսումնասիրողների մեծ մասը հիմնվելով վերը բերված պատմիչների տեղեկությունների վրա, դանիելյան գրքը համարել է հին հայկական հեթանոսական գրք: Այսպես՝ Ղ. Ինճիճյանը գտնում է, որ՝ «Ըստ մերոց նախայիշեալ պատմագրաց (այսինքն՝ Կորյունի, Փարպեցու և խորենացու) հին հայկական նշանագիրքն էին, որք գտան առ Դանիելի»:

Նույն կարծիքն է հայտնել նաև Մ. էմինը. «Դանիելյան գրքը Հայաստանում գործածվող գրք էին, որոնց դուրս էին մղել հունական, զենդական և ասորական գրքերը զուտ քաղաքական նպատակով»:

Իս. Հարությունյանը ևս գտնում է, որ «դանիելյան կոչված այբուբենը հայոց հին գործածական գիրն էր, սակայն տեղի տալով հունաց, ասորվոց և պարսից գրերին, մոտացություն էր տրվել, մինչև որ նորից գտնվեցավ»:

Բանասեր Ն. Տաղավարյանը նույնպես դանիելյան գրքը համարում է հին հայկական գրք, որոնք պահված են եղել Դանիելի մոտ. «Զիք որևէ վկայություն,— գրել է նա,— որ մեզ կասկած ներշնչէ, թե Դանիել հորինած լինի այդ, այլ ցույց կու տան հակառակն՝ թե երբեմնի ի հայս գործածյալ և ապա

¹ Н. Адонц, Армения в эпоху Юстиана, էջ 341:

² Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 389:

բարձի թողլալ էին, որք Դանիելի ձեռքն անցան: Դանիելն ավանդապահ էր և ոչ հեղինակ»:

Բանասեր Ս. Վ. Պարոնյանը գտնում է, թե սխալ է Դանիելի մոտ գտնված գրեթե դանիելյան անուն տալ. «Դանիելյան կոչել զնոսա բայց միայն այն մտոր, որ Դանիելի ձեռք գտնված և հայտնված եղեն»:

Սակայն կան հայագետներ, որոնք գտնում են, որ դանիելյան կոչվող գրերն իր՝ Դանիելի կողմից էին հորինված: Այս կարծիքն է հայտնել Մ. Չամչյանը. «Ասորի եպիսկոպոս տեղւոյն,— գրել է նա,— որ կոչուր Դանիէլ՝ իւր մերձաւոր, յարմարեալ և յօրինեալ է յիւրմէ տառս ինչ Հայոց»:

Նույն կարծիքն է հայտնել նաև պրոֆ. Հ. Մակվարտը: Հայկական գրերը ստեղծելու գաղափարը Մաշտոցից առաջ, գրել է նա, «արդեն իրագործվել էր Դանիել ասորի եպիսկոպոսի ձեռքով, դրա համար էլ սկզբում բավականացան Դանիելի գյուտը առժամանակ փոխ առնելով» («Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, էջ 143):

Մենք ևս, «Հայ գրի և գրչության պատմություն» գրքում դանիելյան գրերը համարել ենք Դանիելի ստեղծածը, սակայն հետագայում, պատմիչների տեղեկությունները ուշադիր քննելով. «Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և դանիելյան գրերը» հոդվածում, վերանայել ենք մեր նախկին կարծիքը և նշել, որ դանիելյան գրերն իր՝ Դանիելի ստեղծածը չէին: Նշված հոդվածում այդ մասին տվել ենք հետևյալ բացատրությունը. «Կորյունը այդ հարցին (այսինքն՝ դանիելյան գրերի ծագման հարցին) անդրադառնում է մի քանի անգամ և որոշակի հայտնում, որ նշված գրերը ո՛չ թե Դանիելի կողմից էին ստեղծել, այլ՝ գտնված էին՝ «յանկարբագիտ» էին» (ՊՅԷ, 1976, №2, էջ 137):

Դանիելյան գրերի էությունը պարզելու տեսանկյունից անհրաժեշտ է ճշտել Կորյունի հաղորդած մի տեղեկություն, որը համարվում է աղճատված: Ցանկանալով բացատրել, թե ինչո՞ւ հնարավոր չեղավ դանիելյան գրերի օգտագործումը հայոց դպրոցներում, նա հայտնում է. «...մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան» (էջ 46):

Կորյունի այս տեղեկությունը բառացի հասկանալու դեպ-

քում ստացվում է այնպես, որ դանիելյան գրերը այլ դպրութունից վերցրած տառանիշեր էին, որոնք թաղվել էին գետնի տակ, իսկ հետո «հարություն էին տրվել», այսինքն՝ դուրս էին բերվել գետնի տակից: Հակասությունը ակներխ է: Արդ՝ եթե ընդունենք, որ այդ գրերը հայ հեթանոսական գրեր էին և քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո վախենալով թաքցրել էին գետնի տակ, էլ ինչո՞ւ պետք է գետնի տակից դուրս հանեին, չէ՞ որ հրապարակի վրա հեթանոսությունը հալածող նույն քրիստոնեությունն էր:

Նշել են Կորյունի խաթարված այս նախադասությանը փոխարեքական իմաստ տալու փորձեր, թարգմանելով այն՝ «...մանավանդ որ նշանագրերն էլ ուրիշ դպրութուններից էին՝ թաղված և հարություն տրված, վերականգնացված», որը մեր կարծիքով, բռնաձիգ է: Մենք գտնում ենք, որ ոչ «թաղեալքն» է իր տեղում և ոչ էլ՝ «յարուցեալքը»:

Բանասեր Ն. Ակինյանը այս նախադասության բառերից՝ «թաղեալքը» սրբագրել է «բաղեալք», իսկ «յարուցեալքը»՝ «յանկուցեալք»՝ տալով այդ մասին հետևյալ բացատրությունը. «Ասկե (այսինքն՝ դանիելյան գրերի պիտանի շիհնելը— Ա. Ա.) կտեսնվի, թե Դանիելի հնարած նշանագրերը, «յայլոց դպրութեանց», այսինքն՝ հոյն և ասորի նշանագրերը փոխառությամբ կցկցված էին. բնագրին «թաղեալք» և «յարուցեալք» հայտնապես աղավաղություն է. ընդօրինակողը քաղելով բաղեալ կարգալով յանկուցեալին ալ յարուցեալի ուղղված է. յանկուցեալի Կորյունի գրչին տակ «հարմարեցված» իմաստն ունի. այլուր կրսե նույն մատենագիրը թե Հոուփինոս «զամենայն ընտրութիւն նշանագրոցն... միանգամայն յօրինեալ և յանկուցեալ»¹:

Մենք Ն. Ակինյանի այս սրբագրությունը ժամանակին ընդունելի ենք համարել և օգտագործել: Ն. Ակինյանը, հետագայում, սակայն, վերանայել է «յարուցեալք» բառի իր առաջարկած նախկին սրբագրությունը և, հիմնավորելով խորհրդանշանական դանիելյան գրին տված զնահատականի վրա՝ «մուրացածույին» բառի վրա, հնարավոր է համարել, որ այն աղա-

¹ Ն. Ակինյան, Սուրբ Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 241:

վաղում լինի «մուրացեալք» բառի և այն էլ ներմուծել իր կազմած Կորյունի համեմատական բնագրի մեջ¹:

Անկախ նրանից, ընդունելի՞ է Ակինյանի առաջարկած այս նոր սրբագրութիւնը, թե՞ ոչ, փաստը մնում է փաստ, որ տրվյալ ենթատեքստում «թաղեալքն» և «յարուցեալքն» իրենց տեղում չեն և ենթակա են սրբագրութեան: Քանի որ Կորյունի հնագույն ձեռագրերը «թաղեալք»-ի համար տալիս է «բաղեալք» ձևը, հետևաբար դրանից հրաժարվելու հիմք չունենք: Պետք է նկատի ունենալ, որ առաջարկվող սրբագրութիւնը կատարվելուց հետո նախադասութեան իմաստը հստականում է. «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սեղորաները-կապերը արտահայտելու ամբողջութեամբ, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես այլ զբարութիւններից էին բազմաթիւ և հարմարեցված»:

Քանի՞ տառից է բաղկացած եղել դանիելյան կոչվող այբուբենը: Մաշտոցին մոտիկ ժամանակակից Գավիթ Անհաղթին վերագրվող հանելուկներում հայոց տառանիշների մասին հետևյալ տեղեկութիւնն է հաղորդվում. «Չափ հասակի իմոյ երկիցս երկուտասան, այժմ են երիցս երկուտասան»: Հանելուկի թվանշանները հայկական այբուբենին են վերաբերում. իմաստն այն է, որ եթե առաջ հայկական այբուբենն ուներ բրտասանչորս տառանիշ ($2 \times 12 = 24$), ապա հետո դարձավ երեսուունվեց ($3 \times 12 = 36$) («Բազմավեպ», 1848, էջ 243):

VII դարի ականավոր գիտնական Անանիա Շիրակացին իր «Ժամանակագրութեան» մեջ հայտնում է, որ «Ի սորա աուրս (այսինքն՝ Թեոդոս կայսեր—Ա. Ա.) էր Սահակ հայրապետ՝ յորոյ աուրս դպրութիւն հայերէն լեզուի քսան և ինն գրով ի Դանիելէ փիլիսոփայէ Ասորոց կարգեցաւ...»²:

XI դարի ժամանակագիր Ստեփանոս Ասողիկը իր «Տիեզերական պատմութեան» մեջ հայտնում է. «Հայոց լեզուիս Իթ՞ (29) գիր ի Դանիելէ փիլիսոփայէ Ասորոց կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւն Մեսրոպէ երանելի Տարօնեցի խնդուածովք յԱստուծոյ առնու»³:

Վարդան Արևելցին հայտնում է. «Սուրբն Մեսրոպ յորինէ հայերէն դպրութիւն՝ քսան և երկու գիր առ Դանիելի ասորոց գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս անհոգացեալ եղև յառաջնոցն՝ յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք»¹:

Մատենագիրների տեղեկութիւնները, դանիելյան գրերի թվի մասին, ինչպես տեսնում ենք հակասական են. Դավիթ Անհաղթը դանիելյան այբուբենի տառանիշերը համարում է 24, Շիրակացին՝ 29, Ասողիկը՝ 29, Վարդանը՝ 22, Ոսկեփորիկը՝ 17, Գանձակեցին՝ 29: Տառաթվերի հակասական լինելու այս փաստը սակայն իրավունք չի տալիս մեզ ժխտելու Մաշտոցի դանիելյան այբուբենից օգտվելու իրողութիւնը, ինչպես կամայականորեն վարվում են ոմանք:

Մեր նախորդ ուսումնասիրութիւնների մեջ մատենագիրների դանիելյան գրաթվի մասին վերևում բերված տեղեկութիւնները հիմք ընդունելով, հավանականը մենք համարել ենք Դավիթ Անհաղթի տեղեկութիւնը, որովհետև հնագրական մեր ուսումնասիրութիւններից պարզվել է, որ հայկական այբուբենի 26 տառանիշերից 22-ի նախատիպերն այլ գրութիւններից են:

Կարելի՞ է, արդո՞ք, դանիելյան փոքրաթիւ տառանիշերով գրել հայերեն, թե՞ ոչ: Այդ հարցին որոշակի դրական պատասխան են տալիս մեր պատմիչները: Կորյունի տեղեկութիւններից գիտենք, որ դանիելյան գրերը Հայաստան բերվելուց հետո՝ երեխաներ են հավաքել և երկու տարի պարապել դրանով: Կորյունն այդ մասին ասում է. դանիելյան գրերը բերելուց հետո «... խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել: Եվ երբ նրանից շատերը սովորեցին, ապա [թագավորը] հրամայեց ամեն տեղ նույն [նշանագրերով] կրթել որով և երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի (գրաբարում՝ «իբրև ամս երկու» — Ա. Ա.) իր ուսումնասիրութիւնն արեց և նույն նշանագրերով տարավ» (էջ 45):

Բանասերներից ոմանք սխալ են համարում «ամս երկու»

¹ Մեծին Վարդանայ Պատմութիւն տիեզերական, էջ 70:

¹ Կորիւն, Վարդ սուրբ Մաշտոցի, Վիեննա 1922 (հրատ. Ն. Ակինյանի):

² Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 389:

³ Ստեփանոսի Տարօնեցուց Ասողական պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 139—140:

և առաջարկում են այն ուղղել «ամիսս երկուս»՝ նկատի ունենալով Կորյունի բնագրում նկատվող ժամանակագրական մի անախրոնիզմ, ըստ որի դանիելյան գրերի բերելը տեղի է ունեցել Վուամշապուհ թագավորի գահակալության 5-րդ տարում, իսկ հետագայում դանիելյան գրերի փորձառությունից երկու տարի անց, երբ Մաշտոցը գրեր ստեղծելու ցանկություն մեկնում է Միջագետք, այդ ևս թվագրված է Վուամշապուհ թագավորի գահակալության 5-րդ տարում: Այդ անախրոնիզմը վերացնելու համար տրամաբանական է համարվել «ամս երկուս»-ը սրբագրել «ամիսս երկուս»:

Վիճելի հարցի մասին համողեցուցիչ կարծիք է հայտնել ակադ. Ստ. Մալխասյանցը: Նա անընդունելի է համարում առաջարկվող «ամս երկուս» սրբագրությունը հետևյալ հիմնավորումով. «Մի կողմ թողնելով, որ երկու ամսվա ընթացքում դժվար է մանր երեխաների հավաքել, ուսուցչական պաշտոն վարել, շատերին սովորեցնել, ամեն տեղ նույն գրերը գործածելու հրաման տալ. երկու ամիս ուղղագրությունը հակառակ է դուրս գալիս հորենացու վկայությանը, իսկ նա ունի «զամս սակաւս» («Տարագ», 1893, էջ 41—42):

Ինչ վերաբերում է Վուամշապուհի գահակալության 5-րդ տարուն, ապա, մեր կարծիքով, կարելի է ընդունելի համարել բանասիրության մեջ առաջարկված հետևյալ սրբագրությունը. Գանիելի գրերի բերելու տարեթիվը պետք է թողնել «Ի Ե. երրորդի (ի հինգերորդի) ամի թագավորութեան նորա...», իսկ Մաշտոցի Միջագետք գնալը պետք է սրբագրել «Ի Ե. երրորդի (ի եւթեներորդի) ամի Շապուհոյ արքային Հայոց»: Առաջինը եղել է հինգերորդ տարում, իսկ երկրորդը՝ յոթերորդ:

Մենք համակարծիք ենք Ստ. Մալխասյանցի հետ և գտնում ենք, որ բնագրի «ամս երկուսը» ճիշտ է և ենթակա չէ սրբագրության: Քննարկվող հարցի կապակցությամբ կարևոր է նշել այն, որ դանիելյան նշանագրերով կարելի էր երեխաներին հայերեն գրել ու կարդալ սովորեցնել երկու տարի շարունակ այդ տառանիշերն հայկական դպրոցում օգտագործելու պայմաններում:

Որ կարելի էր անկատար համարվող դանիելյան այդ տա-

ռերով գրել և կարդալ սովորեցնել, ինչպես տեսանք, այդ հարցի ճիշտ պատասխանը տվել է Հ. Աճառյանը. «Գանիելյան գրերը կարող են որոշ շափով համեմատել ասորերեն, արաբերեն, եբրաեերեն և այլ այսպիսի այբուբենների հետ, որոնք թեև շատ պակասավոր, բայց ահա այսքան դարեր ի վեր գործածվում են և ով գիտի դեռ որքան ժամանակ պիտի գործածվեն: Եթե այս պակասավոր այբուբենները կարողացան այսքան դարեր դիմանալ, նույնը կարող է լինել նաև դանիելյան այբուբենը» (էջ 114):

Գանիելյան գրերը, դժբախտաբար, մեզ չեն հասել, ուստի գրանց մասին անվերապահ կարծիք այժմ հայտնել դժվար է: Մեզ մնում է որոշ ենթադրություններ անել ըստ մատենագրական միջանկյալ տեղեկությունների: Ընդհանրապես, Գանիելի մասին մեր ունեցած տեղեկությունները կցկտուր է: Իրավացի է Մարկվարտը, երբ գրում է. «Շատ տարօրինակ է, որ հայերը ոչ միայն Գանիելի այբուբենի որպիսություն, այլև նրա տիրոջ անձնավորության մասին համարյա թե ոչինչ չունեն ասելու: Միայն լսում ենք, որ նա ասորի է և եպիսկոպոս է եղել: Բայց երբեք չի հայտնվում այն տեղը, որտեղ նա գործել է որպես եպիսկոպոս»:

Գանիելյան գրերի ատաղձի մասին բազմաթիվ և բազմատեսակ կարծիքներ են հայտնվել: Այսպես, Լանգլուան դանիելյան գրերը համարել է ասորական, Ղ. Աղայանը՝ ասորապարսկական, Բ. Սարգիսյանը՝ ասորական-ղպտիական, Ն. Տաղավարյանը՝ փունիկյան, Գ. Փառնակը՝ պահլավական, Հյուբշմանը՝ հունական և այլն:

Մեր կարծիքով, ճիշտ ուղու վրա են այն գիտնականները, որոնք դանիելյան գրերի ատաղձը համարում են արամեական: Այս կարծիքն առաջ է քաշել պրոֆ. Ք. Պատկանյանը հայկական գրերի ծագմանը նվիրված իր աշխատության մեջ:

Հ. Աճառյանը ևս գտնում է, որ Գանիելի մոտից բերված գրերի ատաղձը արամեական է եղել և կարծում է, որ թյուրիմացաբար «արամեական» բառը «արամյան» է հասկացվել. «Իմ կարծիքով,— գրել է նա,— ամբողջ թյուրիմացությունը, որին զոհ գնացին թե Գանիելը և թե Մեսրոպը, արամեական,

հին ասորական և արամյան հայ բառերի շփոթությունից էր առաջանում և նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթե ոչ արամեական հնացած տառեր (ընդգծումը մերն է— Ա. Ա., էջ 158):

Դանիելյան գրերը արամեականին կապելու հարցը պաշտպանել է ակադ. Գ. Սևակը: Նա ընդունում է, որ հայոց գրերի համար ատաղձ են ծառայել դանիելյան կոշիկոզ գրերը, իսկ վերջիններս արամեական-սեմական գրերի աղբյուրից պետք է գոյացած լինեին («Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, էջ 200—201):

Ուշագրավ է դանիելյան գրերի մասին Ա. Գ. Փերիխանյանի հայտնած կարծիքը, որն անհրաժեշտ ենք համարում բերել. «Հյուսիս-միջագետքյան արամեական գրի տարածված լինելը պատմական Հայաստանի տերիտորիայում, ինչպես և Վրաստանում ինձ թվում է, կարելի է ենթադրել, առայժմ առաջադրում եմ իբրև բանվորական վարկած, որ Արզնում պահված «Օտար գիրը»՝ մեր նախնիների բարձի թողած, հյուսիսմիջագետքյան գրի տարբերակն է եղել, ըստ երևույթին շատ մոտիկ գրություն այն տարբերակին, որը հատուկ է Թուր-Արդինի շրջանին, որոնք ներկայացնում են Սարիի և Հասան-Կեֆերի արձանագրությունները: Մեզ հայտնի չէ այն գրի գծագրությունը, որը գտնվել է Արզնում Դանիելի մոտ: Այդ գիրը, անշուշտ բեկոր չի եղել, հազիվ թե Դանիելը քար էր պահում. այդ, ավելի շուտ, եղել է կաշվի կամ մազաղաթի մի պատառիկ՝ այբուբենը վրան, որն այժմ վերականգնելու հնարավորություն չունենք: Սակայն ամենավաղ ժամանակից մեզ հասած հայկական գրի տառանիշներ (V դարի վերջին քառորդի մեսրոպյան երկաթագրի) համեմատությունը մեզ հասած հյուսիսմիջագետքյան տառանիշերի հետ, չնայած տառերի շրջադարձությանը, ոճական մշակումին և այլն, թույլ են տալիս նախանշելու հայկական գրերի ծագումը հյուսիսմիջագետքյան արամեական գրի մի տարբերակից, որը դեռ չի հայտնաբերված»¹:

Ա. Գ. Փերիխանյանի կարծիքը բաժանում է է. Աղայանը.

նա ևս գտնում է, որ դանիելյան գրերը արամեական տառանիշներն են եղել. «...մենք գտնում ենք, որ Դանիելի ուղարկածը կարող էր լինել արամեական տառերի ցանկը,— գրում է նա.— արամեական գիրը գործածվելուց դադարել էր II դարում, ուստի և «թաղվել էր» (էջ 111):

Համաձայն ենք դանիելյան գրերի մասին վերահիշյալ գիտնականների հայտնած կարծիքների հետ: Մենք ևս գտնում ենք, որ Դանիելի անունով V դար հասած գրերը, իրոք, եղել են արամեական: Քանի որ նեքանոսական շրջանում հայկական մեհյաններում գործածվող գիրը, ինչպես ցույց տվեցինք, եղել է արամեականը, այդ հիման վրա կարելի է եզրակացնել, որ դանիելյան գրերը եղել են հին հայկական մեհեմական գրության այն փշրանքներից, որոնք պահպանվել էին մինչև V դարը:

Օգտագործե՞լ է արդյոք Մաշտոցը դանիելյան գրերն իր այբուբենի մեջ, թե՞ ոչ: Այս հարցի շուրջը հայագիտության մեջ կան տարակարծություններ: Հայագետների մեծ մասն ընդունում է, որ օգտագործել է, սակայն գիտնականներից ումանք գտնում են, որ Մաշտոցը ոչ մի տառատեսակից էլ չի օգտվել և իր տառանիշերը ստեղծել է միանգամայն ինքնուրույն: Եթե Մաշտոցը գիր կարող էր ստեղծել հարևան վրացիների և աղվանների համար, ասում են նրանք, ի՞նչ դժվար էր իր ժողովրդի համար գիր ստեղծել առանց ուրիշից օգտվելու: Նրանք գտնում են, որ մենք ստվեր նետած կլինենք Մաշտոցի գործունեության վրա, եթե ասելու լինենք, որ Մաշտոցն օգտվել է դանիելյան գրից և կամ գրային այլ համակարգից: Ներանց վերջին եզրակացությունն այն է, թե Մաշտոցը ոչ մի գրից չի օգտվել և հայերեն բոլոր տառանիշներն էլ ստեղծել է ինքնուրույն՝ «իր սուրբ աջով»:

Գրաստեղծման պատմությունից հայտնի է, որ այբուբեններն անգոյական և մտացածին ձևով չեն ստեղծվում. դրանք մեծ կամ փոքր փոփոխություններով կապվում են իրար հետ, մեկը սկիզբ է առնում մյուսից: Հայտնի է, որ փյունիկյան գրից առաջացել է հունական գիրը, հունականից՝ լատինականը, իսկ լատինականից՝ եվրոպական բոլոր ժողովուրդների գրերը: Գրի մի տեսակից մյուսի առաջացումը օրինաչափ երևույթ է եղել:

¹ А. Г. Периханян, К вопросу о происхождении армянской письменности, «Переднеазиатский сборник», 1966, էջ 111:

Գրի զարգացման այդ օրինաչափությունը, ի դեպ, ճիշտ է ներկայացված Լեոյի «Ս. Մեսրոպ» գրքում, «Ամեն տեղ նա (գիրը),— գրել է նա,— հարմարվում էր այս կամ այն ազգի բնավորության, լեզվին, հնչյուններին և դրան համեմատ կերպարանափոխվում էր, արմատապես բոլորովին ուրիշ գծագրություն էր ընդունում... մեկը մյուսից փոխ է առել, կոկել է ինչպես ինքն է կամեցել, ավելացրել, պակասացրել, մի խոսքով, ազգայնացրել է: Այս այսպես լինելուց հետո ոչ մի հիմք և արդարություն չկա սպասելու, որ հայերը ընդհանուր համաշխարհային օրենքից մի առանձին, շտեմնված բացառություն կազմեին: Մեսրոպը պարզապես վերցրել է իր ժամանակի գոյություն ունեցած այբուբենից մեկը կամ մի քանիսը և նրանց օգնությամբ տառեր է կազմել հայոց լեզվի համար»¹:

Գրի զարգացման այս օրինաչափությունը նշել է նաև Հ. Աճառյանը. «Ամենն բնական ու տրամաբանական բանը, որ կարելի է ենթադրել, և որ աշխարհիս բոլոր այբուբեններուն ծագման տիեզերական պատմութենեն կհետևի, այն է, թե Մեսրոպ օգտված ըլլա իր ժամանակակից և շրջակա ազգերու այբուբեններեն. ասոնք են արևելքեն պարսիկները, հարավեն ասորիները և արևմուտքեն հույները»²:

8. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախամաշտոցյան գրի ու գրականության հարցի պատմության ուսումնասիրությունից պարզվում է, որ բոլոր ճանաչված և ականավոր գիտնականները չէ, որ ժխտում են նախամաշտոցյան շրջանում հայկական գրի և գրականության առկայությունը: Իրականում, նախամաշտոցյան գրի և հայալեզու գրականության գոյությունն ընդունել են այնպիսի անվանի գիտնականներ, ինչպիսիք են Հ. Օրբելին, Ղ. Ալիշանը, Իս. Հարությունյանը, Լեոն, Ա. Գարգաշյանը, Գ. Սևակը և շատ ուրիշներ:

2. ՀՍՍՀ ԳԱ հնագետների ջանքերով Սյունիքի և Գեղամա լեռներում հայտնաբերվել են հազարավոր ժայռապատկերներ՝ պետրոգլիֆ կոչվող գրություններ, որոնց մեջ պատկերված են որսորդական տեսարաններ, վայրի և ընտանի կենդանիներ, արեգակ, լուսին, աստղեր և համաստեղություններ ներկայացնող սիմվոլիկ նշաններ և այլն: Մեծ թիվ են կազմում առանձնապես այժեք պատկերող պետրոգլիֆները: Ժողովուրդը այդ գրությանը «այծագրություն» անունն է տալիս: Անվիճելի պետք է համարել, որ Հայաստանում պետրոգլիֆ գիր է գոյություն ունեցել դեռևս նախնազարյան հասարակության ժամանակաշրջանում:

3. Հայկական լեռնաշխարհի վրա հանդես եկող պետական կազմավորումներից մի քանիսը (խուրրիներ, ուրարտացիներ, լուվիացիներ և հայասացիներ) գործ են ածել սեպագիր և հերոգլիֆ գրություններ: Նկատի ունենալով, որ հայկական ցեղերի և տոհմացեղային միությունների մեծ մասը մտել է ժողովրդի էթնիկական կազմի մեջ, հետևապես նրանց գրավոր մշակույթը հայ ժողովրդի օրինական ժառանգությունն է: Հայաստանի այդ նախաբնիկների գիրը հիմք և մեկնակետ է հանդիսանում հայոց գրի պատմության:

¹ Լեո, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904, էջ 172:

² Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 194—195:

4. Մերձավոր արևելքի բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, սկսած մ. թ. ա. VI դարից, օգտագործել են արամեական հնչական գիրը: Հայաստանի տարածքում՝ Սևանում, Սյունիքում և այլ վայրերում, հայտնաբերվել են արամեական մի շարք արձանագրություններ (հայոց Արտաշես I թագավորի և ուրիշների), որոնցով փաստվում է արամեական գրի գործածությունը Հայաստանում: Հարևան բոլոր երկրներում, այնպես և Հայաստանի մեհյաններում գործածվող գիրը եղել է արամեականը: Ըստ որում, այն գրվում էր արամեական տառանիշերով, բայց կարդացվում էր այն ժողովրդի լեզվով, որը գործ էր ածում: Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանում, ինչպես և նրանից հետո, մինչև քրիստոնեության դարձը, հայերը, արամեական գրից բացի, ամենայն հավանականությամբ, գործ են ածել նաև հունական տառանիշերը:

5. Հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած այն կարծիքը, որ հնարավոր չէր օտար տառանիշերը հարմարեցնել հայոց լեզվին ու նրանով մատենագրություն ստեղծել, հերքվում է առկա փաստերով: Ետմաշտոցյան ժամանակից մեզ են հասել մի քանի բնագրեր, որոնք գրված են հունարեն տառանիշերով՝ հայերեն: Հունատառ-հայերեն բնագրեր է հայտնաբերվել վիմազիր արձանագրություններում և հայկական միջնադարյան գրչագրերում: Եթե մաշտոցյան գիրը ըստ ստեղծելուց հետո անհրաժեշտ է եղել հունարեն տառանիշերն օգտագործել հայերեն գրելու համար, ապա դրա կարիքը, անշուշտ, ավելի պիտի զգացվեր նախամաշտոցյան ժամանակներում: Հիմք կա ենթադրելու, որ օտար նշանագրերը հայոց լեզվին հարմարեցնելու համար ստեղծված են եղել լրացուցիչ տառանշաններ:

6. Պատմական սկզբնաղբյուրներում պահպանվել են արժեքավոր տեղեկություններ հայկական գրի և հայալեզու գրականության գոյության մասին: Տեղեկություններ կան հայ բանաստեղծների, բուրմ պատմագրողի, մեհենական արխիվի մասին և այլն:

7. Ենթագրություններ են եղել, որ մեզ հասած «Նշանագիր իմաստնոց» ցանկերում եղած գաղափարագրերը հին հայկական հեթանոսական գրության փշրանքներից են: Այդ ցանկերում կան այնպիսի գաղափարագրեր, որոնք իրենց նմա-

նակներն ունեն եգիպտական, Մոհենջո-Գարոյի և խեթական հիերոգլիֆներում: Պալեոգրաֆիկ ուսումնասիրություններից պարզվում է, որ այդ գաղափարագրերի մեջ բավականի շատ են խեթական գաղափարագրերի նմանվող նշանագրեր: Գաղափարագրեր են հանդիպում նաև հմայիլների և ախթարական բովանդակությամբ ձեռագրերում: Նմանությունն այդ հարցը կարոտ է լուրջ ուսումնասիրության:

8. Նախաքրիստոնեական հայ գրի և գրականության գոյության օգտին են խոսում նաև հայ հեթանոսական տոմարից մնացած մատենագրական փշրանքները: Պարզվում է, որ հեթանոս հայերը ունեցել են իր ժամանակի համար բավականին զարգացած տոմարական համակարգ և աստղագիտական գիտելիքներ:

9. Հինգերորդ դարում հայ մատենագրության մեջ գործածված լեզուն նոր չի ստեղծվել. այն անցյալ դարերում սկզբնավորված, մշակված և բառապաշարով հարստացած գրական լեզու է, որը ժառանգեց մաշտոցյան դպրոցը:

10. Քրիստոնեությունն անչափ դաժան է գտնվել հեթանոսության, առանձնապես նրա գրավոր մշակույթի նկատմամբ. քանզի, հիմնահատակ կործանել է բոլոր մեհյանները, որոնք կրոնական աղոթարաններ հանդիսանալով հանդերձ նաև եղել են գրավոր մշակույթի օջախներ: Հեթանոսական գրավոր մշակույթից մեզ ոչինչ չի հասել՝ քրիստոնեության հեթանոսության նկատմամբ ցուցաբերած անօրինակ անհանդուրժողական վերաբերմունքի հետևանքով. եկեղեցական կանոններով սահմանված է եղել հեթանոս և աղանդավոր համարվածների ոտքի և ձեռքի ջլերը կտրել, աղվեսադրոշմ դնել ձախատներին և դուրս վտարել համայնքից: Դաժան է գտնվել նաև ժամանակը:

11. Ըստ պատմիչների Կորյունի, Ղազար Փարպեցու և Խորենացու տեղեկությունների, Դանիել Ասորու մոտ գտնված գրերը եղել են հայկական գրեր: Հավանաբար նրանք եղել են հին հայկական մեհյաններում գործածվող արամեական գրերը:

Արեղյան Մ., Մերոպ Մաշտոց և հայ գրի և գրականության սկիզբը («Սովետական գրականություն» 1941, № 1): Նույնը «Մերոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, (ակադեմիայի), Ե., 1962, էջ 242—305:

Abbé P. Martin. Des signes hiéroglyphiques dans les manuscrits arméniens: Congrès intern. des Orientalistes, 1873.

Աբրահամյան Ա. Գ., Նախամերոպյան հայկական գրականության հարցը («Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», հ. Ա., Ե., 1941, էջ 41—52):

Աբրահամյան Ա. Գ., Հայ գրի և գրչության պատմություն, Ե., 1959:

Աբրահամյան Ա. Գ., Նախամաշտոցային հայ մատենագրությունը և դանիելյան գրերը (ՊՐԶ, 1963, № 4, էջ 131—144):

Աբրահամյան Ա. Գ., Նախաքրիստոնեական հայ գրի և գրականության հարցի շուրջը («Գիտություն և տեխնիկա», 1969, № 1 էջ 27—36):

Աբրահամյան Ա. Գ., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973:

Աբրահամյան Ա. Գ., Աղբյուրագիտական վիճելի մի ֆանի հարցերի մասին (ՊՐԶ, 1976, № 2, էջ 171—181):

Աղաճյան Ի., Հայկական թվականի մասին գիտելիքները («Քաղաքացի», 1966, էջ 183—192, 216—223):

Ալիշան Վ., Հայկական շրջան («Հուշիկը հայրենյաց Հայոց», Վենետիկ, 1869):

Ալիշան Վ., Հին հավատք կամ հիթանոսական կրոնը Հայոց, Վենետիկ, 1895:

Աղաճյան էդ. Բ., Գոյություն ունեցե՞լ է արդյոք նախամերոպյան գիր և գրականություն («Գիտություն և տեխնիկա», 1969, № 12, էջ 33—40):

Աղաճյան էդ. Բ., Նախամաշտոցյան հայ գրի և գրականության, մերոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե., 1977:

Աճառյան Հ., Հայոց գրերը, Վիննա, 1928:

Աճառյան Հ., Հայոց գրերը, Հ. Բ., 1963:

Բաղալյան Հ. Ս., Հայոց տոմարի հնության շուրջը (ՊՐԶ, 1963, № 4, էջ 63—74: Նույնի «Հայոց տոմարի պատմություն», Ե., 1976, էջ 5—22):

Բաղալյան Հ. Ս., Հայոց հին տոմարի պատմությունից, («Գիտություն և տեխնիկա», 1967, № 4, էջ 21—29):

Բաղալյան Հ. Ս., Թրացույցի պատմություն, Ե., 1970:

Բաբսեղյան Լ. Ա., Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության, (ՊՐԶ, 1966, № 3, էջ 147—159):

Барсегян Л. А., Об одной урартской неороглифической надписи, (1961, № 3—4, էջ 238—244):

Борисов А. Я., Надпись Артаксия (Арташеса), (Вестник древней истории», 1946, № 2).

Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, М., 1918.

Գառգալյան Ա. Մ., Քննական պատմություն Հայոց, մասն Գ, Քիֆլիս, Ե., 1895:

Дьяконов Н. М., Предыстория армянского народа, Е., 1968.

Дрингер Д., Алфавит, М., 1963.

Дунаевская И. М., Язык хетских неороглифов, М., 1969.

Эмин Н. О., Армянский алфавит, Փրանսերեն և Քաղաքացիական հարցերի «Revue d'Orient» պարբերականում 1865 թ.: Հայերեն և Բարբառական Ե. Ստեփանեն «Հայկական աշխարհ» թերթում: Թուսերեն վերահրատարակվել է 1896 թվականին հեղինակի «Исследования и статьи» ժողովածուում, Մոսկվա, 1896 թ.:

Թումանյան Բ. Ե., Մնացականյան Հ., Բրոնզի դարի գոտի-օրացույց, Ե., 1965:

Թումանյան Բ. Ե., Հայոց մեծ և փոքր թվականների տարեկազմի հարցի շուրջը, Հայկ. ՍՍՀ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1965, № 6:

Ինճիբյան Ղ., Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, Հ. Գ., Վենետիկ, 1835:

Истрин В. А., Развитие письма, М., 1961.

Истрин В. А. Возникновение и развитие письма, М., 1965.

Լեո, Ս. Մերոպ, Քիֆլիս, 1904:

Լուսինյան Զ., Գրի դարգացումը, Ե. 1955:

Խաչիկյան Լ. Ս., Նախամաշտոցյան գրի հարցը և հմայագրերը, (ՊՐԶ, 1963, 1, էջ 145—158):

Խաչիկյան Լ. Ս., Օտարալեզու հայ գրականությունը շուրջը դարում, (ՊՐԶ, 1973, № 3, էջ 27—51):

Կառախանյան Գր. Զ., և Սաֆյան Պ. Գ., Սյունիքի ժայռապատկերները, («Սովետական արվեստ», 1967, № 1, էջ 31—38):

Կառախանյան Գր. Զ. և Սաֆյան Պ. Գ., Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձանները, (ՊՐԶ, 1969, № 1, էջ 275—283):

Կառախանյան Գ. Զ. և Սաֆյան Պ. Գ., Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970:

Հառուրդյան Իս., Հայոց գիրը, Քիֆլիս, 1892:

Վազարյան Ա. Ղ., Հայերեն բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, (ՊՐԶ, 1960, № 3, էջ 172—192):

Մանանդյան Հ., Մերոպ Մաշտոց և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար, («Մերոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, (ակադեմիայի), էջ 25—116):

Марр Н. Я., Кавказский культурный мир и Армения М.—Л., 1915.

Մառտիրոսյան Հ. Ա., «Հայաստանի նախնադարյան մշակութի նոր հուշարձաններ», (ՊՐԶ, 1969, № 3, էջ 191—208):

Մառտիրոսյան Հ. Ա., Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Ե., 1973:

Мартirosян А. А., Первобытные неороглифы Армении и их урарто-армянские двойники, (Հայկ. ՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 9, էջ 64—74):

Մառաիբոսյան Հ. Ա., ժայռագրությունների դասակարգման մի քանի նախնական տվյալներ («Լրաբեր», 1970, № 9 էջ 54—70):

Մառաիբոսյան Հ. Ա., և Բորայեյան Հ. Ռ., Գեղամա լեռների ժայռագրությունները, Ե., 1971:

Мещанинов И. И., К вопросу о стадинальности в письме и языке, («Известия ГАИМК, т. VII, вып. V—VI, Ленинград, 1931).

Մառաիբոսյան Ն. Ա., Սեպագրի կիրառումը մեր նախնայաց մոտ Ս. Մեսրոպյան առաջ, («Մարմատ», 1963 թ. հունվարի 22 և 23):

Մարկվարտ Հ., Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը, («Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու (ակադեմիայի), 1972, էջ 117—180):

Մինասյան Մ., Գրի ծագումը. աշխարհի հնագույն այբուբենը («Նոր օր» Ֆրեզնո 1932 թ., նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարներում):

Միրիջանյան Լ., Հայ բանաստեղծության ակունքները, Ե., 1977:

Մնացականյան Ա.Ս., Հայկեր, թե ուրարտացիներ, («Գրական թերթ», 1969, սեպ. 5):

Պարոնյան Ա. Վ., Հայկական նշանագիրք («Երկնագունդ», 1885 փետրեվար):

Шницер Я., Иллюстрированная всеобщая история письма, СПб, 1903.

Периханян А. Г., Армянская надпись из Зангезура, (ՊԲՀ, 1965, № 4, էջ 107—128):

Периханян А. Г., Армянская надпись на серебряной чаше из Сисиана, (ՊԲՀ, 1971 № 3, էջ 69—82):

Периханян А. Г., К вопросу о происхождении армянской письменности, («Переднеазиатский сборник «Дешифровка письменностей древнего Востока», М., 1966, էջ 103—133):

Периханян А. Г., Армянская надпись из Гарни, (ՊԲՀ, 1964, № 4, էջ 123—138):

Պիվազյան Էմ., Նախամաշտոցյան հայ գրի գրականության շուրջը (ՊԲՀ, 1962, № 4 էջ 153—170):

Պիվազյան Էմ., և Հակոբյան, Գրախոսություն Ա. Գ. Արրահամյանի «Հայոց գիր և գրականություն» գրքի, (ՊԲՀ, 1975, № 4, էջ 205—212):

Սարգսյան Ս. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1967:

Սարգսյան Գ. Խ., Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը, (ՊԲՀ, 1969, № 1, ապր. «Գրական թերթ», 1970, 26 հունիս):

Տարկեսյան Գ. Մ., К предыстории армянской письменности, Е., 1978:
Մամուկյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, Ե., 1931:

Մովսեսյան Գ., Նշանագրերի հրատարակություն, («Թորոս ազրար», 1879, էջ 337—340):

Մուսայան Ի. և Ֆրիտցիկ Մուրատ «Նշանագրերի հրատարակություն», («Հանդես ամսօրյա», 1902, էջ 201—203, 1903, էջ 33—336):

Սևակ Կ., Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները և

աղբյուրները, («Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու (համալսարանի), Ե., 1963, էջ 161—238):

Տաղավարյան Ն., Մազուն հայ տառից, Վիեննա, 1895:

Տաշյան Հ., Արամեհերենի զործածությունը արիմենյան պետության մեջ, («Հանդես ամսօրյա», 1933 էջ 209—231):

Тревер К. В., Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953:

Տիրացյան Գ. Ա., Արտաշես Ա-ի արամեաստա արձանագրություն («Տեղեկագիր» ՀԳԱ-ի 1957, № 10):

Քասունի Ե., Պատմություն հին հայ դաստիարակության, Բեյրութ, 1959:

Олькотт В., Легенды звездного неба, СПб, 1914.

Фламарнион К., История Неба, СПб, 1875:

ՔՐՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն	3
1. Հարցի պատմագրությունը	7
2. Ժախագրությունը Հայաստանում	26
3. Հիերոգլիֆ և սեպագիր գրերի գործածությունը	44
4. Արամեական և հունական գրերի գործածությունը	70
5. Մատենագրական տեղեկություններ նախամաշտոցյան հայ գրի մասին	94
6. Այլ փաստեր նախամեսրոպյան հայ գրի և գրչության մասին	116
7. Դանիելյան գրերը	129
8. Հիմնական եզրակացություններ	143
Թվագրորձված գրականություն	146

Արրահամյան Աշոտ Գարեգինի
ՆԱԽԱՄԱՇՏՈՅՑԱՆ ՀԱՅ ԳԻՐ
ԵՎ ԳՐԶՈՒԹՅՈՒՆ

Абраамян Ашот Гарегинович

ДОМАШТОЦОВСКОЕ АРМЯНСКОЕ
ПИСЬМО И ПИСЬМЕННОСТЬ

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1982

Խմբագիր՝ Ա. Ս. Վարդապետյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Գևորգյան

ИБ 1096

Հանձնված է շարվածքի 07. 01. 82 թ.:

Ստորագրված է տպագրության 06. 09.
82 թ.:

Ֆորմատ՝ $84 \times 108^{1/32}$: Թուղթ տպ. № 2:
Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տը-
պագրություն՝ բարձր: 8,19 պայմ. տպ.,
մամ., հրատ. 6,36 մամ.:

Պատվեր՝ 600: ՎՖ 06891: Տպաքանակ՝
5000:

Գինը՝ 1 ո. 10 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն,
Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан», Ереван-9,
ул. Теряна, 91.

ՀՄՍՀ հրատարակչությունների, պոլի-
գրաֆիայի և գրքի առևտրի գործերի պե-
տական կոմիտեի Հակոբ Մեղապարտի
անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9,
Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегар-
парта Госкомитета по делам изда-
тельств, полиграфии и книжной тор-
говли Арм. ССР, Ереван-9, ул. Тер-
яна, 91.